12004

# ԾԻՍԱ[...]

ՈՐ ԿՈՉԻ

# ՄԱՇՏՈՑ

Յորում ամփոփեալ են սրբազան ա-
րարողութիւնք ազգիս ըստ սահ[...]
նադրութեան սուրբ եկեղե[...]
հայոց :

՚ի Պատրիարգութեան Կոստանդնուպօլսոյ
Տեառն Ստեփաննոսի ամենապատիւ և վե-
հափառ Արքեպիսկոպոսի :

Նորոգ սրբագրութեամբ ըստ հնագոյն և ընտիր օրի-
նակաց ՚ի տիպ արձանացեալ վերստին :

1834 ՏՕՐԹԱԳԻՒՂ[...] ՌՄՁԳ

՚ի Տպարանի Պօղոսի Արապեան Ապուչեխցւոյ [...]յս

264



Որք 'ի քրիստոս մկրտեալ ցայ.
Ուրախ լերուք դե վերկե ցայ.

797 - ԱՀ

Կարգ Մկրտութեան.

Առնուն կնքաւորքն զՄկրտութիւնն.
Տանին շնորհածին երեխայն ՚ի դուռն եկեղեցւոյն, և ասեն.

Օրհնեալ հոգիդ սուրբ աստուած ճշմարիտ.

Ողորմեա ինձ Ած ըստ մեծի ողոր.
չփոխին ըստ ասա.

Փառք հօր. Նաւ ես իա. Օրհնու.

Տէր ոչ բարձրացաւ սիրտ իմ, և ոչ զբօսան աչք իմ. Ո՛չ գնացի ես ընդ մեծամեծս, և ոչ ընդ այնոսիկ որք սքանչելի էին քան զիս. Բայց թէ խոնարհեցոյ ես որպ մանուկ հատուցեալ ՚ի ստենէ մօր իւրոյ. և դարձ նր անդրէն ՚ի նոյն. Նմա հպարտացուցի արդեօք զանձն իմ, այսպէս եղիցի հատուցումն անձին իմոյ. Յուսասցաւ Իսրայէլ ՚ի Տր յայսմհետէ մինչև յաւիտեան.

[illegible]

3 Փառք

ԹԵՔԵԱՆ-ԶԱՆԴԻՆԵԱՆ Հ. Հ. ԳՐԱԴԱՐԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ Ս. Բ.
Ս. ԵՍԱՅԵԱՆ

Փոխ հօք։ Նա խա խա։ Օրհնու։

Առ քեզ տ̅ր համբարձի զանձն իմ, ա̅ծ իմ՝ ի քեզ յուսացայ, մի՛ ամաչեցից, և մի՛ ծիծաղեսցին զինև թշնամիք իմ։ Ամենեքեան որ համբերեն քեզ՝ մի՛ ամաչեսցեն, այլ ամաչեսցեն անօրէնք յունայնութեան իւրեանց։ Զճանապարհս քո տ̅ր ցոյց ինձ, և զշաւիղս քո ուսո ինձ։ Առաջնորդեա ինձ ՚ի ճշմարտութեան քում և ուսո զիս, զի դու ես ա̅ծ փրկիչ իմ. և ես քեզ համբերի զօր հանապազ։ Յիշեա տ̅ր զգթութիւնս քո և զողորմութիւնս որ են յաւիտենից։ Զմեղս մանկութեան իմոյ և զանգիտութեան իմոյ մի՛ յիշեր. այլ յիշեա զիս տ̅ր ըստ ողորմութեան քում՝ վ̅ն քաղցրութեան քո, զի քաղցր և ուղիղ ես տ̅ր։ Վ̅ն այսորիկ օրէնսդէտ առնես զմեղաւորս ՚ի ճանապարհի, առաջնորդես հեզոց ՚ի դատաստանի, ուսուցանես հեզոց ըզճանապարհս քո։ Ամենայն ճանապարհք տ̅ն ողորմութի̅ւ և ճշմարտութի̅ւ են այնոցիկ որ խնդրեն զուխտ և զվկայութի̅ւ նր̅։ Վ̅ն անուան քո տ̅ր քաւեա զմեղս իմ

Կարգ Մկրտութեան։

Հաւատամք 'ի մի ած 'ի Հայրն ամե-
նակալ, յարար։

Իսկ մեք փառաւորեսցուք որ յառաջ
քան զյաւիտեանս. եր.

Ա-եա եա. Աւ եւ հաւատով աղա-
չեսցուք եւ խնդրեսցուք 'ի տեառնէ այ
եւ 'ի փրկ.

Տէր մեր եւ փրկիչ յս քս. որ մեծ.

Խաղաղութիւն ամենեցուն։

Խաղաղութեամբ քով քս փրկիչ մեր.

Հայր մեր որ յեր։

Ա.ւէր-էա ուէր-էա.

Խոստովան եղերուք տն զի բարի է.
Ասասցէ տունն Իսրայէլի զի բարի.
Ասասցէ տունն Ահարոնի զի յաւիտեան.
Ասասցեն երկիւղածք տն զի յաւիտեան.
'Ի նեղութեան կարդացի առ տր. եւ
լուաւ ինձ յանդորր։ Տէր է իմ օգ-
նական, եւ ես ոչ երկեայց. զի՞ արասցէ
ինձ մարդ. Տր է իմ օգնական, եւ ես
տեսից 'ի թշնամիս իմ։ Բարի է յու-
սալ 'ի տէր քան յուսալ 'ի մարդիկ.
բարի է յուսալ 'ի տր քան յուսալ յիշ-
խանս։

խանս․ Ամենայն ազգք շրջեցան զինև, և անուամբ տ̃ն յաղթեցի նց̃․ Շրջելով շրջեցան զինև, պաշարեցին զիս 'ի միասին, և անուամբ տ̃ն վանեցի զն̃ս․ Շուրջ եղեն զինև իբ̃ մեղուք, վառեցան բորբոքեցան որպէս փուշք 'ի հուր, և անուամբ տ̃ն մերժեցի զն̃ս․ 'Ի մերժելն դրդուեցայ՝ և եղէ մերձ 'ի գլորել․ և տէր իմ ընկալաւ զիս․ Օրհնութի̃ իմ և օգնութի̃ իմ տ̃ր, և եղև ինձ 'ի փրկութի̃․ Ձայն ցնծութեան փրկութեան 'ի յարկս արդարոց․ Աջ տ̃ն արար զօրութի̃, աջ տ̃ն բարձր արար զիս, և աջ տ̃ն արար զօրութի̃․ Ոչ մեռայց, այլ կեցից և պատմեցից զգործս տ̃ն․ Խրատելով խրատեաց զիս տ̃ր, և 'ի մահ ոչ մատնեաց․ Բացէք ինձ զդրունս արդարութեան զի մտից ընդ այն, և խոստովան եղէց տեառն․

Սա՝ հաւանեին ցէլէվիէցէին տաւէլով․

Այս դուռն տ̃ն է, և արդարք մտանեն ընդ սա․ Խոստովան եղէց քեզ տ̃ր զի լուար ինձ, և եղեր ինձ 'ի փրկութի̃․ Վէմն զոր անարգեցին շինողքն, նա

եղև

եղև գլուխ անկեան․ Ի տեառնէ ե-
ղև այս, և է սքանչելի առաջի աչաց
մերոց։ Այսօր է զոր արար Տ՟ր, եկայք
ցնծասցուք և ուրախ եղիցուք ՚ի սմա։
Ո՛ Տ՟ր փրկեա՛, ո՛ Տ՟ր առաջնորդեա՛․
օրհնեա՛լ որ գալոցդ ես յանուն Տ՟ն, և
օրհնեցաք զձեզ ՚ի տանէ Տ՟ն․ Տ՟ր Ա՟ծ
մեր երևեցաւ մեզ, արարէք տօնս ու-
րախութե՟ն կանխաւ, մինչև յանկիւնս
սեղանոյ․ Ա՟ծ իմ ես դու խոստովան
եղէց քեզ․ Ա՟ծ իմ ես դու՝ և բարձր
ա՟րից զքեզ։ Խոստովան եղէց քեզ
տէր զի լուար ինձ, և եղեր ինձ ՚ի
փրկութի՟։ Խոստովան եղերուք Տ՟ն, զի
բարի է՝ զի յաւի՟․

Շարական․ դկ․

Ողորմութե՟ քո զդուռըն բաց մեզ ո
Տ՟ր․ և արժանի արա ըզմեզ․ լուսեղէն
յարկաց քոց ընդ հրեշտակս քո․ ՚Ի պատ-
րաստեա՛լ քո յօթևանըս սրբ՟ց քոց․
ընկա՛լ և ըզմեզ փըրկիչ յորդեգրութի՟
՚ի դըրախտին կենաց։ ՚Ի նըշանաւ քո
յատենին դատաւոր ահեղ խնայեա յա-


րա

բարձրեալ քո․ բարեխօսութեամբ և աղօ
թիւք սբ Աստուածածնին։

Մաղթեցէք առ Տր զմ երկիր․ ծա-
ռայեցէք Տն ուրախութբ․
Մտէք եկեղեցեաւս աղաչես․
Ի մէջ տաճարիս և առաջի Տն ծնկեալ․

Նոյն տէր ողորմեան ասելով․

գձ Արեգակն արդարութեան քո ծագեսցէ
յաշխարհս հալածեսցէ զխաւարն ան
գիտութեան․ և լոյս մտաց հոգւ և յօրութեան
համբարձեալ առ հայր յորմէ ծագեցաւ․
որ երկրպագելի յերկնաւորաց և յերկ
րաւորաց ընդ հօր և սբ հոգւոյն․
փառս և մեծութիւն երկրպագանեմք հօր
հոգւոյն և ճշմարտութեան․ Որ փոխա
նակ ծոցածին բանին որ եղ յեր
կինս․ առաքեցաւ աւետիքըն հօր ի
բարձանց հոգին ճշմարտութեան․ մե
խիթարել զորս յաղթամայ տրտմեցելոց
և հրաւիրել զնորհեալ դասս առաքե
լոցն․ ողոր։ Այսօր տրտմակայն և

ցուք ՚ի ք(րիստո)ս. եղաք բաժին տ(եառ)ն և ժա-
ռանգակիցք ք(րիստոս)ի. զի ՚ի վիմէն կենդա-
նութե ծաղկեցաք զի քաղցր է տ(է)ր. և
յիւղ սրբութե ծծաք հաւատով. զի
՚ի քեզ եմք ապաւինեալ. որ մայրդ ես
և աղախին ք(րիստոս)ի. լեր բարեխօս վ(ա)ս(ն)
մեր. զի զանուն տ(եառ)ն կարդասցուք և
զքեզ մեծարեալ պատուեսցուք։

Եւ ասէ զաղօթս։

Օրհնեալ ես բարեխնամօղ ա(ստուա)ծ, որ
զգեցուցեր ծառայի քում համդերձ
փրկութե և պատմուճան ուրախութե.
և եդեր սաղաւարտ փրկութե և պսակ
շնորհաց ՚ի գլուխ սորա, և զէն անյաղթ
ընդդէմ հակառակամարտին։ Վասն
որոյ և մեք գոհութե փառաւորեսցուք
զքեզ ընդ որդւոյ և ընդ ս(ր)բ(ո)յ հոգւոյդ։

Խաղաղութիւն ամենեցուն,

Խաղաղութի և հաստատուն խաղաղութե յա-
ք(րիստո)ս, օծեալ և երկրպագելի և քահա-
նայապ[illegible]նեւնից։ Հ(ո)գ(ւո)վ ընկալու-
[illegible] զօծութս սրբութե

քո.

3678-53
[illegible] ՀՍՍՀ-ССРА. 33 [illegible]

քո · վ՟ որոյ աղաչեմք զքեզ տէր, մի՛ ջնջեսցի սա 'ի դպրութ՟է քումմէ կենաց: Այլ մեք արժանի լիցուք երկնային փառաց քոց, յորժամ պսակես զս՟բս քո և զնուիրեալս անուան քում ա՟յ · և անդադար փառաւորեսցուք զքեզ ընդ Հօր և ս՟բ Հոգւոյդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտե:

Հանէ 'ի բեմն ընթերցմանն՝ և ասէ:

Մտից առաջի սեղանոյ ա՟յ առ ա՟ծ, որ ուրախ առնէ զմանկութ՟ի իմ: Դատ արա ինձ ա՟ծ, և իրա՟ւ արա ինձ 'ի դատաստանի իմում:

Եւ շնչէ խոնարհեալ՝ ասէ երիցս:

Այս անուն ծառայս քո՝ եկեալ յերեխայութենէ 'ի մկրտութ՟ի, 'ի մկրտութենէ յերկրպագութ՟ի: Երկրպագէ սուրբ սեղանոյս · երկրպագէ ս՟բ խորանիս · երկրպագէ ս՟բ աւազանիս · որ մերկացաւ զանօրէնութ՟ի, և զգեցաւ զլոյս ա՟ծպաշտութեան:

Եւ համբուրէ զընթերցածն 'ի ս՟բ [illegible] և յարենէ ... և ասէ ... :

 Տէր

Տէր ողորմեա, տէր ողորմեա, տէր ողորմեա։

Փառք քեզ Թագաւոր յաւիտենական. որ աճեցուցանես և լցուցանես զեկեղեցի քո լուսով հաւատոյ անհամար փրկելոցս ՚ի ձեռն ճշմարիտ ա՟ծածանօթութեան ք՟ի քո ։ Ո՛վ որս վերստին ծննդեամբ արժանի արարեր որդեգրութեան հօրդ երկնաւորի, հաղորդելով մարմնոյ և արեան միածնի քո. Նաև արդ տէր՝ պահեա զսա սրբութեամբ հոգւոյդ ս՟բյ, առնել անարատութեամբ զկամս քո, և անմեղութեամբ ժամանել ՚ի կեանս յաւիտենից. Նաև զմեզ զամենեսեան զմերձաւորքս սորա օրհնեա շնորհօք և մարդասիրութեամբ տ՟ն մերոյ յ՟ի ք՟ի ։ Ընդ որում քեզ հօր, և հոգւոյդ սրբոյ վայելէ փառք՝ իշխա ։

Նաև տայ զնոր ընծայն ՚ի գիրկս կնքահօրն . և քահանայն խաչն ՚ի յետս կալեալ, և սարկաւագն քարոզէ, որ երթեալ աղաչեսցուք զՏէր ։

Նաև քահանայն ասէ զաղօթս ։

Որք մկրտեցան և լուսաւորեցան և եառուր ՚ի ն՟ս զզօրութիւն քո տէր . տուր և

հաստատուն, կալ միշտ 'ի սրբութեան քում,
և պայծառանալ 'ի լոյս ա̃ծգիտութեան քո։
Պահեա՛ զսա հաստատուն 'ի շնորհս քո
զոր ետուր. հեռացո՛ զսա 'ի մոլորութե̃
թշնամւոյն, և 'ի պատրանաց նր̃, և 'ի
գործոց անօրէնութե̃. զի լուսով գի-
տութե̃ քո՝ գնասցէ 'ի պատուիրանս
քո. և ուղիղ վարուք հասցէ 'ի խոս-
տացեալ հանգիստն քո յաւիտենից.
զհրեշտակ խաղաղութե̃ քո առաքեա՛
տր̃, որ եկեալ պահեսցէ զսա։ Եւ մեք
ամենեքեան արժանի լիցուք սպասել
յուսով՝ յայտնութե̃ տն̃ մերոյ յի̃ քի̃.
Ընդ որում քեզ հօր՝ և հոգւոյդ.

Համբուրեն զձեռն քահանային՝ և ասեն.

Որ անեղծ և անքննելին քառակերպ
ոլորտն մեծահօրն. 'ի փրկել զմեզ
եկեալ անմահական թագաւորն օրհնութե̃
անմեղին։

Փառաքի հրեշտակապետն առ սերովբ։
Մկրտի 'ի յորդանան վերևելով։
Փառք հօր և որդւոյ և.

Եւ յիմանալ նր̃ 'ի ջրոյն ահո՛ բացան

Նըմա երկինք. որ հոգւին աղաւնակերպ
գայր ՚ի վերայ կենարարին, օրհնութիւն առաւ։

Նոյն ազդ տաէ ձայնող։

Սուրբ խաչիւս աղաչեսցուք զՏէր զի։
Պահպանիչ և յոյս. Հայր մեր որ յեր.

Նոյն երգեան ՚ի դուռն տաճարին,

Լոյս ՚ի լուսոյ ՚ի Հօրէ առաքեցար։

---

Կարգ Քառասնօրէին։

Իսկ յետ քառասուն աւուր՝ գան ՚ի դուռն եկեղեցւոյն. և մայրն քառասուն ծնունդ կրկնէ, և առնու զտղայն ՚ի գիրկն։ Նոյն քահանայն տայ զողջոյն ձայն։

Տէր մեր, որ եկիր ՚ի փրկութիւն ազգի մարդկան, նոյնեւ ՚ի վերայ աղախնոյս քո այսորիկ. և տուր սմա՝ ապաւինել ՚ի սուրբ կաթուղիկէ և առաքելական եկեղեցի քո. և արժանացո զսա մտանել ՚ի տաճար սուրբ քո, և հաղորդել փրկական մարմնոյ և արեան քո։ ՚Ի բաց լուա զաղտ մարմնոյ և զբիծ-

հոգւոյ սորա 'ի լրումն կատարման քա-
ռասնօրեայ աւուրցս. և սրբեա զսա 'ի
ձեռն պատուական ուխտի քահանայ-
իցս. և արժանացո մտանել 'ի սրբուի̅
փառաց քոց, և վայելել զանսպառ բա-
րիսն որ 'ի քէն։ Եւ քեզ վայելէ։

Խաղաղութիւն ամենեցուն։

Որ նորոգութիւնդ ես ննջեցելոց, և
կեանք՝ մահկանացու ազգի մարդկան.
դու ես զօրութի̅ և օգնութի̅ ապա-
ւինելոցս 'ի քեզ։ Հաստատուն լիցի
շնորհք ողորմուե̅ քո 'ի վ̃ր ծառայիս, որ
եկեալ կայ քառասնօրեայ յերկրպագու-
թի̅ ս̃բ տաճարիդ. զի եղիցի հզօր և
աներկիւղ 'ի թշնամոյն ներգործուե̅՝
պահպանութբ̃ աջոյդ քո ս̃բոյ. զի դու
ես մերձ յամենեսին՝ և բարերար ամե-
նեցուն։ Պահեա զսա և սրբեա ճշ-
մարտութբ̃ քով. և արժանացո ընդու-
նել զմարմին և զարիւն քո ս̃բ, և զառ-
հաւատչեայ հոգւոյդ ս̃բոյ։ Աղաչեմք
զքեզ տ̃ր, զի եկեսցէ 'ի սա հոգի ս̃բ,
հոգի հեզուե̅, հոգի ճշմարտուե̅,
հոգի որդեգրութե̅. լինել անբիծ և


անա

անարատ. պսակիլ խաչիւ քով ընդ աջմէ
քումմէ յաղթայութեան երկնից։ Եւ
քեզ ընդ հօր և ս͞բ հոգւոյդ վայելէ
փառք իշխանութի և պատիւ, այժմ։

Եւ ձայնեն չէչէզէցէն ասելով։

Մտից առաջի սեղանոյ ա͞յ առ ա͞ծ, որ
ուրախ առնէ զման. գեղեցիկն ըմն ...։
Ս͞է եկեղեցեաւս աղաչես։
Ի մէջ տաճարիս և առաջի ա͞ծ ընկալ։

Եւ դառնայ դէպ 'ի խորանն ասելով։

Մարմնացեալդ 'ի կուսէն նախսայաւէ
տեան բանդ. այսօր 'ի տաճարին և կիր
կատարել զօրէնս. մանուն փրկութեան
հեթանոսաց. Որ յանուրուստ աթոռ
նստիս քերոբէականեալդ 'ի հրեշտակաց.
այսօր 'ի սեմէօնի բազկանալըն 'ի դրկս.
որ ընծայեսցես ըզմեզ 'ի կեանսըդ յա
ւիտենից. Որ արձակիչդ ես կապելոց
պարգեւատու ա͞մյն. այսօր հայցմամբ
ծերունւոյն արձակեա և զիս ըզծառայդ
մահամերձս. 'ի կապանաց մահու 'ի կեան
սըդ յաւիտենից.

# Ալէլուիա Օրհնէ․

## Սբ Աւետարան Յսի Քի որ ըստ Ղուկասու։

Եւ իբրեւ լցան աւուրք սրբութեն նց
ըստ օրինացն Մովսէսի, ածին զնա յԵմ
յանդիման առնել տն․ որպ և գրեալ
է յօրէնս տն, թէ ամ արու որ բանայ
զարգանդ՝ սբ տն կոչեսցի․ Եւ տալ
պատարագս՝ ըստ ասացելոյն յօրէնս տն,
զոյգս տատրակաց, կամ երկուս ձագս
աղաւնեաց․ Եւ ահա՝ էր այր մի յԵմ,
որոյ անուն էր Սիմէովն․ և էր այրն այն
արդար և երկիւղած, և ակն ունէր
մխիթարութեն Իէլի, և հոգի՛ սբ՝ էր
՚ի նմա․ Եւ էր նր հրաման առեալ ՚ի
հոգւոյն սբյ՝ մի՛ տեսանել զմահ, մինչև
տեսցէ զօծեալն տն․ և եկն հոգւովն
՚ի տաճարն․ Եւ իբրեւ ածին ծնօղքն
զմանուկն յս, առնել նց ըստ սովորութե
օրինացն ՚ի վր նր․ և նա՝ առ ընկալաւ
զնա ՚ի գիրկս իւր, և օրհնեաց զած, և
ասէ․ Արդ՝ արձակես զծառայս քո տր
ըստ բանի քում ՚ի խաղաղութի․ զի տե-
սին աչք իմ զփրկութիւն քո․ զոր



պատ

պատրաստեցեր առաջի ամ՟ ժողովրդոց։
Լոյս ՚ի յայտնութի հեթանոսաց, և փառս
ժողովրդեան քում Իսրայէլի։ Եւ էին
հայրն և մայր նր զարմացեալ ՚ի վր բա-
նիցն, որ խօսէին զնմանէ։ Եւ օրհ-
նեաց զնս Սիմէոն, և ասէ ցՄարիամ
մայրն նր. Ահա սա կայ՝ ՚ի գլորումն և
՚ի կանգնումն բազմաց ՚ի մէջ Իէլի, և
՚ի նշան հակառակութե. և ընդ քո իսկ
անձն անցցէ սուր. զի յայտնեսցին ՚ի
բազում սրտից խորհուրդք։

Եւ ասէ զաղօթս առաջի խորանին։

Տէր մեր յս քս, որ կեցեալ զաւուրս
քառասնուն՝ ըստ օրինացն մովսէսի, ե-
կիր ՚ի տաճարն ՚ի յընծայումն՝ հանդերձ
մարիամաւ մարբն քով, և ՚ի գիրկսն սի-
մէօնի գրգուեցար։ Աղաչեմք և խնդ-
րեմք ՚ի քէն, պահեա զտղայս զայս, և
աճեցո շնորհօք՝ անտեսանելի զօրութե
քով. և արժանի՛ արա զսա մասին ժա-
ռանգութե ընտրելոց քոց. և պահ-
պանիլ ընդ հովանեաւ աջոյ քո։ Եւ
քեզ ընդ հօր և սբ։

Նո. աւ Շարական. ձ.։

Մեծածին երկնային դասուն աստուածային ձայնիւն աւետարանէր Հրեշտակն ուրախ լեր բերկրեալդ որ ընդ քեզ. Որ ի քերովբէս բազմեալ ընդ Հօր անապականաբար բնակէր Հանգեցաւ ի քում յորովայնի. ուր. Որ բոցեղէն սրով բերուք շուրջանփակեալ պահէին. այսօր ի մէջ մարդկան ի դերկրս Հողեղէնի յայտնեցաւ. ուր.

Նո. աղօ ճաշանայն առնէ շարայն ի խորանն ձ. ձայն.

Մայր անուն ծառայս քո, եկեալ յերկրպագութիւն. երկրպագեմ ըզ լուսանիս. երկրպագեմ ըզ սե.

Ամէ խաչիւս աղաչեմ։

Պահպանիչ և. Հայր մեր որ.

Հալաւ Օրհնեք։

## Կանոն Կուսի Պսակին

Նախ ժամն ըստ բերեն զհաւատն առաջի քա-հանայէն․ և քահանայն խոսնէ օրհնէ և ասէ Տ արաջան․ ԲԷԿ։

Այսօր երկնայինքն ուրախացան ընդ երկրաւորացս նոր։
Այսօր հողածնութեայ բնութիւնս։
Այսօր մանկունք եկեղեցւոյ տօնեն։
Որ զմիաբանեալսն յաշտարակին բա։
Որ էջ հոգին տն և առաջնորդեաց։
Որ եկեց հոգին տն ըզբեսելէլ։
Այսր ըն ուսոյն մարմնով անհամբունս։
Օ լոյսն անստուեր յարգանդի։
Ուր դադարէր փասըն մեր բարեւ։
Ի վերայ վիմի հաստատոյ շինեցեր։
Որ շնորհեցեր ողորմութ ի բնակս։
Ի տաճարի փառաց սրբութեն քո
փառք հօր և որդւոյ և։



Ամ

Սրբոյ անմահ փեսային · եղեր դու մայր Մարիամ · բարեխօսեա վասն մեր ՚ի յայնմ աւուր ահեղին ·

Նս առէ շարակն ։

Օրհնեա քո աստուած մեր՝ հոգևոր օրհնութեամբ զհալաւս զայս հարսանեաց · զի որք զգեցցին զսա, մի՛ իշխեսցէ մերձենալ ՚ի սոսա չար աղանդ դիւաց կամ կախարդաց ։ Այլ ամրացեալ զօրութեամբ խաչի քո, փրկեսցին յամ որոգայթից սատանայի · Եւ քեզ վայելէ · Սբ խաչիւս աղաչես։ Պահպանիչ և ։

Հայր մեր որ ·

Նս ապա երթան ՚ի տուն հարսին, և բերեն զհարսն առ փեսայն · և առնու քահանայն զաջ ձեռն հարսին և տայ յաջ ձեռն փեսային և ասէ ։

Առեալ զձեռն եւայի՝ տուեալ ՚ի յաջն ադամայ, և ասէ ադամ · այս այժմ ոսկր յոսկերաց իմոց, և մարմին ՚ի մարմնոյ իմոյ · սա կոչեսցի կին, զի յառնէ իւրմէ առաւ ։

Վն այսորիկ թողցէ այր զհայր իւր և զմայր իւր, և երթիցէ զհետ կնոջ իւրոյ ·

րոյ. և եղիցին երկոքեան ՚ի մարմին մի:

Օրհ՝ զոր Ած զուգ:

Նա ասէ շարական. Գլ:

Նայեա ՚ի մեզ. և ողորմեա մեզ քս:
Որ հայրդ ես որբոց. և դատաւոր:
Որ պսակինդ ես սրբոց. լուր և:
Մայր և կոյս: Մաքուր աղաւնին:
Բև հօձեցան: Յաղթօղ և զնոր:
Որ է կն ՚ի լուսաւոր: Փառք հօր և:
Այժմ և մեք տօնեսցուք զնաւակ կա:

Նա ասէ պաշտն:

Տէր Ած յաւիտենական, որ զանզոյգս և զբացորոշեալս զուգակցես միաւորութէ, և կապես անքակտելի: Որպ օրհնեցեր զԻսահակ և զՌեբեկա, և ժառանգ զնս քո աւետեացն երևեցուցեր: Դու տէր օրհնեա զծառայս և զաղախինս քո, առաջնորդելով նցա ՚ի գործս բարիս. ողորմած և մարդասէր ես Ած մեր: Եւ քեզ վայելէ:
Ամէն խաղաղութ: Պահպա: Հայր մեր:



Նա

Ե[illegible] երթան ՚ի դասուն եկեղեցւոյն · և հարսն և փեսայն երեք ծունր կրկնեն · և քահանայն խոստովանեցնէ զնո՟, և ապա ոլորէ զնարօտն: Երբ զփեսայինն ոլորէ՝ ասէ.

Տէր ՚ի զօրութեան քում, ուրախ եղ:

Եւ երբ զհարսինն ոլորէ՝ ասէ: ·

Տարցին թագաւորի կուսանք զհետ.

Եւ ապա տայ զձեռն ՚ի ձեռն՝ և ասէ ող՟ ՚ի տանն ասայ: Եւ ապա ասէ զխրատ՟:

Տեսէք որդեակք, ըստ ա՟ծային հրամանաւն՝ և կանոնիւք սրբ՟ հայրապետացն եկեալ էք ՚ի սրբ՟ եկեղեցիս պսակիլ օրինօք ՚ի սրբ՟ ամուսնութի. Ա՟ծ զձեզ միաբան սիրով պահեսցէ, ՚ի խոր ծերութի հասուսցէ, և անթառամ պսակին արժանացուսցէ: Ապա տեսէք, որ յաշխարհիս վերայ պէս պէս փորձութիւնք կան. թէ հիւանդութի, եթէ աղքատութի, և թէ այլ ինչ նեղութի. Ա՟ծ զձեզ յամ՟ փորձութե հեռի պահեսցէ: Բայց Այ՟ հրամանն այս է, որ դուք երկոքեանդ մինչև ՚ի մահ միմեանց օգնութի պիտի անէք:



Եւ

Եւ նախ հարցանէ փեսային և ասէ.

Որդեակ իմ, մինչև 'ի մահ տէ՞ր ես։ Եւ նա ասէ, Այո՛ հայր սբ, տէր եմ հրամանաւն այ։

Եւ ապա հարցանէ հարսին և ասէ.

Որդեակ իմ, և դու մինչև 'ի մահ հնազանդ ես։ Եւ նա ասէ նոյնպէս։ Եւ ասէ քահանայն։ Այս բանիս վկայ Քս է՝ որ աներևութապէս 'ի վե՛ր սբ սեղանոյս բազմեալ է։ Այլ և մեր պահապան հրեշտակքն, այս սբ եկեղեցիս, սբ խաչս և սբ աւետարանս. դասք քահանայից, և երամք ժողովրդոց. սոքա ամենքն վկայ լինին մի։ Եւ նոքա ասեն։ Այո՛ հայր սուրբ, վկա՛յ թող լինին։ Եւ ասէ քահանայն։ Քս 'ի մէջ սոցա, և սոքա մի՛ սասանեսցին. օգ։

Մտանեն յեկեղեցին, և ասեն ժամամուտ.

Ողորմութի շնորհեա՛ եկեղեցւոյ։ Հարսին գ։ Ուրա՛խ լեր սբ եկե՛։ Սիոնդա յոյժ։ Ընդ դմա երկնա՛ւ։ Փառք հօր և։ Ուրա՛խ լե՛ր բերկ։



Պա-

Պատմութիւն. Ած՝ որ և հզօր, որ և անմահ, որ մարմնացար ։

Ես եւ խաղաղութեան։ Մս խաղաղութեն.
Նաէ ակէ։ Տր ՚ի զօրութե։ զ3անկութի։

Ընթերցուած ՚ի ծննդոց.

Եւ ասաց ած. արասցուք մարդ ըստ պատկերի մերում և ըստ նմանութե, և իշխեսցեն ձկանց ծովու, և թռչնոց երկնից, և ամ անասնոց, և ամ սողնոց որք սողեն ՚ի վր երկրի. Եւ արար ած զմարդն ՚ի պատկեր իւր. ըստ պատկերի այ արար զնա.

Դարձեալ ՚ի ծննդոց ։

Եւ էարկ տր ած թմրութի ՚ի վր ադամայ, և ննջեաց. և էառ մի ՚ի կողից նր՝ և ելից ընդ այնր մարմին ։ և շինեաց տր ած զկողն զոր էառ յադամայ՝ ՚ի կին, և էած զնա առ ադամ։ Եւ ասէ ադամ. այս այժմ ոսկր յոսկերաց իմոց, և մարմին ՚ի մարմնոյ իմմէ. սա կոչեսցի կին, զի յառնէ իւրմէ առաւ ։ Վս այսորիկ թողցէ այր զհայր իւր՝ և զմայր իւր, և երթիցէ զհետ կնոջ իւրոյ. և եղիցին երկոքեան ՚ի մարմին մի ։

Ընթերցուած յԵսայեայ մար:

Եւ ծանիցին 'ի մէջ ազգաց զաւակ նց՟, և ծնունդք նոցա 'ի մէջ ժողովրդոց. ամ՟ենին որ տեսանիցեն՝ ճանաչիցեն զնս՟՝ և ասասցեն. սոքա են զաւակք օրհնեալք յայ՟. և ուրախութ՟ ուրախ լիցին 'ի տր՟. Ցնծասցէ անձն իմ 'ի տր՟, զի զգեցոյց ինձ հանդերձ փրկութե՟՝ և պատմուճան ուրախութե՟. իբրև փեսայի եդ ինձ պսակ, և իբրև հարսն զարդու զարդարեաց զիս. Եւ իբրև երկիր որ աճեցուցանէ զծաղիկս իւր, և իբրև զպարտէզ որ բուսուցանէ զսերմանիս իւր. այնպէս ծագեսցէ տր՟ զարդարութի՟ իւր, և զցնծութի՟ առաջի ազգաց. Վա՟ սիոնի ոչ լռեցից, և վա՟ եմի՟ ոչ ներեցից. մինչև ծագեսցի իբրև զլոյս արդարութի՟ նր՟, և փրկութի՟ նր՟ իբրև զփայլակն վառեսցի. և տեսցեն հեթանոսք զարդարութի՟ քո, և թագաւորք զփառս քո. և կոչեսցի քեզ անուն նոր զոր տր՟ անուանեսցէ. Եւ եղիցիս պսակ վայելչութե՟ 'ի ձեռին տն՟, և թագ արքայութե՟ 'ի ձեռին այ՟ քոյ. և ոչ ևս կո-

չեսցիս լքեալ, և երկիրն քո ո՛չ ևս կո-
չեսցի աւերակ. Զի քեզ անուն կո-
չեսցին կամք իմ, և երկրին քում շինութի
բնակութե. զի հաճեսցի տ՟ր ընդ քեզ,
և երկիրն քո խառնեսցի 'ի բնակութի
իւրում: Զոր օրինակ բնակեսցի երի-
տասարդ ընդ կուսի, այնպէս բնակես-
ցին որդիք քո 'ի քեզ. և եղիցի զոր օ-
րինակ ուրախ լինի փեսայ առ հարսին
իւրում, այնպէ՛ս ուրախ լիցի տէր 'ի
քեզ: Եւ 'ի վ՟ր պարսպացն քոց Եղէմ՝
պահապանս կացուցից. զօրն ողջոյն և
զգիշերն ա՟մ. որ մինչև ցայդ մի՛ դադա-
րեսցին յիշել զտ՟ր. զի ո՛չ գոյ նման քեզ:

Պօղոսի առաքելոյն յԵփեսացւոց թղթոյն է
ընթերցուած.

Կանայք՝ իւրեանց արանց հնազա՛նդ լի-
ցին իբրև տ՟ն. զի այր է գլուխ կնոջ,
որ՟պ և ք՟ս գլո՛ւխ է եկեղեցւոյ. և ինքն
է փրկիչ մարմնոյ. այլ որ՟պ եկեղեցի
հնազանդ լինի ք՟ի, նոյնպէս և կանայք
իւրեանց արանց յա՟մի. Արք՝ սիրեցէ՛ք
զկանայս ձեր. որ՟պ և ք՟ս սիրեաց զեկե-
ղեցի, և զանձն իւր մատնեաց վ՟ս ն՟ր.

 զի

զի զնա սրբեսցէ՛ սրբութ՟բ աւազանին բանիւ. զի կացուսցէ՛ ինքն իւր յանդիման փառաւո՛ր զեկեղեցի, զի մի՛ ունիցի արատ ինչ՝ կամ աղտեղութի՟՝ կամ այլ ինչ յայսպիսեաց. այլ զի իցէ ս՟բ և անարատ: Նոյնպէս պարտին արք սիրել զիւրեանց կանայս, որպ՟ զիւրեանց մարմինս: Որ սիրէ զկին իւր՝ զանձն իւր սիրէ. զի ո՛չ երբէք ատէ զանձն իւր, այլ սնուցանէ՛ և դարմանէ զնա, որպ՟ և ք՟ս զեկեղեցի. զի անդամք եմք մարմնոյ նորա, և ոսկր ոսկերաց նորա: Վ՟ այսորիկ թողցէ՛ այր զհայր իւր և զմայր իւր՝ և երթիցէ զհետ կնոջ իւրոյ, և եղիցին երկոքեան ՚ի մարմին մի: Խորհուրդս այս մեծ է. բայց ես ասեմ ՚ի ք՟ս և յեկեղեցի. այլ և դուք նոյնպէս մի ըստ միոջէ՛. զի իւրաքանչիւրոք զիւր կին այնպէս սիրեսցէ՝ իբրև զիւր անձն. և կինն երկնչիցի յառնէ իւրմէ:

Ալէլուիա ալէլուիա:

Կացցէ դշխոյ ընդ աջմէ քումմէ ՚ի:

Ուրբ. Խաղաղութի՛ ամենեցուն.

ԱԷ. Աւետարանն Յի՛ Քրի՛ որ ըստ Մ՛ատ:

Եւ գնացին զհետ նո՛ր ժողովուրդք բազումք, եւ բժշկեաց զնո՛ս անդ: Եւ մատուցեալ առ նա փարիսեցիքն, փորձէին զնա՝ եւ ասէին. եթէ արժա՛ն իցէ ումեք արձակել զկին իւր ըստ ա՛մ վնասու: Պատասխանի ետ նց՛ եւ ասէ. չիցէ՞ ընթերձեալ ձեր՝ թէ որ հաստատեացն ՚ի սկզբանէ՝ արու եւ էգ արար զնո՛ս եւ ասէ. վա՛ այսորիկ թողցէ այր զհայր եւ զմայր՝ եւ երթիցէ զհետ կնոջ իւրոյ, եւ եղիցին երկոքեան ՚ի մարմին մի: Ապա ուրեմն. ոչ են երկու, այլ մի մարմին: Արդ՝ զոր ա՛ծ զուգեաց, մարդ մի՛ մեկնեսցէ: Ասեն ցնա. իսկ մովսէս ընդէ՞ր պատուիրեաց մեզ տալ թուղթ մեկնելոյ՝ եւ արձակելոյ: Ասէ ցնո՛ս յս՛. մովսէս՝ վա՛ խստասրտու՛ ձերոյ հրամայեաց ձեզ արձակել զկանայս ձեր. այլ ՚ի սկզբանէ ոչ եղեւ այնպէս: Բայց ասեմ ձեզ, զի ա՛մ որ արձակէ զկին իւր՝ եւ ոչ վասն պոռնկու՛, եւ առնիցէ այլ՝ շնայ, եւ որ զարձակեալն առնէ՝ շնայ:



Ա՛

Մ՜ ուղղելոյ զգնացս մեր 'ի ճանա։
Մասն ցրելոյ 'ի մէնջ զա՜մ խորհուրդս։
Մասն պարգևելոյ մեզ առողջ խոր։
Մասն պահելոյ զմեզ ընդ հովանեաւ։
Մասն խորտակելոյ։ Մասն հոգւոյն։

Նու առէ զաղօթս։

Տէ՛ր ա՜ծ զօրութեց և արարիչ ա՜մ արարածոց, որ առեր հող յերկրէ՛ և ստեղծեր զմարդն ըստ պատկերի քում և ը՜ս նմանութե։ և եդեր զնա 'ի դրախտին փափկութե։ Արու և էգ արարեր զն՜ա և օրհնեցեր զն՜ա ասելով, աճեցէք և բազմացարուք և լցէք զերկիր, և տիրեցէք դմա։ Նախատրպեցան խնամք արարչական սիրոյ քո յարարածս քո 'ի ձեռն միածնի որդւոյ քո ա՜ն մերոյ յի՜քի. գալ ծնանիլ 'ի ս՜բյ կուսէն, և նորոգել զնու՜ի առաջնաստեղծ մարդոյն։ Առնելով սկիզբն նշանաց 'ի կանա գալիլեացւոց 'ի հարսանիսն. և ա՜ծային զքանչելեօքն զուարճացուցեալ զհարսնարանն՝ զջուրն 'ի գինի փոխելով։ Նու այժմ աղաչեմք զքեզ տ՜ր՝ օրհնեա ✠ զամուսնութիս զայս ո՜ղ զո՜ք նախա-

հարցն. անարատ պահելով զոսսա հոգե-ւոր սիրով միաբանութբ ՚ի կենս յայտոսիկ. Օրհնեմ ✠ տր և զպտղաբերուն որդէ-ծնութե սոցա ՚ի ժառանգուն վարուց առաքինուն՝ ՚ի փառս ամենասուրբ ան-ուան քո. Այլ զի խաղաղական կենօք՝ և բազմաժամանակեայ ծերութբ յեր-կարեալ յայսմ աշխարհիս, և յանդորա-ւական ուրախուն ՚ի վերին հարսնա-րանին արժանաւորեսցին հասանիլ ընդ ամ սբս, շնորհօք և մարդասիրութբ տն մրոյ և փրկչին յի քի. Ընդ որում օրհնեալ ես հայր ամենակալ՝ հանդերձ կենդանարար և ազատիչ սբ հոգւովդ.

## Խաղաղութեան ամենեցուն.

Օրհնեմ ես տր ած արարիչ ամ արա-րածոց, որ դու միայնդ ես բարերար և կարող. որ արարեր զամ արարածս հրա-մանաւ քով՝ զերկինս և զերկիր, և զամ ինչ որ ՚ի նս. Զերկինս արարեր իմա-ստութբ. զերկիր հիմնեցուցեր կարողութբ. և զծով պատրաստեցեր ողորմութբ. Զարեգակն ճառագայթեցեր ՚ի լու-սաւորութն տունջեան. զլուսին և զաս-



տեղս

տեղս պայծառացուցեր 'ի զարդ գիշե-
րոյ. և զտարերս զուգակարգեցեր առ 'ի
կենդանութ՟ի արարածոց քոց։ Խորհե-
ցար հայր անսկիզբն՝ ընդ միածնի որդ-
ւոյ քո՝ և ընդ կենդանարար ս՟բ հոգ-
ւոյդ՝ և ասացեր . արասցուք մարդ ըստ
պատկերի մերում և ըստ նմանութ՟ե , և
իշխեսցէ 'ի վ՟ր երկրի։ Առեր հող յերկ
րէ , և ստեղծեր ա՟ծային աջով քով
մարդ . և կերպարանակից քեզ արար-
եալ՝ կացուցեր զնա տ՟ր և իշխան 'ի վ՟ր
ա՟մ արարածոց քոց երկրաւորաց։ Եւ
ապա հայեցեալ 'ի միայնութ՟ի ն՟ր՝ ասա-
ցեր . ո՛չ է բարւոք մարդոյդ միայն լինել.
արասցուք դմա օգնական ըստ դմա ։
Եւ արկեալ զքուն թմրութ՟ե 'ի վ՟ր ա-
դամայ, առեր զմի 'ի կողից ն՟ր , և շինե-
ցեր զնա 'ի կին. և ետուր մարդոյն բա-
նից կցորդ, և կենակից 'ի զուգաւորութ՟ի
որդէծնութ՟ե . և օրհնեցեր ասելով , ա-
ճեցէք և բազմացարուք և լցէք զեր-
կիր, և տիրեցէք դմա։ Իսկ նախաստեղծ
մարդոյն մարգարէական հոգւով ծա-
նուցեալ՝ ասէ 'ի տեսանելն . այս այժմ

 ոսկր

ոսկր յոսկերաց իմոց, և մարմին ՚ի մարմնոյ իմմէ. սա կոչեսցի կին, զի յառնէ իւրմէ առաւ. վասն այսորիկ թողցէ այր զհայր իւր և զմայր, և երթիցէ զհետ կնոջ իւրոյ. և եղիցին երկոքեան ՚ի մարմին մի. Եւ յաղագս միաւորութեան սոցա՝ ծնան նահապետք, քահանայք, թագաւորք, մարգարէք. աճեցան և բազմացան տոհմիւք իւրեանց՝ յածոյին օրհնութեամբդ, յասելդ քո արարողիդ կենաց, թէ բազմացուցից զզաւակս ձեր որպէս զաստեղս երկնից, և իբրև զաւազ առ ափն ծովու. Արդ՝ որպէս օրհնեցեր զամուսնութիւն նախահարցն և զնախամարցն, զաբրահամուն և զսառային, զսահակայն և զռեբեկայն, զյակոբայն և զհռաքելին, զյովսեփայն և զասանեթին, զյովակիմայն և զաննային, զզաքարիային և զեղիսաբեթին. և որպէս օրհնեցեր զզաւակս արդարոցն քոց. Նոյնպէս օրհնեա՛ ✠ զզաւակս զայս յամուսնութեան ծառայից քոց. զի դու ժամանեցուցեր զսոսա յօրհնութիւն քաղցրութեան քո, և եդեր ՚ի գլուխ սոցա պսակ ՚ի քարէ պատուականէ. Եւ որպէս



օրհ

օրհնեցեր զՀարսանիսն 'ի կանա Գալիլ-
եացւոց. և ա̃ծային սքանչելեօք զՋուրն
'ի գինի փոխելով, ծանուցեր աշակեր-
տաց քոց զա̃ծային քո զփառս. և քարո-
զեցար ա̃ծ և փրկիչ ազգի մարդկան։
Ոչ եթէ խոտեցեր զամուսնութի̃ն. այլ
քահանայապետաբար օրհնեցեր, և հաս-
տատեցեր անսուտ բանիւդ քո, եթէ
զոր ա̃ծ զուգեաց՝ մարդ մի' մեկնեսցէ։
Այլ պարտին արք սիրել զիւրեանց կա-
նայս՝ ո̃պ զիւրեանց մարմինս. Նոյնպէս
և կանայք հնազանդ լինիցին արանց իւր-
եանց իբրև տ̃ն. Զոր և ս̃բ առաքեալն
գոչէ 'ի մէջ եկեղեցւոյ, թէ ո̃պ եկե-
ղեցի հնազանդ լինի ք̃ի, նոյնպէս և
կանայք՝ իւրեանց արանց յա̃մի. զի այր
է գլուխ կնոջ. ո̃պ և ք̃ս գլուխ է եկե-
ղեցւոյ։ Յաղագս որոյ պատուական է
ամուսնութի̃, և ս̃բ են անկողինք ն̃ց։
Դու տ̃ր՝ որ ս̃բդ ես և 'ի ս̃բս հանգու-
ցեալ, ս̃բ պահեա՛ զանկողինս ամուսնու̃
սոցա. և միաւորեա՛ զսոսա զուգակցու̃
ընդ լծով վիճակի քո։ Ո̃պ զի մի' յայսմ
հետէ կոչեսցին երկու, այլ՝ մի մարմին։

միաւորեալ հոգւով հեզութեն • սիրել զմիմեանս պարկեշտ վարուք , ամբիծ հոգւով, առանց ամօթոյ առանց լկտութեն պատրաստ լինել 'ի գործս բարիս • Ոպ զի զերծեալք յորոգայթից թշնամւոյն՝ առողջ հոգւով և մարմնով պահպանեսցին հրեշտակական պահպանութբ, և նշանաւ ամենայաղթ խաչի քո։ Այո՛ տր ած մեր՝ լեր պաշտպան ծառայից քոց , և տուր ապաւինի զմր աւուրս կենաց սոցա։ Փրկեա զսոսա յօտարոտի խորհրդոց, և պատսպարեա 'ի տուէ և 'ի գիշերի ողորմութբ քով։ Տնկեա զսոսա ոպ ձիթենի պտղալից 'ի տան այ։ Ոպ զի կեցեալք արդարութբ , սրբութբ , և ածպաշտութբ ըստ հաճոյից կամաց քոց բարեխնդրաց, տեսցեն զորդիս որդւոց իւրեանց • և եղիցին քեզ ժողովուրդ՝ և փառաբանիչ անուանդ քում սբյ։ Եւ անդադար օրհնեսցեն զամենասբ երրորդութիդ, զհայր և զորդի և զսբ հոգիդ, այժմ և միշտ։

՚Նստացանեն շփեասյն և ասեն Տր։

Ո՛վ երանելիդ ամենեցուն տիեզե •

Ընծանէ, Խաչէ, փառս։

Սբ խաչիւս աղաչեմ․ Պահպանիչ և․

Հայր մեր որ յերր․

Յիշեան ՚ի տուն առեղծ․ Արեգական․
կամ Խաղաղաւոր գոլով․

---

## Կանոն Պսակ Ամուսնացուցանելոյ․

Բերեն քահանայն շպարան և շփեռայն և դնեն գլուխ գլխի․ Հանեն շբուրն ՚ի բուրվառէն և դնեն Խաչանման ՚ի վերայ գլխոյ նոցա․ և ասեն Շարական․ Գ․ Կ․

Այսօր մարտիրոսաց դասքն ցնծա-
ցեալ բերկրին․ ընդ անուամբ Տ՚ն․
ք՚ի որդւոյն Ա՚յ․ Զայն ՚ի յերկնից
վերկայեալ մաէ․ եկայք օրհնեմք հօր
Բմն ՚յ․ ժառանգորդք երկնից խոր-
նացն․ Լցէք ընտրելի անկելոցն․ ա-
պերասանդերաղական Թռչնամնւ ՚յն․ որ ՚ի
յերկնից վայր անկեալ։

Սայր և կոյս․ Յաղթօղ և գնար․
փառք հօր և․ Ընթանամ պրասէքն



ձեղ

Ձեզ աւանդեալ մինայ . քան զանկանելս
պատուականելս դերամ.

Ալէ ալէ . Աթոռ քո ած յաւիտեանս.
Բղխեսցէ սիրտ իմ զպատգամս քո .

· Ընթերցուած յՈվսէայ մարգարէէ .

Այսպէս ասէ տէր . եղիցի ինձ իբրև զցօղ և ծաղկեսցի իբրև զշուշան և արձակեսցէ զարմատս իւր իբրև զլիբանան. Տարածեսցին ոստք նր, և եղիցի իբրև զձիթենի պտղալից, և բուրեսցի հոտ նր իբրև զկնդրուկի. Դարձցին և նստցին ընդ յարկաւ նր . կեցցեն և հաստատեսցին ցորենով, և ծաղկեսցին իբրև զորթ . և իբրև զգինի լիբանանու եղիցի եփրեմ.

Պօղոսի առաքելոյն ՚ի Տիմոթէոս Բ.

Արժան լինել զկանայս ՚ի զարդ խոնարհութե . ակնածութ. և զգաստութ. զարդարել զանձինս. մի ՚ի հիւսս ոսկեմանս ընդելուզեալս մարգարտովք կամ ՚ի հանդերձս պաճուճեալս . այլ որպ վայելէ կանանց՝ զածպաշտութի յանձն առելոց գործովք բարութե. Կին մարդ ցածութ



ուս

ուսցի, ամ՟ հնազանդութ՟. այլ ուսուցա-
նել՝ կնոջ մարդոյ ոչ հրամայեմ, և ոչ
ճոխաբան լինել քան զայր մարդ. այլ՝ ՚ի
լռութ՟ կալ. զի ադամ նախ ստեղծաւ.
և ապա եւա. և ադամ ոչ պատրեցաւ,
այլ՝ կինն պատրեցաւ և յանցեաւ.
Բայց կեցցէ վս՟ որդեծնութ՟, եթէ
կայցեն ՚ի հաւատս և ՚ի սէր և ՚ի սրբութ՟
պարկեշտութ՟.

Ր՟ւէ ուէ. Կացցէ դշխոյ ընդ աջմէ.

Աւ՟ Ս՟ետարանն ՅԷ՟ ԲԺ՟ որ ըստ Յօհան.

Եւ յաւուրն երրորդի հարսանիք էին
՚ի կանա գալիլեացւոց, և անդ էր մայրն
յի՟. կոչեցաւ և յս՟ և աշակերտքն նր՟ ՚ի
հարսանիսն. Եւ ՚ի պակասել գինւոյն՝
ասէ մայրն ցյս՟. գինի ոչ ունին. Ասէ
ցնա յս՟. զի՞ կայ իմ և քո՝ կին դու, չև՛
է հասեալ ժամանակ իմ. Ասէ մայրն
ցսպասաւորսն. որ զինչ ասիցէ ձեզ՝ ա-
րասջիք. Անդ էին թակոյկք կճեայք
վեց՝ ըստ սրբութեն հրէից. տանէին մի մի
՚ի նոցանէ մարս երկուս կամ երիս.
Ասէ ցնս՟ յս՟. լցէ՛ք զթակոյկսդ ջրով. և


լցին

լցին զնա մինչև 'ի վեր: Ասէ ցնոսա, արդ՝ առէք և բերէք տաճարապետին· և նոքա բերին: Եւ իբրև ճաշակեաց տաճարապետն զջուրն գինի եղեալ, և ոչ գիտէր թէ ուստի իցէ· բայց սպասաւորքն գիտէին որք արկին զջուրն· Խօսի ընդ փեսային տաճարապետն՝ և ասէ· ամ մարդ զանոյշ գինի յառաջագոյն պաշտէ· և յորժամ արբենան՝ յայնժամ զյոռին· դու պահեցեր զանոյշ գինիդ մինչև ցայժմ: Զայս արար սկիզբն նշանաց յս 'ի կանա գալիլեացւոց, և յայտնեաց զփառս իւր· և հաւատացին
'ի նա աշակերտքն նր·

ժըդ Լուիցէ տր ձայնի աղաչանաց մերոց, ընկալցի զխնդրուածս սրտից մերոց, թողցէ զյանցանս մեր, ողորմեսցի 'ի վր մեր·

ճդ Տր ած մեր՝ որ յամ ժամ ընդ մեզ ես, և ոչ երբէք թողուս 'ի ձեռանէ քումմէ զայնոսիկ, որք ճշմարտութբ խոստովանին զանուն քո սբ: Զքեզ աղաչեմք՝ և առ քեզ կարդամք՝ և 'ի քէն խնդրեմք մարդասէր տր, քոյին հրամանաւդ օրհնեցայք զպսակս զայս ամուսնութե առցս
'ի

՚ի խորանի քում սրբութե̃ առաջի ա̃ծյ սեղանոյ քո. և արդ՝ տէ՛ր բարերար՝ քոյին հրամանաւդ առնումք զնարօտ պսակիս ՚ի գլխոյ սոցա, և օրհնեմք զսոսա նշանաւ ս̃բ խաչին ✝ Նայեա՛ տ̃ր քաղցրութե̃ քով ՚ի սոսա. և առաքեա՛ զհրեշտակ խաղաղութե̃ քո, որ եկեալ պահեսցէ զսոսա ս̃բս և անարատս, միաշունչս և միախորհուրդս. Շնորհեա՛ սոցա տ̃ր՝ և զաւակս ըստ կամաց քոց. քաղցրացո՛ զվայելչութիւն կենաց սոցա քոյով առատ բարերարութե̃դ. զի կեցցեն անբիծ և անարատ վարուք յայսմ աշխարհիս մինչև ՚ի խորին ծերութիւն, և արժանաւորք եղիցին երկնից արքայութեանդ, և անթառամ պսակացն. Զի քեզ ամենազօրիդ ա̃յ վայելէ փառք իշ.

Եւ ապա բաժակ մի գինի առնու քահանայն ՚ի ձեռն իւր՝ և ասէ զաղօթս.

Տ̃ր ա̃ծ մեր, որ զա̃մ ինչ իմաստութե̃ արարեր, և հաստատեցեր զտիեզերս, և զարդարեցեր զհարսանիսն ՚ի կանա գալիլեացւոց. Ինքնին տ̃ր՝ օրհնեա՛ զբաժակս զայս ողորմութե̃ քով. և մե՛զ յա̃մ ժամ.

ժամ գոհասցուք զպարգևաց քոց։ Եւ
քեզ հանցուք զօրհնութի և զփառս հօր։

Եւ տայ նոցա զբաժայն ասելով·

Օրհնութի գոհութի և փառք հօր և.
Աէ խաչիւս աղա։ Պահպանիչ և յոյս։
Հայր մեր որ.

## Կանոն Երկրորդ Պասկի·

Քահանայն բերէ զնոսա յեկեղեցին՝ և խոստովա-
նեցուցանէ. և ապա տայ զձեռն ՚ի ձեռն, և
հարցանէ ո՞վ յառաջն կրեցաւ. և ապա ասէ.

Տէր ՚ի զօրութե քում ուրախ եղիցի.
Զ ցանկութի սրտի նր̃ ետուր.

Գներ պօղոսի. Մ̃ եսաբրան ծառբէէ. Բարբ՝
վն ուղղելց. Նոյնա էն որք ՚ի յուսա պահն
ջան։ Եւ ապա ասէ զաղօթս։

Տէր մեր, որ ՚ի հրեշտակաց
խօսեցեալ՝ և ՚ի մարգարէից
քարոզեալ՝ և յառաքելոյն աւետարա-
նեալ. որ անարատ յայտնութե քով կեանս
աշխարհի պարգևեցեր։ Օրհնեմ տր̃ և
այժմ զամուսնութի ծառայիս քո և ա-

զխնդոյս, որ օրհնեցեր զՋուրն 'ի կանա
գալիլեացւոց՝ և արարեր գինի. ըզան-
չելագործելով պատուեցեր զամուս-
նութիւն։ Օրհնեա և այժմ տր զծառայքս
քո զզուգաւորեալքս այժմոյս դարձել
յերկրորդ ամուսնութի։ Որ զի ընդու-
նելով զերկրորդ ամուսնութիս զայս յան
ձինս իւրեանց, միաւորեսցին հաւատով
և յուսով և սիրով ընդ սբյ եկեղեցւոյ.
և յառաջեալք 'ի պատուիրանս քո՝ ե-
ղիցին միաւորեալք ը միմեանս հոգւով
և մարմնով։ Պարգևեա սոցա որդեծը-
նութի ողորմութե քով. Թող տր զմեղս և
զյանցանս սոցա, զկամայ և զակամայ.
ընկալ զաղօթս և զխնդրուածս սոցա.
օրհնեա զսոցա զհոգի և զմարմին. և շի-
նեա զսոսա որ առաջին վարուքն կեալ
ընդ միմեանս գործովք բարութ յայսմ
աշխարհիս։ Օրհնեա տր և զծնունդս
որովայնի սոցա, զի եղիցին 'ի հաճոյս քեզ
արարչիդ և այդ մերոյ. Զի դու ես որ
օրհնես և սրբես զանձինս մեր ամցւն.
և քեզ վայելէ փառք։
Խնդրեսցուք հաւատով միաբանութ։

Դնէ զպսակն և ասէ ։

Տր մշտնջենաւոր, որ զօրութբ քով և միածնի որդւոյ քո՝ և ամենասուրբ հոգւոյդ՝ արարեր յոչնչէ զամ արարածս քո, զծով և զցամաք, և զամ որ ՚ի նոսա։ Շինեցեր զդրախտն փափկութե, և տնկեցեր ՚ի նմա զփայտն կենաց. որև ՚ի վախճան ժամանակի ՚ի ձեռն մբյ որդւոյ քո սիրելւոյ՝ տն մերոյ յի քի՝ նոյն կենաց փայտիւն ազատեցեր զանկեալն ը պատրանօք բանսարկուին։ Դու նոյն ինքն տր մեր՝ և ած ամնցւն, օրհնեա և սրբեա զերկրորդ պսակս զայս յամուսնութի ծառայիս քո և աղախնոյս, պահելով զսոսա անարատ սիրով և միաշունչ խորհրդով։ Օրհնեա տր և զպտղաբերութի որդեծնութե սոցա. զի աճեսցին խաղաղական կենօք, և ապրեսցին շնորհօք քովք. և հանդերձեալ բարեացն հանդիպելով՝ փառաւորեսցեն զքեզ ը որդւոյ և ընդ մբյ հոգւոյդ, այժմ և։

Խաղաղութիւն ամենեցուն։

Սբ ած մեր՝ որ գաղտնեաց մարդկան դիտակ ես, և զծածուկս մեր ճանաչես. զի քեզ յայտնի են խորհուրդք ամն, և

Ճանապարհ կնոջ. Նոյնժամ բարերարութ̃ քով 'ի ծառայս քո, և տո՛ւր սոցա զլուծ սիրոյ քո. զի ընկալցին զերկրորդ պսակս, և հրամանաւ քով բնակեսցին իմիասին միով խորհրդով՝ 'ի սբ̃ անկողինս իւրեանց. Հեռասցին 'ի չար գործոց, և կացցեն ամօթխածութ̃ առ միմեանս. և առաքինի գործովք քաղաքավարեալ, արժանաւորք եղիցին հանդերձել բարեացդ. և քեզ հանցեն զօրհնութի̃.

Աէ̃ խաչիւս աղաչես.

## Կանոն Հաղորդ Տալոյ։

Առնու քահանայն զխաչ և զաւետարան և զէ-[illegible]՝ և երթայ առ հիւանդն. և ասէ զսաղմոսն Յովնանու մարգարէին.

'Ի նեղութե̃ իմում ես առ տէր կար.

զփոխն ըստ ասա՛.

Եւ խոստովանեցուսցանէ զնա [illegible]. և ապա ասէ զաղօթս զայս։

Օրհնեա՛լ ես տր̃ ած̃ մեր յս̃ քս̃ արարիչ ամ̃ արարածոց, որ արժանի արարեր զամ̃ հաւատացեալս՝ հա-



ղոր

ղորդիլ մարմնոյ և արեան քո։ Արժա-
նաւորեա՛ և այժմ զծառայս քո զայս
յետին Թոշակիս, որ հեռանի 'ի կեանս
յաւիտենից։ զի դու իսկ ասացեր ա-
մենաս̄բ բերանովդ, եթէ ոչ կերիջիք
զմարմին իմ, և արբջիք զարիւն իմ, ո՛չ
ունիք կեանս յանձինս ձեր։ Արդ՝ 'ի
ձեռն ս̄բ մարմնոյ և արեան քո՝ ազա-
տեա՛ զսա 'ի յանցանաց մեղաց, և սրբեա՛
զսա շնորհիւ քո. զի ճաշակելով 'ի կե-
նարար մարմնոյ և արենէ քումմէ՝ ար-
ժանի լիցի կենացն յաւիտենից։ Փառա-
ւորել զքեզ ընդ հօր և ս̄բ։

Ամենակա՛լ. քաւեա՛ ըզմե՛ղս իմ. զի
ա̄ծ ես ապաշխարողաց։ Եւ զհոգիդ
ս̄բ. մի՛ հաներ յինէն. զի ա̄ծ.
Եւ փրկեա՛ զիս. յահագին հրոյն.
զի ա̄ծ.

Ս̄բ ա̄ծ, ս̄բ և հզօր, ս̄բ և անմահ, որ
խաչեցար վ̄ն մեր, ողորմեա։

Ա̄ն 'ի վերուստ խօս։

Ալէ ալէ։ Ողորմեա ինձ ա̄ծ ըստ մե։
Առաւել լուա զիս յանօրէնութենէ։

## Ընթերցուածս Եսայեայ մարգ:

Եւ եղեւ յամին յորում մեռաւ Ոզիա արքայ, տեսի զՏէր նստեալ յաթոռ բարձրուն եւ վերացելոյ. եւ լի էր տունն փառօք նորա: Եւ սրովբէք կային շուրջ զնովաւ. վեց թեւք միոյ՝ եւ վեց թեւք միոյ. երկուքն ծածկէին զերեսս իւրեանց, եւ երկուքն ծածկէին զոտս իւրեանց, եւ երկուքն թռուցեալ: Աղաղակէին մի առ մի՝ եւ ասէին. Սուրբ. Սուրբ. Տէր զօրութեանց՝ լի է ամենայն երկիր փառօք նորա: Եւ վերացաւ դրանդն ՚ի ձայնէն զոր աղաղակէին, եւ տունն լի եղեւ ծխով: Եւ ասեմ, վա՜յ է ինձ՝ ես այր տառապեալ զխիղճ կամն, հիացեալ: զի մարդ եմ՝ եւ պիղծ շրթունս ունիմ, եւ ՚ի մէջ պղծաշուրթն ժողովրդեան բնակեալ եմ ես. եւ զՏէր զօրութեանց տեսի աչօք իմովք: Եւ առաքեցաւ առ իս մի ՚ի սրովբէից անտի, եւ ՚ի ձեռին իւրում ունէր կայծակն. զոր առեալ ունելեօք ՚ի սեղանոյ անտի, եբեր մերձեցոյց ՚ի բերան իմ, եւ ասէ. ահաւասիկ մերձեցաւ այդ ՚ի շրթունս քո, եւ հանցէ զանօրէնութիւնս քո, եւ զմեղս քո սրբեսցէ ՚ի քէն:

Յօհաննու առաքելոյն ՚ի թղթոյն·

Սիրելիք՝ մարմին և արիւն որդւոյն այ՛ սրբէ զմեզ յամ մեղաց։ Եթէ ասիցեմք թէ մեղս ինչ մեք ոչ ունիմք, զանձինս խաբեմք. և ճշմարտութի՛ն ՚ի մեզ ոչ գոյ։ Ապա եթէ խոստովան լինիցիմք զմեղս մեր, հաւատարիմ է նա և արդար՝ առ՚ի թողուլ զմեղս մեր, և սրբել զմեզ յամ անօրէնութէ։ Եթէ ասիցեմք՝ եթէ ոչ ինչ մեղաք, ստել առնեմք զնա. և բանն նր ոչ է ՚ի մեզ։ Որդեակք իմ, զայս գրեմ ձեզ՝ զի մի՛ մեղիցէք. և եթէ մեղիցէ ոք, ունիմք բարեխօս առ այծ զյս քս՝ զարդարն և զանարատն. և նա է քաւութի մեղաց մերոց.

Ասէ տէր· Տր մի՛ սրտ·

Մէջ Աւետարանէն Յի Քի որ ըստ Յօհան·

Տէրն մեր Յս Քս·

Ամէն ամէն ասեմ ձեզ, եթէ ոչ կերիջիք զմարմին որդւոյ մարդոյ, և արբջիք զար իւն նր, ոչ ունիք կեանս յանձինս։ Որ ուտէ զմարմին իմ, և ըմպէ զարիւն իմ, ունի զկեանս յաւիտենականս. և ես յա-



րու

րուցից զնա յաւուրն յետնում: Զի մար-
մին իմ՝ ճշմարիտ կերակուր է, և արիւն
իմ՝ ճշմարիտ ըմպելի է: Որ ուտէ զմար-
մին իմ, և ըմպէ զարիւն իմ, նա յիս բնա-
կեսցի, և ես ՚ի նմա: Որպ̃ առաքեաց զիս
կենդանին Հայր, և ես կենդանի եմ վ̃ն
Հօր. և որ ուտէ զիս՝ և նա կեցցէ վ̃ն
իմ: Այս է հացն որ յերկնից իջեալ.
ոչ որպ̃ կերան հարքն ձեր զմանանայն՝
և մեռան. որ ուտէ զհացս զայս՝ կեցցէ
յաւիտեան:

Եւ ապա ասէ զՀաւատամքն, և զնորէն քա-
րոզն, և զաղօթքն. և Հայր մեր:

Եւ ապա, Որ կազմեցեր սեղա՛ն խոր:
Տայ զս̃բ խորհուրդն ահեղ [illegible], և ասէ
զաղօթս:

Գոհանամք զքէն Հայր տ̃ն մերոյ յ̃ի
ք̃ի, որ արժանի արարեր զմեզ երկնաւոր
պարգևացս այսոցիկ՝ կենարար մարմնոյ
և արեան միածնի քո: Աղաչեմք զքեզ
տ̃ր, մի՛ լիցի սա մեզ ՚ի դատապարտութ̃ի
վ̃ն բազում յանցանաց մերոց. այլ եղիցի
սա մեզ յառողջութ̃ի հոգւոյ և մարմնոյ.
՚ի զգաստութ̃ի խորհրդոց, և ՚ի կատա-

րուժն ա՟մ գործոց առաքինութե։ Ո՟վ զի սրբեսցէ զսորա միտս և զշունչս, և անուանեսցի տաճար ս՟բյ երրորդութեդ՝ առ՚ի գտանել զողորմութի առաջի քո։ Նու գոհանալով փառաւորել զքեզ հ՟ր որդւոյ և ընդ ս՟բ հոգ։

Ա՟մէ խաչիւս աղաչեսցուք զտ՟ր։
Պահպանիչ և ։ Հայր մեր որ ։

Նո-րէ չափ, սաս՛ փարատեցո։

Կանոն Գիշեր ժամու աղօթից՝ որ կատարի ՚ի վ՟ր ծանր հիւանդաց, ՚ի բժշկութ ցաւոց՝ ՚ի քաւութ յանցանաց։

Հայր մեր որ յեր։

Աղաչեմ զտ՟ր զլոյս քո և զճշմարտութ քո. զի առաջնորդեսցեն ինձ և հանցեն զիս ՚ի լեառն ս՟բ և ՚ի յարկս քո։ Մտից առաջի սեղանոյ ա՟յ առ ա՟ծ. որ ուրախ առնէ զմանկութ իմ։ Խոստովանի եղէց քեզ օրհնութբ ա՟ծ ա՟ծ իմ։ Ը՚րդ՝ ընդէր տրտում ես անձն իմ.

կամ ընդէ՞ր խռովես զիս · յուսամ առ
ա̅ծ , խոստովանեմ նմա · փրկիչ երե-
սաց իմոց ա̅ծ է ։

Փառք Հօր և ։ Այժմ ևս խաղա ։

Օրհնութի̅ և ։

Եկեսցէ ՚ի վ̅ր իմ ողորմութի̅ քո տ̅ր ,
և փրկութի̅ քո ըստ բանի քում ·
Տաց պատասխանի որք նախատեն զիս
բանիւք · զի ես ՚ի բանս քո յուսացայ ·
Մի՛ ՚ի բացեայ առներ ՚ի բերանոյ իմմէ
զբան ճշմարտութե̅ մինչև յոյժ · զի յի-
րաւունս քո յուսացայ ։ Պահեցից զօ-
րէնս քո ՚յա̅մ ժամ , յաւիտեան և յա-
ւիտեանս յաւիտենից ։ Գնայի ես յան-
դորրու , զի զպատուիրանս քո խնդրեցի ։
Խօսէի զվկայութի̅ս քո առաջի թագա-
ւորաց , և ոչ ամաչէի ։ Խորհէի ՚ի պատ-
ուիրանս քո զոր սիրեցի · Համբարձի
զձեռս իմ ՚ի պատուիրանս քո զոր սի-
րեցի · և խորհէի յարդարութե̅ քում ։
Յիշեա զբան ծառայի քո , յոր և յու-
սացուցեր զիս · Այս մխիթարեաց զիս
՚ի խոնարհութե̅ իմում · զի բան քո կեցոյց
զիս ։ Ամբարտաւանք անիրաւեցան յիս
յոյժ ,

յոյժ, այլ յօրինաց քոց ես ոչ խոտորե-
ցայ: Յիշեցի զիրաւունս քո յաւիտե-
նից տ̅ր, և մխիթարեցայ: Տրտմութի̅ կա-
լաւ զիս 'ի մեղաւորաց, և ոյք թողին
զօրէնս քո: Գովելի են ինձ իրաւունք
քո, 'ի տեղւոջ պանդխտութե̅ իմոյ: Յիշե
ցի 'ի գիշերի զանուն քո տ̅ր. և պահեցի
զօրէնս քոյ: Այս եղև ինձ ճանապարհ
'ի կեանս. զի զարդարութի̅ս քո խնդրեցի:
Զանօրէնս ատեցի, և զօրէնս քո սի-
րեցի: Օգնական և փրկիչ իմ ես դու.
և ես 'ի բանս քո յուսացայ: Ի բաց
եղերուք յինէն չարք. և քննեցից զպատ
ուիրանս ա̅յ իմոյ: Օգնեա ինձ ը̅ս բանի
քում, և կեցո զիս. և մի յամօթ առներ
զիս 'ի յուսոյ իմմէ: Օգնեա ինձ, և
ապրեցո զիս. և խորհեցայց զիրաւունս
քո յա̅մ ժամ: Անարգեցեր զամենես-
եան՝ որք ապստամբք եղեն յարդարութե̅ց
քոց. զի անիրաւութե̅ էին խորհուրդք
ն̅ց: Յանցաւորս համարեցայ զա̅մ մե-
ղաւորս երկրի. վասն այսորիկ սիրեցի
զպատուիրանս քո: Բևեռեա ընդ եր-
կիւղ քո զմարմինս իմ. զի 'ի դատաստա

նաց քոց երկեայց յոյժ։ Մերձեցին
խնդրուածք իմ առաջի քո տ՟ր. ը՟ստ բանի
քում իմաստուն արա զիս։ Մտցեն ա-
ղօթք իմ առաջի քո տ՟ր. և բանիւ քով
փրկեա՛ զիս։ Բղխեսցեն շրթունք իմ
զօրհնութիւն քո, յորժամ ուսուսցես ինձ
զարդարութիւն քո։ Խօսեսցի լեզու իմ
զբանս քո. զի ա՟մ պատուիրանք քո ար-
դարութ՟ի են։ Եղիցի ձեռն քո ՚ի կեցու-
ցանել զիս. զի զպատուիրանս քո ընտ-
րեցի։ Ցանկացայ փրկութ՟ե քում տ՟ր.
և օրէնք քո խօսք իմ էին։ Կեցցէ անձն
իմ օրհնեսցէ զքեզ. և իրաւունք քո օգ-
նեսցեն ինձ։ Տո՛ւր զօրութ՟ի ծառայի
քոյ. կեցո՛ զորդի աղախնոյ քոյ. և արա՛
առ իս նշան բարութ՟ե։ Տեսցեն ատելիք
իմ և ամաչեսցեն. զի դու տ՟ր օգնեցեր
ինձ, և մխիթարեցեր զիս։ Փառք հօր
և որդւոյ և։

Ս՟աղբան։

Անձն իմ ՚ի ձեռս քո է յա՟մ ժամ. և
՚ի տ՟է խաչ քո յուսացեալ եմ. Թագա-
ւոր երկնաւոր՝ զբազմութ՟ի ս՟ց քոց բա-
րեխօս ունիմ առ քեզ, որ երկայնամիտդ

 ես

ես առ ամենեսեան, մի՛ անտես առներ
զապաւինեալս 'ի քեզ, այլ պահեա՛ պատ
ուական և սբ̃ խաչիւ քո 'ի խաղաղութե̃:
Ես ասացի 'ի վերանալ յինէն աւուրց
իմոց, թէ գնացի ես 'ի դրունս դժո-
խոց: Թողի զա̃մ յետին իմ, և ասացի՝
թէ այլ ոչ ևս տեսից զփրկութի̃ ա̃ն յերկ
րին կենդանեաց. և ո՛չ ևս տեսից ըզ
մարդ բնակչօք իւրովք հանդերձ: Պա
կասեցայ ես յազգատոհմէ իմմէ. այսու-
հետև թողի լքի զա̃մ զկեանս իմ: Ել
գնաց՝ մեկնեցաւ յինէն հոգի իմ, ոպ̃
զայն որ քակէ զտաղաւար. և եղէ ես
ոպ̃ զոստայն սատարաց՝ մերձ 'ի հատանիլ:
Յաւուր յայնմիկ մատնեցայ ես յառա
ւօտէ ոպ̃ 'ի ձեռս առիւծու. այնպէս
խորտակեաց մանրեաց զոսկերս իմ. զի
յառաւօտէ մինչ 'ի գիշեր մատնեցայ:
Ոպ̃ ծիծառն՝ այնպէս ճչեցի, ոպ̃ զա-
ղաւնի՝ այնպէս մնչեցի. զի նուաղեցան
աչք իմ 'ի տեսանելոյ: Հայեցայ 'ի բար
ձունս առ տր̃ ա̃ծ իմ, որ փրկեաց զիս.
և փարատեցոյց յինէն զցաւս անձին ի-
մոյ: Տր̃՝ վս̃ այսօրիկ պատմեցաւ քեզ:



զոր

զարթուցեր զանձն իմ, դարձուցեր զհոգի իմ. մխիթարեցայ և կեցի։ Ահա 'ի խաղաղութի դարձաւ դառնութի իմ. փրկեցեր զանձն իմ, զի մի՛ կորեայց, և ընկեցեր յետոյ զա՟մ զմեղս իմ։ Զի ոչ թէ որք 'ի դժոխս են, խոստովան առնին առ քեզ. և ոչ մեռեալք օրհնեսցեն զքեզ, և ոչ յուսասցին 'ի ճշմարտութիւն քո ամենեքեան, որք իջանեն 'ի դժոխս։ Այլ կենդանիքս օրհնեսցուք զքեզ՝ տ՟ր. որ՟պ և ես այսուհետև մանկունս ծնայց, որք պատմեսցեն զարդարութիւն քո տ՟ր փրկութե իմոյ։ Եւ ոչ ևս դադարեցից օրհնել զքեզ յօրհնութի նոր զա՟մ աւուրս կենաց իմոց՝ յանդիման տաճարին ա՟յ։ Փառք Հօր և որ։

Սաղմոս։

Յոյս կենդանութե։ Մարդասէր տ՟ր։

Քարոզ։

Եւ ևս խաղաղութե զտ՟ր աղաչ.

Վ՟ն 'ի վերուստ խաղաղութե և փրկութե անձանց մերոց՝ զտ՟ր։ Եւ ևս վ՟ն հիւանդիս այս անուն որ յուսացեալ է կոչել զանուն տ՟ն ա՟յ՝ և զզօրութի ն՟ր



'ի

՚ի յօգնութիւն և ՚ի բժշկութիւն հոգւոյ և մարմնոյ իւրոյ. որպէս զի ապրեսցի և կեցցէ, և վերստին նորոգեսցի քահանայական աղօթիւք ձերովք՝ և կարողութեան Աստուծոյ, զն̃ր. Զամենասուրբուհի զԱստուածածինն՝ զմիշտ կոյսն մարիամ՝ հանդերձ ամենայն սրբովք, յիշելով զն̃ր. Եւ ևս միա. Զանձինս մեր. Ողորմեա մեզ տէր.

Մաղթ.

Տէ՛ր որ ողորմութեամբ քո բժշկես զբեկումն հոգւոց և մարմնոց մերոց, բժշկեա՛ զամենայն ախտս և զհիւանդութիւնս հոգւոյ և մարմնոյ այս անուն ծառայի քո. զի փառաւորեսցի ամենասուրբ անուն քո. զի քո՛ է ողորմիլ և կեցուցանել Աստուած մեր. Եւ քեզ փառս մատուցանեմք՝ հօր և որդւոյ՝ և հոգւոյ.

Քարոզ.

Եւ ևս խաղաղութեան զտէր աղաչեսցուք, ընկա՛լ կեցո՛ և ողորմեա՛.

Օրհնեալ տէր.

Օրհնութիւն և փառք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ.

Ողորմեա՛ ինձ ա՟ծ ըստ մեծի ողորմութեան քում. ըստ բազում գթութեան քում քաւեա՛ զանօրէնութիւնս իմ։ Առաւել լուա՛ զիս յանօրէնութենէ իմմէ. եւ ի մեղաց իմոց ս՟բ արա զիս։ Զանօրէնութիւնս իմ ես ինքնին գիտեմ. եւ մեղք իմ առաջի իմ են յա՟մ ժամ։ Քեզ միայն մեղայ տ՟ր, եւ չար առաջի քո արարի։ Որ՟պ արդար երեւեսցիս ի բանս քո, եւ յաղթող ի դատել դատս։ Անօրէնութեամբ յղացայ, եւ ի մեղս ծնաւ զիս մայր իմ։ Դու տ՟ր զճշմարտութիւն սիրեցեր. զանյայտս եւ զծածկեալս իմաստութեան քո յայտնեցեր ինձ։ Ցօղեա՛ զիս մշտկաւ, եւ ս՟բ եղէց. լուա՛, եւ քան զձիւն սպիտակ եղէց։ Լսելի արա ինձ զցնծութիւն եւ զուրախութիւն, եւ ցնծասցեն ոսկերք իմ տառապեալք։ Դարձո՛ զերեսս քո ի մեղաց իմոց. եւ զա՟մ անօրէնութիւնս իմ քաւեա՛ յինէն։ Սիրտ ս՟բ հաստատեա՛ յիս ա՟ծ, եւ հոգի ուղիղ նորոգեա՛ ի փորի իմում։ Մի՛ ընկենուր զիս յերեսաց քոց, եւ զհոգի քո ս՟բ մի՛ հաներ յինէն։ Տո՛ւր ինձ ցնծութիւն փրկութեան քո, եւ հոգւով պետութեան քո հաստա-



տեա՛

տեա՛ զիս։ Ուսուցից անօրինաց զճանա-
պարհս քո. և ամբարիշտք առ քեզ դարձ-
ցին։ Փրկեա՛ զիս յարենէ ա̃ծ ա̃ծ փըր-
կութեան իմոյ. ցնծասցէ լեզու իմ յարդա-
րութեան քում։ Տ̃ր եթէ զշրթունս իմ
բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւ
քո։ Թէ կամեցեալ էիր պատարագս
մատուցանէաք. բայց դու ընդ ողջակէզս
իսկ ո՛չ հաճեցար։ Պատարագ ա̃յ հոգի
խոնարհ. զսիրտ ս̃բ և զհոգի խոնարհ՝
ա̃ծ ո՛չ արհամարհէ։ Բարի՛ արա տէր
կամօք քովք սիօնի. և շինեսցին պա-
րիսպք երուսաղէմի։ Յայնժամ հա-
ճեսցիս ընդ պատարագս արդարութե,
ուխտից պատարագս հանցեն 'ի սեղան
քո զուարակս։ Փառք հօր և.

Շարական. ա̃ձ։

ո Հա՛յր բազումողորմ. խոստովանիմ առ
քե՛զ ո՛ղ զանձնական որդին. թող ինձ
ըզմեղս իմ. և ողորմեա։ Տ՛ր որ դըթա-
ցար 'ի կինըն քանանացի. դըթա և յիս
'ի մեղաւորս. և ողորմեա։ Տ՛ր որ դարձու-
ցեր ըզմաքսաւորն 'ի գիտուն ճշմար

տութիւն · դարձո և զիս ընդունելեալս ·
և ողորմեա ·

Յոյս և յարութիւն ազգի մարդկան Քրիստոս Աստուած Եւս
Աստուած · զհիւանդութիւն հոգւոյ իմոյ կեն
դանացո · որպէս երբեմն զՂազար կենդանացուցեր ·

Որ չարչարանս և ըզմահ յանձն առեր
կենդանատու մարմնով · զհիւանդութիւն
հոգւոյ իմոյ առողջացո · որպէս երբեմն ·

Առ քեզ ապաւինիմք · խորան և
տաճար Աստուծոյ բանին · Մարիամ մայր
եւ կոյս · բարեխօսեա առ Քրիստոս վասն
անձանց մերոց ·

Քարոզ ·

Լուիցէ տէր ձայնի աղաչանաց մերոց սրկ
բարեխօսութեամբ Սուրբ Աստուածածնին, և խնդրելոյ
'ի վերայ մեր ողորմութեան և գթութեան իւր ·
ամենակալ տէր Աստուած մեր կեցուսցէ և
ողորմեսցի ·

Ընկալ տէր զաղաչանս մեր բարեխօսութեամբ քհ
Սուրբ Աստուածածնին, անարատ ծնողի միածնի
որդւոյ քո, և աղաչանօք ամենայն սրբոց · լուր
տէր և ողորմեա, ներեա, քաւեա և թող

զմեղս մեր․ արժանաւորեա՛ գոհանալով
փառաւորել զքեզ ընդ որդւոյ և ընդ
սրբոյ հոգւոյ։

Ես ասացի տէր ողորմեա՛ ինձ, բժշկեա՛
զանձն իմ, ես մեղայ քեզ։ Երանի որ
խորհի զաղքատն և զտնանկն, յաւուր
չարի փրկէ զնա տէր։

Յակովբայ առաքելոյն ՚ի կաթողիկեայց թղթոյն
է ընթերցուած։

Խոստովան եղերուք միմեանց զմեղս,
և աղօթս արարէք ՚ի վերայ միմեանց, որպէս
զի բժշկեսջիք․ քանզի յոյժ զօրաւոր են
աղօթք արդարոց յօգնականութեան։ Եղիա
մա՛րդ էր կիրք զմեզ չարչարելի․ և յա-
ղօթս եկաց, և ո՛չ տեղեաց յերկիր զերիս
ամս և զվեց ամիս։ և դարձեալ եկաց
յաղօթս՝ և ետո՛ւն երկինք զանձրև՝ և
բուսոյց երկիր զպտուղ իւր։ Եղբա՛րք
իմ, եթէ ոք ՚ի ձէնջ մոլորեսցի ՚ի ճանա
պարհէ ճշմարտութեան, և դարձուսցէ ոք
զնա․ գիտասցէ՛ զի որ դարձուսցէ զմե-
ղաւորն ՚ի մոլորութենէ ճանապարհէն
իւրմէ, փրկեսցէ զոգի իւր ՚ի մահուա
նէ, և ծածկեսցէ զբազմութիւն մեղաց։



Սւէ

Ալէ ալէ։ Տէր մի՛ սրտմտութեամբ քով յանդիմաներ զիս, եւ մի՛ բարկութեամբ քով խրատեր զիս։ Ողորմեա ինձ Տէր, զի հիւանդ եմ ես, բժշկեա զանձն իմ, զի խռովեցան ոսկերք իմ։

Մէջ Աւետարանէն ՅԵ ՎԻԵ՝ որ ըստ Մար։
Տէրն մեր ՅՍ ՔՍ։

Կոչեաց առ ինքն զերկոտասանսն, եւ սկսաւ առաքել զնոսա երկուս երկուս. եւ տայր նոցա իշխանութիւն ՚ի վերայ այսոց պղծոց։ Եւ պատուիրեաց նոցա՝ զի մի՛ ինչ բարձցեն ՚ի ճանապարհ, բայց միայն գաւազան. մի՛ պարկ, մի՛ հաց, մի՛ պղինձ ՚ի գօտիս. այլ ագանել հողաթափս, եւ մի՛ զգենուցուք ասէ՝ երկուս պարեգօտս։ Եւ ասէր ցնոսա. յոր տուն մտանիցէք, անդէն օթեվանս կալջիք՝ մինչեւ ելանիցէք անտի։ Եւ՛ որ ոչ ընկալցին ըզ ձեզ, եւ ո՛չ լուիցեն ձեզ, յորժամ ելանիցէք անտի՝ թօթափեսջիք զփոշի ոտից ձերոց ՚ի վկայութիւն նոցա. Եւ ելեալ քարոզէին՝ զի ապաշխարեսցեն. եւ դեւս բազում հանէին՝ եւ օծանէին իւղով զբազում հիւանդս, եւ բժշկէին զնոսա։

Փառք քեզ տէր ած մեր:

Հաւատամք ՚ի մի ած Հայրն ամենակալ. յարարիչն երկնի և երկրի. երևելեաց և աներևութից: Եւ ՚ի մի տր յս քս Որդին այ. ծնեալ յայ Հօրէ միածին՝ այսինքն յէութէն Հօր: Ած յայ. լոյս ՚ի լուսոյ. ած ճշմարիտ յայ ճշմարտէ: Ծնունդ և ոչ արարած: Նոյն ինքն ՚ի բնութէն Հօր. որով ամ ինչ եղև յերկինս և ՚ի վր երկրի. երևելիք և աներևոյթք: Որ յաղագս մեր մարդկան և վն մերոյ փրկութն իջեալ ՚ի յերկնից մարմնացաւ մարդացաւ ծնաւ կատարելապէս ՚ի մարիամայ սբյ կուսէն Հոգւովն սրբով: Որով էառ զմարմին զհոգի և զմիտ. և զամ որ ինչ է ՚ի մարդ՝ ճշմարտապէս և ոչ կարծեօք: Չարչարեալ, խաչեալ, թաղեալ. յերրորդ աւուր յարուցեալ. ելեալ ՚ի յերկինս նովին մարմնովն՝ նըստաւ ընդ աջմէ Հօր: Գալոց է նովին մարմնովն և փառօք Հօր ՚ի դատել զկենդանիս և զմեռեալս. որոյ թագաւորութէն ոչ գոյ վախճան: Հաւատամք և ՚ի սբ Հոգին. յանեղն և ՚ի կատարեալն:

Որ խօսեցաւ յօրէնս և 'ի մարգարէս և
յաւետարանս։ Որ էջն 'ի յորդանան․
քարոզեաց զառաքեալսն․ և բնակեցաւ 'ի
սբսն․ Հաւատամք և 'ի մի միայն ընդ-
հանրական և յառաքելական եկեղեցի․
'Ի մի մկրտութի․ յապաշխարութի․ 'ի քաւ-
ութի և 'ի թողութի մեղաց․ 'Ի յարութի
մեռելոց․ 'ի դատաստանն յաւիտենից․
հոգւոց և մարմնոց․ Յարքայութին երկ
նից, և 'ի կեանսն յաւիտենականս։

Իսկ որք ասեն՝ էր երբեմն յորժամ ոչ
էր Որդի․ կամ էր երբեմն յորժամ ոչ
էր սբ Հոգի։ կամ թէ՝ յոչէից եղեն,
կամ յայլմէ էութէ ասեն լինել զորդին
այ, և կամ զսբ հոգին։ և թէ փոփո-
խելիք են կամ այլայելիք՝ զայնպիսիսն
նզովէ կաթուղիկէ և առաքելական ե-
կեղեցի․

'Ի սորին Լուսաւորչէն մերմէ ասացեալ։

Իսկ մեք փառաւորեսցուք որ յառաջ
քան զյաւիտեանս․ երկրպագանելով
սբյ Երրորդութեն և միոյ ածութեն,
Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ,
այժմ և միշտ և․

Քարոզ։

սրկ Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք,
ընկալ կեցո և ողորմեա։
Օրհնեալ Տէր։

քհ Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և
Հոգւոյն Սրբոյ, այժմ և միշտ։
Ողորմեա ինձ Աստուած ըստ մեծի ողորմութեան։
շփոխն չևան սաս։
Շարական. Տէկ։

ո Ի ծո՛վ կե՛նցաղո՛յս հա՛նա՛պա՛զ զի՛ս ա՛
լէկո՛ծէ։ Մ՛րրըկեա՛լ ա՛լի՛ք թշնա՛
մի՛ն ինձ յա՛րո՛ւցա՛նէ։ Նա՛ւա՛պե՛տ բա՛
րի լե՛ր ա՛նձի՛ն իմո՛յ ա՛պա՛ւէն՛։

Եւս Ա՛ղաչե՛ցի՛ զողո՛րմողն՛ իմ՛ Տէ՛ր Ած՝. և՛
լո՛ւա՛ւ ձա՛յնի՛ խնդրո՛ւա՛ծո՛ց իմոց. զե՛
նո՛ւա՛ծե՛ցա՛ն ա՛յժմ իմ՛ 'ի՛ տե՛սա՛նե՛լո՛յ. և՛
յի՛նէն փա՛րա՛տե՛ցո՛յց զցա՛ւս ա՛նձի՛ն ի՛
մո՛յ։ Ո թա՛գա՛ւո՛րդ՛ երկի՛ն քո՛ բա՛րեբա՛
նե՛ցէք. ո՛ր 'ի յա՛նձն էա՛ռ զմա՛հ խա՛չի՛
և խա՛փա՛նե՛ա՛ց զմա՛հո՛ւ թա՛գա՛ւո՛րո՛ւ
թի՛ն՝. և յի՛նէն. փո՛ւթա՛ցի՛ր Տէր յօ՛գ
նո՛ւթի՛ սո՛ւրբ Ա՛ծա՛ծի՛ն. Ա՛ղա՛չե՛մ զո՛ւ 'ի՛
քէ՛ն

քէն ընդ մարմնացեալ բանն նմին․ զի յահաւոր և ՚ի միւսանգամ գալըստ եանն քոյ․ պարգևեսցէ մեզ ընդ
կեանսն յաւիտենից։

Քարոզ․

Լուիցէ տէր ձայնի աղաչանաց մերոց բարեխօսութբ սբ ածածնին․ և իջանելոյ ՚ի վր մեր ողորմութն և գթութն տն այ․ ամենակալ տէր աձ մեր կեցուսցէ և ողորմեսցի ։ սրկ

Ընկալ տէր զաղաչանս մեր բարեխօ․ քհ

Տր հովուեսցէ զիս, և ինձ ինչ ոչ պակասեսցի։ Օծեր իւղով զգլուխ իմ, բաժակ քո ոպ անապակ արբեցոյց զիս։

Յօհաննու առաքելոյն ՚ի կաթողիկեայց թղթոյն
է ընթերցուածս․

Որդեակք՝ եթէ ասիցեմք՝ եթէ մեղս ինչ մեք ոչ ունիմք, զանձինս խաբեմք․ և ճշմարտութի ՚ի մեզ ոչ գոյ։ Ապա եթէ խոստովան լինիցիմք զմեղս մեր, հաւատարիմ է նա և արդար՝ առ ՚ի թողուլ մեզ զմեղս մեր, և սրբել զմեզ յամ անիրաւութէ․ Եթէ ասիցեմք՝ եթէ ոչինչ


մե

մեղաք, սուտ առնեմք զնա. և բանն նր՟
ոչ է ՚ի մեզ։ Որդեակք իմ, զայս գրեմ
ձեզ՝ զի մի մեղիցէք. և եթէ մեղիցէ
ոք, ունիմք բարեխօս առ ա՟ծ զյ՟ս ք՟ս
զարդարն և զանարատ։ և նա է քաւութի՟
մեղաց մերոց. և ոչ եթէ մերոցն միայն՝
այլ ա՟մ աշխարհի։ Նովաւ գիտեմք՝
եթէ ծանեաք զնա, եթէ զպատուիրանս
նր՟ պահիցեմք։ Որ ասիցէ՝ եթէ ծան-
եայ զնա, և զպատուիրանս նր՟ ոչ պա-
հիցէ, սուտ է, և ճշմարտութի՟ ՚ի նմա ոչ
գոյ։ Իսկ որ պահէ զբան նր՟, արդարև
՚ի նմա է կատարեալ սէրն ա՟յ։ Այսուիկ
ճանաչեմք՝ եթէ ՚ի նմա եմք։ Որ ասիցէ
՚ի նմա բնակել, այնպէս պարտի գնալ՝
որ՟պ նայն գնաց։

Ալէ ալէ։ Զայնիւ իմով ես առ տէր
կարդացի, ձայնիւ իմով առ ա՟ծ. և նայ-
եցաւ առ իս։ Յաւուր նեղութե՟ իմոյ
զա՟ծ խնդրեցի ձեռօք իմովք. և ՚ի գի-
շերի առաջի նր՟ ոչ խաբեցայ։

ԱՂ՟Յ ԱՄԵՆԱՊԱՀԻՍ ՅԻ՟ ՔԻ՟ որ ընդ Պ[illegible]։
Տէրն մեր Յ՟ս Ք՟ս։

Եւ մտեալ շրջէր ընդ Երիքով. և ահա՝
այր մի անուն կոչեցեալ զակքէոս. և

նա էր մաքսապետ. և ինքն մեծատուն. և խնդրէր տեսանել՝ թէ ով իցէ յս̃, և ոչ կարէր ՚ի բազմութէն, զի կարճ էր հասակաւ։ Եւ ընթացեալ յառաջս, ել ՚ի ժանտաթզենին զի տեսանիցէ զնա. քանզի ընդ այն իսկ անցանելոց էր։ Իբրև եկն ՚ի տեղին. հայեցաւ ՚ի վեր յս̃ և ասէ ցնա. զակքէ փութա՝ էջ այտի, զի այսօր ՚ի տան քում արժան է ինձ ագանել։ փութացաւ և էջ՝ և ընկալաւ զնա ուրախութբ̃։ Իբրև տեսին ամենեքին, տրտնջէին և ասէին՝ թէ առ առն մեղաւորի եմուտ լուծանել։ Եկն՝ եկաց զակքէոս՝ և ասէ ցտր̃. տր̃՝ ահա զկէս ընչից իմոց տաց աղքատաց. և եթէ զոք զրկեցի, հատուցից չորեքկին։ Եւ ասէ ցնա յս̃. այսօր եղև փրկութի տանս այսմիկ. քանզի և սա որդի աբրահամու էր։ Զի եկն որդի մարդոյ խնդրել և կեցուցանել զկորուսեալն.

Քարոզ։

Եւ ես խաղաղութն զքր̃ աղաչ։ սրկ

Վս̃ ՚ի վերուստ խաղաղութն և փրկութն անձանց մերոց զքր̃ աղաչ։

Եւ ևս վ՟ն հիւանդիս այսորիկ որ յուսացեալ է կոչել զանուն տ՟ն զ՟որ:

Աղօթք:

քհ Անսկիզբն ա՟ծ՝ ս՟բդ ս՟բց, որ զմիածին քո որդի առաքեցեր բժշկել զա՟մ ախտս հոգւոյ և մարմնոյ մերոյ. առաքեա զհոգին քո ս՟բ, և սրբեա զայսանուն ծառայս քո, և ազատեա յա՟մ մեղաց. զի ողորմած ես և գթած: Եւ քեզ փառս մատուցանեմք՝ ընդ որդւոյ և ընդ ս՟բյ":

Քարոզ:

սրկ Եւ ևս խաղաղութե զ՟տր աղաչեսցուք, ընկալ կեցո և ողորմեա:

Օրհնեալ տ՟ր:

քհ Օրհնութիւն և փառք հօր և որդւոյ և հոգւոյն ս՟բյ այժմ և.

Ողորմեա ինձ ա՟ծ ըստ մեծի ողորմու.

զփոխն չիան տաս՛:

Շարական. ը՟ձ:

ո Մեղաք մինչև յերկինս և զարդար ըզցասումն քո շարժեցաք ի մեզ. այր ըստ մեծի քում ողորմութեանդ. ողոր



մեա

մեամ մեզ։ Իջեալ մինչ ՚ի դժոխս ընդ կապեալսն յանօրէնութեն մերում. որ յիշեալ ըղձբինա արեան որդւոյ քո. և ողորմեա։ Հանդիպեա ՚ի մեզ որ նշանաւ խաչի քո. զընդդիմամարտ և զաներևոյթ դաղանն. և մի տար յապականութիւն զքո ժառանգութիւն։

Ողջերկնային քերովբէիւք մարգարէմ հաւատացեալս սրբոյ խորհրդ. որ վէմ իմ խոնարհեցար ՚ի յերկնից. յոյս կենդանութեան և փրկութեան իմոյ որ։ Որ ՚ի խաչին բազմեր ընդդատակնիք մահու. տարածելով ըղբաղումդ կուսլս քո. արձակեա և զմեզ ՚ի կապանաց բանսարկութեն. յոյս կեն։ Որ յամ աղգաց երանեցար սրբուհի և կոյս մարիամ. աղաչեա զաւ ՚ի քեն ընդմանրմանացեալն որդ. ապրեցուցանել ըզմեզ ՚ի սպառնալեաց գեհեննոյն։

Քարոզ։

Լուիցէ տէր ձայնի աղաչանաց մերոց սրբ բարեխօսութբ որ ածած"։



Որն

Քհ Ընկալ տէր զաղաչանս մեր բարեխօ։

Բարձր առնեմ զքեզ տ՟ր զի ընկալար
զիս. և ո՛չ ուրախ արարեր զթշնամին
իմ յիս։ Տ՟ր ա՟ծ իմ՝ կարդացի առ քեզ
և բժշկեցեր զիս. տ՟ր հաներ 'ի դժոխոց
զանձն իմ. փրկեցեր զիս յայնցանէ, որ
զիս. ի[illegible] իջանեն 'ի գուբ.

Պօղոսի առաքելոյն 'ի Կորնթացւոց երկրորդ
թղթոյն է ընթերցուած։

Եղբա՛րք՝ դուք տաճար ա՟յ կենդանւոյ
էք. ո՟պ ասաց ա՟ծ, թէ բնակեցա՛յց 'ի
ն՟ս, և գնացից 'ի ն՟ս. և եղէց ն՟ց ա՟ծ,
և նոքա եղիցին իմ ժողովուրդ։ Վ՟ն
որոյ ելէ՛ք 'ի միջոյ ն՟ց և մեկնեցարո՛ւք,
ասէ տ՟ր. և 'ի պիղծս մի՛ մերձենայք. և
ես ընկալայց զձեզ. և ես եղէց ձեզ 'ի
հա՛յր, և դուք եղիջիք ինձ յուստերս և
'ի դստերս, ասէ տ՟ր ամենակալ։ Իսկ
որովհետև զայս աւետիս ունիմք սի՛րե
լիք, սրբեսցո՛ւք զանձինս մեր յա՟մ պղծ֊
ծութե՟նէ մարմնոյ և հոգւոյ. կատարես
ցո՛ւք զսրբութի՟ն ահի՟ւն ա՟յ։

Ա.լէ ալէ։ Երանի որ խորհի զաղքատն
և զտնանկ, յաւուր չարի փրկէ զնա տ՟ր։
Սէ

## Սբյ Աւետարանն ՅԻ ՔԻ որ ըստ Մրկ։
## Տէրն մեր ՅՍ ՔՍ։

Գնայց ընդ նմա։ երթայր և ժողովուրդ բազում զհետ նր, և նեղէին զնա։ Եւ կին մի էր 'ի տեռատեսութն արեան զերկոտասան ամ, և յոյժ վշտացեալ 'ի բազում բժշկաց, և ծախեալ զինչս իւր զամ, և չէր ինչ օգտեալ, այլ ևս առաւել զայրացեալ. Իբրև լուաւ զյսէ, եկն 'ի մէջ ամբոխին յետոյ՝ և բուռն եհար զհանդերձէ նր. քանզի խորհէր 'ի միտ, թէ միայն մերձեցայց 'ի հանդերձս նր փրկեցայց. Եւ վաղվաղակի ցամաքեցաւ աղբիւր արեան նր. և գիտաց 'ի մարմին իւր՝ թէ բժշկեցաւ 'ի տանջանացն։ Եւ անդէն վաղվաղակի՝ գիտաց յս յանձն իւր զզօրութին որ ել 'ի նմանէ, դարձաւ յամբոխն և ասէ. ո՞վ մերձեցաւ 'ի հանդերձս իմ։ Եւ ասեն ցնա աշակերտքն. տեսանես՝ զի ամբոխդ նեղէ զքեզ, և ասես թէ՝ ո՞վ մերձեցաւ 'ի հանդերձս իմ։ Եւ շուրջ հայէր տեսանել՝ թէ ո՞ զայն արար։ Եւ կինն՝ զարհուրեալ և դողացեալ վասն որոյ



գիտն

գաղտն տրար. քանզի գիտէր զինչ եղե-
նելոց. եկն՝ անկաւ առաջի նր, և ասաց
զնմ իւրն ստուգութբ։ Աու յո՛ աստէ-
ցնա. դուստր՝ հաւատք քո կեցուցին
զքեզ. երթ ՚ի խաղաղութի, և եղիջիր
ողջ ՚ի տանջանաց քոց։

Քարոզ.

տրկ Աու ես խաղաղութե զտր աղա։
Մո ՚ի վերուստ խաղաղութե և փրկութե
անձանց մերոց զտէր աղա։
Աու ես վն հիւանդիս այսմանն որ յու-
սացեալ է կոչել զանուն տն զտր.

Աղօթք.

քհ Տր մեծ և սքանչելագործ. որ պահես
զուխտս քո, և տաս զողորմութի սիրել-
եաց քոց, և զթողութի մեղաց ՚ի ձեռն
մբյ որդւոյ քո յի քի. որ նորոգեաց
զմեզ ՚ի մեռելութե մեղաց մերոց։ Դու
ես որ լուսաւոր առնես զկոյրս, և կանգ-
նես զանկեալս։ Դու հաներ զմեզ ՚ի
խաւարէ, և ՚ի ստուերաց մահու. ասելով
ցկապեալս՝ թէ ելէք, և որք ՚ի խաւա-
րին՝ թէ յայտնեցարուք. յորս ծագեաց

լոյս գիտութեան օծելոյ քո, որ եկն երևե֊ցաւ յերկրի, և ընդ մարդկան շրջեցաւ. և որք ընկալան զնա, ետ նոցա իշխանութի որդիս այ լինել. Դու տէր՝ փրկական աւազանին վերստին ծննդեանն զոր֊դեգրութի մեզ շնորհեցեր, և հաղորդս արարեր զմեզ սբ. անուան քո։ Դու ինքն տր ամի՝ Նոյեմ յայս անուն ծառայ քո, զի փրկեալ 'ի մեղաց, եղիցի արդա֊րացեալ 'ի քեզ, զգեցեալ զտր մեր յս քս։ Զի ողորմած և մարդասէր ես, և քեզ վայելէ։

Քարոզ.

Եւ ևս խաղաղութեան զտր աղաչեսցուք, Սրկ
ընկալ կեցո և ողորմեա.

Օրհնեալ տր.

Օրհնութի և փառք հօր և որդւոյ և Քհ
հոգւոյն սբյ, այժմ և.

Ողորմեա ինձ այ ըստ մեծի ողորմու.

զփոխն ըստ աւուր։

Շարական. Էկ։

Յայսմ ժամ. աղաչանք իմ այս է [illegible]ն. Ժ
'ի մեղաց իմոց սբ. արա զիս տր։ Յան

ցանկայց իմոց զարհուրելի սիրտ ի Տր.
աղաչեմ զքեզ թող ինձ Տր: Տրտմա-
ուայց իմոց մի լուեր Տր. զի պան-
դուխտ եմ ես անցաւոր երկրի:
օրհ Անմահ Թագաւոր որ կամիս զկեանս
ամ մարդկան. որ կարդան առ քեզ.
լուր աղաչանաց մերոց և նորոգեա
հոգւով գիտութե. Որ զառժամանա-
կեայ զցանկութիւն բարձեր ի մարմնոյն
եղե կենայ. մնչորն ջեռնաւոր ցուցանելով
նորա զհոգևորական առողջութի. լուր:
Անոխակալ և բարերարութ. բարե-
խօսութե սրբուհւոյ անարատ մօր
քո և կուսի. լուր:

Քարոզ:

սրկ Զմեծածինն և զամ սբս բարեխօս
արասցուք առ Հայր ի յերկինս, զի կա-
մեցեալ ողորմեսցի և գթացեալ կե-
ցուսցէ զարարածս իւր. ամենա.
քհ Ընկալ տէր զաղաչանս մեր բարեխօ.
Ած յօգնել ինձ նայեա, և Տր յընկերել
ինձ փութա: Ամաչեսցեն և յամօթ լիցին

որ խնդրէին զանձն իմ. դարձցին յետս և ամաչեսցեն որք խորհէին ինձ չար։

Պօղոսի առաքելոյն ՚ի Եփեսացւոց թղթոյն է ընթերցուածս ։

Եղբարք՝ աղաչեմ զձեզ ես որ կապեալս եմ ՚ի տէր, արժանի՛ գնալ կոչմանն յոր կոչեցարուք։ Ամենայն խոնարհութեամբ, և հեզութեամբ, և երկայնմտութեամբ՝ անսալ միմեանց սիրով փութալ պահել զմիաբանութիւն հոգւոյն յօդիւ խաղաղութեան. մի մարմին՝ և մի հոգի. որպէս և կոչեցարուք ՚ի մի յոյս կոչման ձերոյ։ Մի է տէր, մի հաւատք, մի մկրտութիւն։ մի աստուած, և հայր ամենեցուն, որ ՚ի վերայ ամենայնի, և ընդ ամենեսին, և յամենեսին ՚ի մեզ։ Իւրաքանչիւր ումեք ՚ի մէնջ տուեալ են շնորհք ըստ չափոյ պարգևացն քրիստոսի։

Ալէլուիա ալէլուիա ։

Դատ արա ինձ տէր՝ զի ես յանմեղութեան իմում գնացի, ՚ի տէր յուսացայ զի մի՛ եղէց հիւանդ ։

## ՍԲԾ Աւետարանէն ՅԻՍ ՔԻՍ որ ըստ Մատ․
## Տէրն մեր ՅՍ ՔՍ։

Ելեալ անտի յիւր գնայց ՚ի կողմանս Տիւրոսի և Սիդոնի․ Եւ ահա՝ կին մի քանանացի ՚ի սահմանաց անտի նց՝ ելեալ, աղաղակէր և ասէր․ ողորմեա ինձ Տր որդի Դաւթի, դուստր իմ՝ չարաչար դիւահարի։ Եւ նա ոչ ետ նմա պատասխանի։ Եւ մատուցեալ աշակերտքն նր՝ աղաչէին զնա և ասէին․ արձակեա զնա՝ զի աղաղակէ զհետ մեր։ Նա պատասխանի ետ և ասէ․ ոչ ուրեք առաքեցայ՝ եթէ ոչ առ ոչխարս կորուսեալս տանն Իսրայէլի․ Եւ նա մատուցեալ, երկիր պագանէր նմա և ասէր․ Տր՝ օգնեա ինձ։ Պատասխանի ետ նմա և ասէ․ ոչ է բարւոք առնուլ զհաց մանկանց՝ և արկանել շանց։ Եւ նա ասէ․ այո Տր, քանզի և շունք կերակրին ՚ի փշրանաց անկելոց ՚ի սեղանոյ տն իւրեանց։ Յայնժամ պատասխանի ետ նմա յս, և ասէ․ ով կին դու՝ մեծ են հաւատք քո, եղիցի քեզ որպէս և կամիս։ Եւ բժշկեցաւ դուստր նր ՚ի նմին ժամու։

Քարոզ:

Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչ: սրկ
Վասն ՚ի վերուստ խաղաղութեան և փրկութեան
անձանց մերոց զՏէր աղա:
Եւ ևս վասն հիւանդիս այս անուն որ յու-
սացեալ է կոչել զանուն Տն և:

Աղօթք:

Բարերար և մարդասէր տէր՝ որ զամ քհ
հիւանդութիւնս և զամ ախտս բժշկես.
բժշկեա՛ զայս անուն ծառայ քո. յարո՛ զսա
՚ի մահճաց ցաւոց. այց արա՛ ողորմութ
և գթութ քո. փարատեա՛ ՚ի սմանէ զամ
տկարութին և զհիւանդութին. զի յարուցեալ
քո կարող ձեռամբ, ծառայեսցէ քեզ
հանդերձ ամ գոհութ: Զի դու ես
ած՝ ած ողորմութեան և կեցուցիչ. և քեզ
մատուցանեմք զփառս հօր և որդւոյ և:

Քարոզ:

Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք, սրկ
ընկա՛լ կեցո՛ և ողորմեա՛:

Օրհնեալ Տէր:

Օրհնութիւն և փառք հօր և որդւոյ և քհ
հոգւոյն սբյ, այժմ և:

Ողորմեա ինձ Ած ըստ մեծի ողորմու։
զՓոխն ըստ ձայն աստ։

Շարական. Գձ։

ո Զամենապատկան ըզհոգեւոր ըզգանձըն
յամպականացու կենցաղոյս ծախեցի.
այլ առ քեզ միայն պաղատիմ բարերար
փրկիչ. խնայեա՛ ի մեղուցեալ ծառայս։
Զցանկ հոգւոյ իմոյ քակեցի եւ եղէ
անբերութեան կից որթ. այլ առ. Սատա
քանց եղէ ես որք զարմանենի պտղա
կորուս որք ձիթենի. այլ անյիշաչար եւ
անոխակալ փրկիչ. խնայեա։

Եռա [Ա]ռաչեցի զանկողնելի ընդհեծութիւն ան
բարեգութեան քո. եւ լուաւ ինձ ի
լերանէ սրբոյ իւրմէ. եւ հանան ըզկեանս
իմ յապականութենէ։ Ուրեաւց ըզմա
հու կարողութիւն. որ խաչեցաւ վասըն
մեր. եւ յարեաւ ի մեռելոց որ յամ
կարծօղ. փրկելով ըզկեանս։ Կ... է
որ ծընաւ ի միշտ կուսէն ի փրկութիւն
ազգի մարդկան. լուսաւորեցուք ըզտէր



զէր

զերս ՚ի գիտութիւն ճշմարտութեան․ և ըն
րբանեմք ընդ բարեգործութիւն ։ Զամ
նարա ստն օրհնեսցուք զծածկեալն․ որ
կոյս մնացեր ծնընդեամբն․ և տաճար
յորովայնի զանտանելին ամենուն․ զհա
մաբնակիցն հօր և ամենասուրբ հոգւոյն․

Կանոն։

Մէ զծածկեալն և զամ մեր բարեխօս։ սրկ
Ընկալ տէր զաղաչանս մեր բարեխօս։ բհ
Ցնծացէք արդարք ՚ի տր՝ ուղղոց վայել
է օրհնութին, խոստովան եղերուք տն
օրհնութբ․ տասնաղեաւ սաղմոսարանաւ
սաղմոս ասացէք նմա։ Օրհնեցէք զտր
յօրհնութի նոր զի բարի է, սաղմոս ա-
սացէք նմա օրհնութբ։

Պօղոսի առաքելոյն ՚ի Հռովմայեցւոց թղթոյն
է ընթերցուածս։

Եղբարք՝ պարտ է մեզ որ կարօղս եմք՝
զտկարութի տկարացն բառնալ․ և մի ան-
ձանց և եթ հաճոյ լինել։ Այլ իւրա-
քանչիւրոք ՚ի մէնջ ընկերին հաճոյ լիցի
՚ի բարիս՝ վս շինութե։ Քանզի և քս ոչ
եթէ անձին հաճոյ եղև, այլ որպ և գրեալ
է․

է · Նախատինք նախատչաց քոց անկան ՚ի վ͞ր իմ: Բայց որ ինչ գրեցաւն, ՚ի մեր վարդապետութ͞ն գրեցաւ · զի համբերութ͞բ և մխիթարութ͞բ՝ գրոց զյոյսն ընկալցուք: Այլ ա͞ծ համբերութ͞ն և ա͞մ մխիթարութ͞ն՝ տացէ ձեզ զնոյն խորհել ընդ միմեանս ըստ յ͞ի ք͞ի · զի միաբանութ͞բ ՚ի մի բերան՝ փառաւո́ր առնիցէք զա͞ծ և զհայր տ͞ն մերոյ յ͞ի ք͞ի: Վ͞ս որոյ ընկալարո́ւք զմիմեանս, որ͞պ և ք͞ս ընկալա́ւ զձեզ ՚ի փառս ա͞յ:

Ասէ ուղէ: Ա͞ծ յանուան քում կեցո́ զիս, և՚ի զօրութ͞ն քում իրա́ւ ա″:

ՄԵ͞Յ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ ՅԵ͞ ԻԲ͞ ՈՒ ԲՈՒՆ Գ͞Ա:

Տէրն մեր Յ͞ս Ք͞ս:

Ասէ ց͞նս · ո՞չ է ՚ի ձէնջ՝ որոյ իցէ բարեկամ, և երթիցէ առ նա ՚ի մէջ գիշերի, և ասիցէ ցնա · բարեկամ՝ տուր ինձ փո՛խ երիս նկանակս · զի բարեկամ իմ եկն առ իս յուղւոյ, և ո՛չինչ ունիմ դնել առաջի ն͞ր: Եւ նա ՚ի ներքուստ տայցէ պատասխանի և ասիցէ · մի՛ աշխատ առներ զիս, զի դուռնդ փակեալ են, և մանկունքս ընդ ինև կան յանկողնի ·

նի . ոչ կարեմ յառնել և տալ քեզ: Ասեմ ձեզ, եթէ ոչ յարուցեալ տայցէ նմա վ՟ն բարեկամութեն, սակայն վ՟ն ժտութեն յարուցեալ տացէ նմա՝ զինչ և պիտոյ իցէ: Եւ ես՝ ասեմ ձեզ. խնդրեցէք՝ և տացի ձեզ, հայցեցէք՝ և գտջիք, բախեցէք՝ և բացցի ձեզ: զի ա՟մ որ խնդրէ՝ առնու, և որ հայցէ՝ գտանէ, և որ բախէ՝ բացցի նմա: Ո՞ ոք ՚ի ձէնջ հայր՝ խնդրիցէ որդի իւր ձուկն, միթէ փոխանակ ձկանն՝ օձ տայցէ նմա: և կամ խնդրիցէ ձու, միթէ կարիճ տայցէ նմա: Իսկ եթէ դուք որ չարքդ էք՝ գիտէք պարգևս բարիս տալ որդւոց ձերոց, որչափ ևս առաւել Հայր ձեր յերկնից տացէ բարիս այնոցիկ, որ խնդրեն ՚ի նմանէ:

Քարոզ.

Եւ ևս խաղաղութե զՏ՟ր աղա: սրկ

Վ՟ն ՚ի վերուստ խաղաղութե և փրկութե անձանց մերոց՝ զՏ՟ր աղա:

Եւ ևս վ՟ն հիւանդիս այս անուն որ յուսացեալ է կոչել զանուն տ՟ն:

Աղօթք։

քհ Բազումողորմ և բարերար Տէր՝ որ զօ-
րացուցեր զմեզ ՚ի ձեռն սրբոց առաքե-
լոցն՝ քահանայական աղօթիւք զհի-
ւանդս բժշկել. աղաչեմք զքեզ, շնոր-
հեա բժշկութիւն և փրկութիւն այսմ ծա-
ռայիս քո. փարատեցո զամենայն հիւանդու-
թիւնս, և սրբեա զաղտեղութիւնս հոգւոյ և
մարմնոյ սորա մարդասիրութեամբ քով։
Զի քեզ փառք և իշխանութիւն և
պատիւ, այժմ և։

Քարոզ։

սրկ Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք,
ընկալ կեցո և ողորմեա։

Օրհնեալ Տէր։

քհ Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և
Հոգւոյն, սրբոյ այժմ և։

Ողորմեա ինձ Աստուած ըստ մեծի ողորմու։

զփոխն ըստն աւուր։

Շարական. Դկ։

ո Արեւատոն Տէրն աստուածոց. ողո-
րմեա. Անօրէնութեան ՚ի մեղս երկնեաց
զիս մայր իմ. աղաչեմ փրկիչ. ողորմ

Վիրաւորեալ մեղօք անկանիմ առ քեզ
փրկիչ. մի անտես առներ. ողորմեա։
Օ եղեկեայլ՝ նքեզ մաղթեմ փրկիչ. Եաս
որ կենարար բանիւ քո լուծեր զեր
կոյնըս մահու. փարատեա և զիմ զհե
ւանդութիւն. յոյս կենդանութեան մեր կե
ցո ըզմեզ։ Որ անմահ հայրն քո մեծա
լութեան. աւերելով ըզդրունս դըժո
խոց մեռուցեր ըզմահ. կենդանագործեա
և զիս զմեղօք ըզմեռեալս. յոյս։ Սուրբ
և անբիծ կոյս յետ ծննդեան. որ
մարմնով ծընար զարձակօղն ի կապից
մահու. բարեխօս լեր վասն անձանց
մերոց. փրկել ի սպառնալեաց գե
հենոյն։

Քարոզ։

Լուիցէ տէր ձայնի աղաչանաց մերոց. սրկ
Ընկալ տէր զաղաչանս մեր բարեխօ։ քհն
Յարիցէ Աստուած և ցրուեսցին ամենայն թշնա-
միք նորա. փախիցեն ատելիք նորա յերե-
սաց նոցա։

Պօղոսի առաքելոյն ՚ի Հռովմայեցւոց թղթոյն
է ընթերցուածս.

Եղբա՛րք՝ աղաչեմ զձեզ գթութեամբն Ա՟յ՝ պատրաստել զմարմինս ձեր պատարագ կենդանի, ս՟բ, հաճո՛յ Ա՟յ, զխօսուն պաշտօնդ ձեր. և մի կերպարանիք կերպարանօք աշխարհիս այսորիկ. այլ նորոգեցարուք ՚ի նորոգութի մտաց ձերոց, առ ՚ի քննել ձեզ զկամն, և եթէ զինչ են կամքն Ա՟յ, բարին և հաճոյն և կատարեալ։ Զայս ասեմ շնորհօքն Ա՟յ որ տուեալ են ինձ ա՟մի որ է ՚ի ձեզ, մի առաւել ինչ խորհել քան զարժանն խորհելոյ. այլ ՚ի խորհելն զգաստանալ իւրաքանչիւր, որպ Ա՟յ բաժանեաց ա՟մ չափ հաւատոց։

Ալէ ասէ. Օ՟ն բարի կամ զի՟ վայելուչ, զի բնակին եղբարք ՚ի միասին։ Ո՟պ իւղ զի իջանէ ՚ի գլուխ և ՚ի մօրուսն Ահարոնի, ՚ի մօրուացն իջանէ ՚ի գրապանս զգեստու նր։

Ս՟բ Աւետարանն Յ՟ի Ք՟ի որ ըստ Մ՟ր։
Տէրն մեր Յ՟ս Ք՟ս։

Պատասխանի ետ Յ՟ս և ասէ ց՟նս. եթէ ունիցիք զհաւատս Ա՟յ, ամէն ասեմ ձեզ



որ ոք

որ ոք ասիցէ լերինս այսմիկ՝ բարձիր և
անկիր 'ի ծով, և ոչ երկմտիցէ 'ի սրտի
իւրում. այլ հաւատայցէ թէ զոր ասէն
լինի, եղիցի՛ նմա զոր ինչ և ասիցէ։ Վս՟
այսորիկ ասեմ ձեզ. զա՟մ ինչ վ՟ որոյ
աղօթս արարեալ խնդրիցէք, և հաւա
տայցէք թէ առնուք, եղիցի՛ ձեզ։ Եւ
յորժամ յաղօթս կայցէք, թողուցու՟ք
եթէ ունիցիք ինչ զումեքէ. զի և
հայրն ձեր որ յերկինս է, թողցէ՛ ձեզ
զյանցանս ձեր։

Փոխող.

Եւ ես խաղաղութ՟ն զտ՟ր աղա։ սրկ
Վս՟ 'ի վերուստ խաղաղութ՟ն և փըր-
կութ՟ն անձանց մերոց զտ՟ր աղա։
Եւ ես վս՟ հիւանդիս այս անուն որ յու-
սացեալ է կոչել զանուն տ՟ն։

Աղօթք։

Տ՟ր ա՟ծ մեր՝ որ նստիս 'ի վ՟ր քերովբէ քհ
ից, և հայիս յանդունդս. հայեաց յայս
անուն ծառայս քո 'ի բարձրութ՟է սրբութ՟
քո, հեռացո 'ի սմանէ զա՟մ ցաւս և զա՟մ
ախտեղութ՟ս, և տուր սմա զառողջութ՟
զա՟մ աւուրս կենաց իւրոց։ Եւ քեզ
փառք և իշխանութ՟ի։

Քարոզ։

որկ Եւ ևս խաղաղութեան զՏր աղաչեսցուք,
ընկալ կեցո և ողորմեա։

Օրհնեալ Տր։

քհ Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և
Հոգւոյն Սբյ, այժմ և միշտ։

Ողորմեա ինձ Ած ըստ մեծի ողորմութեան։

շփոխն չնան սաս։

Շարական. Բձ։

ո Ընկալնիմ առաջի քո և խնդրեմ
զթողութիւն յանցանաց իմոց. մի՛ անտես
առներ հայր զանառակս իմ. Աղաղա
կեմ ոպ մաքսաւորն. և հեղում արտա
սուս իմ առաջի քո ոպ պոռնիկն. մի՛
ան. Յանցերեալ թշնամւոյն պար
տեցայ. և'ի դանդանի նետից բանտարկ
ութիւն վիրաւորեցայ. մի՛ ան.

խա Յոյս կենդանութեան և փրկութեան իմոյ
տէր Աստուած իմ. յիշեա զիս ոպ երբեմն
զեզեկիայն. և դարձո զհոգի իմ 'ի
դրաց դժոխոց. Որ կամաւոր մահ
ուամբ քո մեռուցեր ըզմահ քրիստոս
Աստուած.

ա̃րծ. և՛ լուսաւորեա՛լ յարութե̃ քո կենա՛
գործեցե՛ր զաշխարհս. կենագործեա՛ և՛
զմ̃ս զմեղօք ըզմեռեալս. Առ քեզ ա
պաւինիմք ո̃վ ա̃ծածին. բարեխօսեա̃
անդադադար առ որդի̃դ քո և ա̃ծ մեր.
փրկել ըզմե̃զ 'ի փորձութե̃ և յա̃մ
վտանգից մերոց.

Քարոզ.

Զա̃ծածինն և զա̃մ ս̃բս բարեխօս։ որկ
Ընկալ տէր զաղաչանս մեր բարեխօ։ քհ
Որ բնակեալն է յօգնութի̃ բարձրելոյն,
ընդ հովանեաւ ա̃յ յերկնից հանգիցէ.

Յօհաննու առաքելոյն 'ի կաթողիկեայց թղթոյն
է ընթերցուած։

Եւ դուք օծումն ունիք առ 'ի ս̃բոյն,
և գիտէք ամենեքին. Ո՛չ գրեցի ձեզ՝
եթէ ո՛չ գիտէք զճշմարտութի̃ն, այլ ե-
թէ գիտէք զնա. և եթէ՝ զի ա̃մ սուտ
ո՛չ է 'ի ճշմարտութե̃ անտի. Իսկ ո՞ է
սուտ, եթէ ոչ՝ որ ուրանայ եթէ յ̃ս չէ՛
ք̃ս. նա իսկ է նեռն, որ ուրանայ ըզ
հայր և զորդի. Ամենայն որ ուրանայ


զոր

զորդի, եւ ո՛չ զհայր ընդունի. որ խոստովանի զորդի, նա եւ զհա՛յր ընդունի։ Դուք՝ զոր լուարուքն իսկզբանէ՝ 'ի ձե՛զ բնակեսցէ. զի եթէ 'ի ձեզ բնակեսցէ՛ զոր իսկզբանէն լուարուք, եւ դուք յորդին եւ 'ի հայր բնակեսջիք։ Եւ այս են աւետիքն՝ զոր աւետարանեաց նա մեզ՝ զկեանսն յաւիտենականս։

Ալէ ալէ։ Երանի՛ ում թողու՟ն եղեւ մեղաց, եւ ծածկեցա՛ն ա՟մ յանցանք ն՟ր։

Աւ. Ղուկասու։ ՅԷ ՎԲԷ՝ որ ըստ Գ...։

Աղաչէր ոմն զնա 'ի փարիսեցւոյն՝ զի կերիցէ հաց ընդ նմա։ Եւ մտեալ 'ի տուն փարիսեցւոյն՝ բազմեցաւ։ Եւ կին մի էր 'ի քաղաքին մեղաւո՛ր. իբրեւ գիտաց թէ բազմեալ է 'ի տան փարիսեցւոյն, բերեալ շի՛շ մի իւղոյ ազնուի. կա՛յր յետոյ առ ոտս ն՟ր, լա՛յր. եւ արտասուօքն սկսաւ թանա՛լ զոտս ն՟ր, եւ հերով գլխոյ իւրոյ ջնջէր. եւ համբուրէ՛ր զոտս ն՟ր, եւ օծանէ՛ր իւղովն։ Իբրեւ տեսեալ փարիսեցւոյն որ կոչեաց զնա, ասէր ընդ միտս իւրում. թէ մարգարէ ոք էր, ապա գիտէր թէ ո՛վ կամ ո՛րպիսի ոք կին



մեր

մերձենայ ՚ի սա․ զի մեղաւոր է։ Պա-
տասխանի ետ յս̃ և ասէ ցնա, սիմոն՝
ունիմ ինչ ասե՛լ քեզ։ և նա ասէ, ասա՛
վարդապետ։ Եւ նա ասէ․ երկու պարտա
պանք էին ուրումն փոխատուի․ միոյն՝
պարտէր հինգ հարիւր դահեկան, և
միւսն յիսուն։ և իբրև ոչ գոյր նց̃ հա-
տուցանել, երկոցունց շնորհեաց․ արդ
ասա՛ ո՛վ առաւել սիրեսցէ զնա։ Պ̃ե
սիմոն․ ինձ այսպէս թուի՝ եթէ որում
զբազումն շնորհեաց։ Եւ նա ասէ ցնա․
ուղիղ դատեցար։ Եւ դարձեալ ՚ի կինն
կողմն, ասէ ցսիմոն․ տեսանե՞ս զայս կին,
մտի՛ ՚ի տուն քո ջուր ոտից իմոց ոչ ե-
տուր, իսկ սա՝ արտասուօ՛ք իւրովք ե-
թա՛ց զոտս իմ, և հերով իւրով ջնջեաց։
համբոյր մի դու ոչ ետուր ինձ, սա՝ ա՛ւա-
սիկ յորմէհետէ մտեալ եմ, ոչ դադար-
եաց ՚ի համբուրելոյ զոտս իմ։ Իւղով
զգլուխ իմ ոչ օծեր, սա՝ իւղո՛վ անու-
շիւ օծ։ Վ̃ որոյ ասեմ քեզ․ թողեա՛լ
լիցին սմա մեղք իւր բազումք, զի յո՜յժ
սիրեաց։ զի որում շա՛տ թողցի՝ շատ
սիրէ, և որում՝ սակաւ սակաւ։ Եւ ասէ
ցնա․

ցնա․ Թողեալ լիցին քեզ մեղք քո։ Նու-
նպան որ բազմեալն էին ընդ նմա՝ ասել
ընդ միտս իւրեանց․ ո՞վ է սա՝ որ զմեղս
թողու։ Նա ասէ ցկինն․ հաւատք քո
կեցուցին զքեզ, երթ ՚ի խաղաղութի։

Քարոզ։

ակ Եւ եւս խաղաղութե զՏր աղա։
Վն ՚ի վերուստ խաղաղութե եւ փրկութե
անձանց մերոց զՏր աղա։
Եւ եւս վն հիւանդիս այս անուն որ յու-
սացեալ է կոչել զանուն Տն։

Աղօթք։

քհ Գոհանամք զքէն Տր Ած մեր, որ ես
բժիշկ բարի՝ անձանց մերոց․ որ զհիւան
դութիս մեր բառնաս․ որ քո վիրօք ամե-
նեքեան բժշկեցաք։ Որ հովիւդ ես բա-
րի, եւ խնդրող մոլորեալ ոչխարին։ Որ
անձանց բեկելոց տաս մխիթարութի, եւ
կեանս մահացելոց։ Որ զաղբիւր արեան
տեռատեսին քղանցիւ հանդերձի քո
բժշկեցեր։ Որ զդուստր քանանացւոյն
՚ի դժնդակ դիւացն ազատեցեր։ Որ
զպարտս երկուց պարտապանացն շնոր-

հեցեր. և մեղաւոր կնոջն զթողութիւն ետուր։ Որ զբժշկութիւն անդամալուծին պարգևեցեր հանդերձ թողութեամբ մեղաց նորա։ Որ զմաքսաւորն բանիւ արդարացուցեր. և զաւազակն 'ի վերջին խոստովանութեան նորա ընկալար։ Որ զմեղս աշխարհի բարձեր, և 'ի խաչին բևեռեցեր։ Զքեզ աղաչեմք, և քեզ պաղատիմք, ներեա՛, և թո՛ղ զանօրէնութիւս և զմեղս սորա զկամայ և զակամայ, զգիտութեամբ և զանգիտութեամբ, զոր 'ի գիշերի և զոր 'ի տունջեան։ Նա՛յ Տէր Աստուած՝ լո՛ւր ինձ մեղաւորիս 'ի պահուս յայսմիկ վասն այս անուան ծառայիս քո, անտես արա իբրև անյիշաչար Աստուած զյանցանս սորա զամենայն։ Զբերան սորա քոյին օրհնութեամբ լցո՛. զշրթունս սորա բա՛ց առ 'ի փառաբանութիւն անուան քում Տէր. զձեռս սորա տարածեա՛ 'ի գործս պատուիրանաց քոց. զոտս սորա առ յընթացս աւետարանին ուղղեա՛. և զամենայն անդամս սորա և զմիտս պարփակեա՛ քոյին շնորհօքդ։ Դու՛ Տէր Աստուած մեր՝ որ 'ի ձեռն սրբոց քոց առաքելոց ծանուցեր մեզ ասելով, թէ զոր կապի-

ցէք 'ի վերայ երկրի՝ եղիցի կապեալ յեր-
կինս. և դարձեալ՝ եթէ ումեք թողու-
ցուք զմեղս՝ թողցին նմա։ Եւ որպէս լուար
եզեկիայ 'ի նեղութեան անձին խնդրում 'ի
ժամու մահուան նորա, և ոչ անտես ա-
րարեր զաղաչանս նորա. լուր և ինձ մե-
ղաւոր և անարժան ծառայի քո 'ի պա-
հուս յայսմիկ։ Քանզի դու ես Տէր՝ որ
եօթանասնեկի եօթն թողուլ՝ որք ան-
կանին 'ի մեղս, հրամայեցեր քոյին մար-
դասիրութեամբ. ապաշաւելով 'ի վերայ չար-
եաց մերոց, և խնդալով 'ի վերայ դարձի
կորուսելոց։ Տէր Աստուած մեր՝ որ մտեալ 'ի
տուն զակքէի ասացեր, այսօր եղև
փրկութիւն տանս այսմիկ. դու որպէս մարդա-
սէր և բազումողորմ փրկիչ՝ արա և
այժմ փրկութիւն տանս այսորիկ. զի որպէս մե-
ծութիւն քո, նոյնպէս և ողորմութիւն քո։ Եւ
քեզ փառք և երկրպագութիւն, այժմ և.

Յայնժամ կէսն 'ի քահանայից կալով յաջմէ հի-
ւանդին, և կէսն 'ի ձախմէ. և առաջներէցն եդ-
եալ դնէ զաւետարանն 'ի վերայ գլխոյ հիւան-
դին, և ասէ զաղօթս։

Տէր ամենակալ՝ արարիչ Աստուած արարածոց. որ առաքեցեր յաշխարհ զմիածին որ-

դի քո, որ եկն և փրկեաց զտիեզերս 'ի մեղաց. և բժշկեաց զա՟մ ախտս և ըզ հիւանդութ̃իս ժողովրդեան քում. ըն-կղմեաց զմահ, և փոխեաց զմեզ 'ի կեանս և յանմահութ̃ի. Եւ այժմ աղաչեմք զքեզ տ՟ր ա՟ծ մեր, դիր զամենակարող աջ քո 'ի վե՟ր հիւանդիս այսորիկ, և բը-ժշկեա՛ զսա 'ի ցաւոց իւրոց: Ո է զքեզ փառաւորեսցէ զբժիշկդ հոգւոց և մարմնոց, և խոստովան լիցի զահեղ ա՟ծութ̃ի քո: զի քեզ վայելէ:

Խաղաղութեան ամենեցուն.

Ա՟ծ յաւիտենական, որ իջեր 'ի ստորին կողմ երկրի, և շնորհս ծաւալեալ սըփ-ռեցեր յարարածս քո: Առաքեցեր և զերանելի առաքեալսն քո, հրաման տա-լով ն՟ց բժշկել զա՟մ ախտս և զհիւան-դութ̃իս ժողովրդեան քում:

Եւ ա՛րդ՝ ես ծառայս քո տկարս և ա-նարժանս՝ դնեմ զձեռն իմ 'ի վե՟ր հի-ւանդիս այսորիկ, և կարդամ զահեղ ա՟ծութ̃ի քո, և խնդրեմ յառատ բարե-րարութե՟դ քումմէ: Առաքեա՛ զամենա-կարող զօրութ̃ի քո, և բժշկեա՛ զախտս


և

և զհիւանդութիւնս ծառայիս քո այսորիկ նշանաւ ամենայաղթ խաչի քո. որով բարձեր զտկարութիւն ազգի մարդկան, և դատապարտեցեր զթշնամին կենաց և փրկութեան մերոյ: Զի դու ես Աստուած մեր, և բժիշկ հոգւոց և մարմնոց ծառայից քոց, և փարատիչ ամենայն ախտաւորութեանց մերոց: Եւ քեզ ընդ հօր ամենակալի և ընդ հոգւոյդ ճշմարտի վայելէ փառք իշխանութիւն և պատիւ, այժմ և.

Քարոզ.

որկ Վասն հիւանդաց և ամենայն վշտացելոց՝ աղաչեսցուք զփրկիչն մեր Քրիստոս, զի ողորմեսցի ըստ մեծի ողորմութեան իւրում. և բժշկեսցէ զախտս և զհիւանդութիւնս հոգւոց և մարմնոց ծառայից իւրոց. և կատարեալ առողջութեամբ հասուսցէ զամն ի մշտնջենաւոր և յանախտ կեանս: Որ առաքեցաւ ի հօրէ ի բժշկութիւն ազգի մարդկան՝ միածին որդին Աստուծոյ, տէր մեր և փրկիչ Յիսուս Քրիստոս. կեցուսցէ և ողորմեսցի:

Աղօթք.

քհ Փարատեցո զցաւս և բժշկեա զհիւանդութիւնս ի ժողովրդենէ քումմէ տէր Աստուած մեր.

մեր. և շնորհեա՛ ամ՟ց՟ն զկատարեալ ա-
ռողջութի՟ն նշանաւ ամենայաղթ խաչի-
քո. որով բարձեր զանկարութի՟ն ազգի մարդ-
կան, և դատապարտեցեր զթշնամին կե-
նաց և փրկութե՟ն մերոյ։ Դու ես կեանք
մեր և փրկութի՟ն՝ բարերար և բազում
ողորմ ա՟ծ. որ միայն կարող ես թողուլ
զմեղս, և մերժել զախտս և զհիւանդու-
թի՟ս ՚ի մէնջ. որում յայտնի են պէտք
կարեաց մերոց։ Պարգևիչդ բարեաց՝
պարգևեա՛ զառատ ողորմութի՟ քո ՚ի վ՟ր
արարածոց քոց՝ ըստ իւրաքանչիւր պի-
տոյից. յորոց հանապազ փառաւորեալ
գովի ամենայ՟ն երրորդութի՟ն, այժմ և.

Քարոզ.

Խնդրեսցուք հաւատով միաբանութե՟ ուկ
՚ի տ՟նէ՝ զի զողորմութե՟ն զշնորհս իւր
արասցէ ՚ի վ՟ր մեր։ Տէրն ամենակալ
կեցուսցէ և ողորմեսցի։

Կեցո՛ տէր։

Ա՟ղթ՟ք.

Թագաւո՛ր խաղաղութեան՝ օգնական քհ
և փրկիչ անձանց մերոց՝ ք՟ս ա՟ծ մեր։

 Պա

Պարսպեալ պահեա՛ զժողովուրդս քո ընդ հովանեաւ սբ. և պատուական խաչիւ քո 'ի խաղաղութե. փրկեա՛ յերևելի և յաներևոյթ թշնամւոյն։ Արժանաւորեա՛ գոհութե փառաւորել զքեզ ընդ Հօր և ընդ սբյ Հոգւոյդ.

Հայր մեր որ յերկինս.

---

Կանոն Խաչատուրայ տաւնեցւոյ, որ կոչի Խաչահանդիստ։

Տէր՝ մի՛ սրտմտութե քով յանդիմաներ զիս. և մի՛ բարկութե քով խրատեր զիս։ Ողորմեա՛ ինձ Տր զի հիւանդ եմ ես. բժշկեա՛ զանձն իմ, զի խռովեցան ոսկերք իմ։ Անձն իմ յոյժ խռովեցաւ, և դու Տր՝ մինչև յե՞րբ։ Դա՛րձ Տր և փրկեա՛ զանձն իմ. կեցո՛ զիս Տր՝ ըստ ողորմութե քում։ Զի ո՛չ է՝ որ 'ի մահու յիշէ զքեզ. կամ 'ի դժոխս խոստովան առնիցի առ քեզ։ Վաստակեցայ ես 'ի հեծութե իմում. լուացի զամ գիշեր զմահիճս իմ. և արտասուօք իմովք զանկողինս իմ թացի։ Խռովեցաւ 'ի



սրտո

սրտմտութէ աչն իմ. և մաշեցայ ես ի մէջ ամ թշնամեաց իմոց. Ի բաց կացէք յինէն ամենեքեան. որք գործէք զանօրէնութի. Լուաւ տր ձայնի լալոյ իմոյ. լուաւ տր աղօթից իմոց, և տր զխնդրուածս իմ ընկալաւ: Ամաչեսցեն և խռովեսցին յոյժ ամ թշնամիք իմ. դարձցին յետս և ամաչեսցեն յոյժ վաղվաղակի և խռովեսցին:

Ը տարածն:

Ապաւինեցուք ի խաչ քո արարիչ յաւիտենից. որ ետուր մեզ պահապան յաղթող ընդդէմ թշնամւոյն. աղաչեմք սուրբ փրկիչ պահպանեա զանձինս մեր. Բարձրեալ թագաւոր որ վասն մեր ելեր ի խաչ. և բարձեր սովաւ զյանցանս նախաստեղծին ադամայ. աղա. Դրօշ տէ հաւատոյ և փայտ կենաց մարդկան յայտնեալ. զոր տեսեալ այսոյն պղծոյ կործանեցաւ անկանգնելի. աղա. Դողացաւ թշնամին ընդ յայտնել տէ խաչին. և ի



յա

յահէ փառաց նորա կործանեցաւ յան
դունդս երկրի . տղայ:

ո Սեղանք մինչև յերկինս և զարդար
ընծայումն քո շարժեցաք 'ի մեզ . որ
ըստ մեծի քում ողորմութեանդ . ողոր
մեա մեզ: Խաչք մինչ 'ի դրժոխս ըն-
կղմեալք յանօրէնուէ մերում . որ
յիշեա ըղձելինս արեան որդւոյ քո . և
ողորմեա: Հալածեա 'ի մէնջ որ նը-
շանաւ խաչի քո . զընդդիմամարտ և
զաներևոյթ գազանն . և մի տար յապա
կանութիւն զքո ժառանգութիւն:

Փառք հօր և: Տաճար լուսոյ անըստ
ուերին և առագաստ անճառ բանին .
որ ըզնախնւոյ մօրն Եւայի բարձեր զա
նէծսն տրտմալի . Հայցեա յորդւոյ
քո միածնէ հօր հաշտութեան միջնոր
դի . բառնալ 'ի մէնջ ըզխռովութի և
տալ զոգւոյ խաղաղութի:

Այժ: և միշ: և: Երկինքս ցնծային
և երկիրս ուրախանայր . քանզի փըր-

Կէ՛ց ցուցաւ մե՛զ խաչն և լուսատու մե՛ր եղերանց · մղմ։

Ձայն տն ի վր ջուրց, և ած փառաց որոտաց, և տր ինքն ի վր ջուրց բազմաց։ Ձայն տն զօրութեամբ, և ձայն տն մեծ վայելչութեամբ։

Ընթերցուած ի չորրորդ Թագաւորութեանց։

Ասեն արք քաղաքին ցԵղիսէ · ահաւասիկ բնակութի քաղաքիս բարի՛ է, ոպ և տրդ իսկ տեսանէ · և ջուրքս չա՛ր, և երկիրս անզաւակ։ Ասէ Եղիսէ · առէ՛ք առիս կուժ մի նոր, և դի՛ք այդր։ և բերին առ նա։ և ել Եղիսէ յակունս ջուրցն, և արկ անդր աղ և ասէ՝ այսպէս ասէ տր · բժշկեմ զջուրսդ զայդոսիկ, և մի՛ ևս լիցի այտի մա՛հ և յանզաւակութի։ և բժշկեցան ջուրքն մինչև ցայսօր ըստ բանին Եղիսէի զոր խօսեցաւ։

Ալէ ալէ։ Ետուր երկիւղածաց քոց նշան, զի ապրեսցին յերեսաց աղեղան։

Եւ Աւետարանն ՅԻ ՆԻ որ ըստ Յոհան։

Ի վերջնում աւուր մեծի՛ տօնին, կայր յս աղաղակէ՛ր և ասէր · եթէ ոք ծարա-



ւի

ւր իցէ, եկեսցէ առ իս՝ և արբցէ. որ
հաւատայ յիս՝ որպէս և ասեն գիրք, գետք
յորովայնէ նորա բղխեսցեն ջրոց կենդա
նութեան. Զայս ասէր՝ վասն հոգւոյն զոր
ընդունելոց էին որ հաւատային ՚ի նա։

### Քարոզ։

Աղաչեսցուք զմարդասէրն աստուած, որ է
յոյս և ապաւէն անձանց մերոց. որ զա
մենայաղթ նշան տեառն խաչին շնորհեաց
մեզ զէն անպարտելի ընդդէմ ներգոր
ծութեանց սատանայի. զի զոր ինչ յոր
և մերձեսցի սա, սրբեսցէ. մանաւանդ
զջուրս զայս. և շնորհեսցէ սոսա բժշ
կութիւն ախտից, և փարատումն ցաւոց.
ամենակալ տէր աստուած մեր կեցուսցէ և ո
ղորմեսցի.

### Մաղթ։

Տէր աստուած ամենակալ՝ արարիչ ամենայն արա
րածոց, որ զգեցար մարմին ըստ մերում
հողեղէն բնութեանս, և ՚ի լուացումն մե
ղաց սրբիչ և մաքրիչ զջուրս կացուցեր
որ և ՚ի ձեռն մարգարէին եղիսէի օր
նեցեր զջուրն չարաշունչ և մահաբեր


և

և այժմ տ՟ր բարերար՝ առաքեա՛ զշնորհս
հոգւոյդ ս՟բյ 'ի ջուրս յայս, և օրհնեա՛ ✠
աներևոյթ աջով քով, և զօրութ՟ ամե-
նայաղթ խաչի քո։ Տո՛ւր սմա շնորհս․
զի ամենեքին որք արբցեն 'ի սմանէ՝ ե-
ղիցի ն՟ց 'ի բժշկութի ախտից՝ և 'ի փարա
տումն ցաւոց։ Օրհնեա՛ տ՟ր ✠ զջուրս
զայս զօրութ՟ ս՟բ խաչի քո․ զի հօտք և
խաշինք որք արբցեն 'ի նմանէ, եղիցի
ն՟ց յանցաւութի և 'ի ծննդականութի։
Օրհնեա՛ տ՟ր ✠ զջուրս զայս նշանաւ ս՟բ
խաչիս 'ի ձեռն քահանայիս՝ և խնդրուա
ծոց ժողովրդեանս, զի ուր ցօղեսցի 'ի
տունս և 'ի բոյսս, եղիցին անվնասելի
'ի ժանտոյ և 'ի թրթրոյ՝ և յա՟մ պատա
հարաց․ և առաւել ևս պտղաբերեսցին
'ի շահաւէտութի որդւոց մարդկան, և 'ի
սպաս պաշտաման քում։ Եւ գոհանա
լով փառս մատուցանեմք քեզ ընդ հօր
և ընդ ամենաս՟բ հոգւոյդ, այժմ և։

Ամէն, ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա։

Օրհնեսցի և սրբեսցի ջուրս այս նշա
նաւ ս՟բ խաչիւս, և ս՟բ աւետարանաւս,
և աւուրս շնորհիւ, յանուն հօր, և


որդ

որդւոյ, և հոգւոյն սրբոյ. Եւ այժմ և մշտ. ամ։
Օրհնութի և փառք հօր և որդւոյ.
Ամ խաչիւս աղաչեմ. Պահպանիչ և.
Հայր մեր որ յեր.

Նրէ ճէց մաամէբ էյէ խաչըրատյն, ասա և ձայն Շարական.

ո Հեղմամբ արեան սրբոց վկայից. հաշտեաց ընդ մեզ քս. և փրկեաց յամ փորձութէ. Որք նահատակեցան վասն քո ՚ի մահ. վերաւորեալք յաղթեցին թշնամւոյն. սոցին աղաչանօք հաշտեաց. Որք մեռան ՚ի սէր ահաւոր քո տրութեդ. և մատուցին զանձինս նուերեանց պատարագ քեզ և զենումն. սոցին աղաչ.

Կանոն Հոգեհանգստի Կատարելոյ։

Երանի որ խորհի զաղքատն և զտնանկ. յաւուր չարի փրկէ զնա տր. Տր փրկէ զնա և կեցուցանէ. երանելի առնէ զնա ՚ի վր երկրի. և ոչ մատնէ զնա ՚ի ձեռս թշնամեաց իւրոց. Տր օգ-
նա

նական է նմա 'ի մահիճս ցաւոց իւրոց. զա՟մ անկողինս ն՟ր դարձուցանէ 'ի հի-ւանդութ՟է ն՟ր։ Ես ասացի տ՟ր ողորմեա ինձ. բժշկեա զանձն իմ, ես մեղայ քեզ։ Թշնամիք իմ ասացին ինձ չար. երբ ի-ցէ՝ զի մեռցի, և կորիցէ անուն ն՟ր։ Մտանէր տեսանել զնանրութ՟ի, խօսէր 'ի սրտի իւրում, և ժողովէր զանօրէնու-թ՟ի յանձն իւր։ Արտաքս ելանէր և զնոյն խօսէր. զինէն շշնջէին ա՟մ թշնա-միք իմ։ Խորհեցան չար 'ի վ՟ր իմ. բան անօրէնութ՟ե եդին 'ի վ՟ր իմ։ Մի՞ թէ որ ննջիցէն, և այլ ոչ ևս յաւելուցու յառնել. քանզի և այրն խաղաղութ՟ե ի-մոյ, յոր և ես յուսացայ։ Որ ուտէր զհաց իմ, յաճախեաց առնել ինձ խա-բէութ՟ի։ Այլ դու տ՟ր ողորմեա ինձ, և կանգնեա զիս. և ես հատուցից ն՟ց։ Յայսմ ծանեայց՝ թէ հաճեցար ընդ իս, զի մի՛ ուրախ եղիցին յիս թշնամիք իմ։ Այլ զիս յամբծութ՟ե իմում ըն-կալար. և հաստատեցեր զիս առաջի քո յաւիտեան։ Օրհնեալ տ՟ր ա՟ծ իսրայէլի յաւիտեանս յաւիտենից. եղիցի եղիցի։



Ալէ

# Ալէլուիա ալէլուիա։

Ոպ՟ փափագի եղջերու յաղբերս ջուրց, այնպ՟ս փափագի անձն իմ առ քեզ ա՟ծ։ Ծարաւի է անձն իմ առ քեզ ա՟ծ հզօր և կենդանի. ե՟րբ եկից երևեցայց երեսացդ տ՟ն։ Եղեն ինձ արտասուք իմ կերակուր ՚ի տուէ և ՚ի գիշերի. և այն զի ասէին ցիս զօրհանապազ՝ թէ ո՞ւր է ա՟ծ քո։ Զայս ոպ՟ յիշէի, տառապէր յիս անձն իմ. քաջալերէի զի մտից ընդ յարկաւ սքանչելեաց տանն տ՟ն։ ՚Ի ձայն ցնծութեան խոստովանութեան, և ՚ի ձայն բարեկենդանութեան։ Արդ՝ ընդէ՞ր տրտում ես անձն իմ, կամ ընդէ՞ր խռովես զիս. յուսա՛ առ ա՟ծ, խոստովանեա՛ նմա՝ փրկիչ երեսաց իմոց ա՟ծ է։ Անձն իմ յիմ խռովեցաւ. վ՟ն այնորիկ յիշեցի զքեզ յերկրէն յորդանանու, ՚ի Հերմոնէ ՚ի լեռնէ փոքուէ։ Անդունդք ՚ի խորոց կարդացին առ քեզ, ՚ի ձայն սահանաց քոց։ Ամենայն զբօսանք քո, և ալիք քո անցին ՚ի վ՟ր իմ. ՚Ի տուէ պատուիրեաց տ՟ր զողորմութի՟ւ իւր, ՚ի գիշերի զօրհնութի՟ւ նորա. և աղօթք իմ առ ա՟ծ վ՟ն կենաց իմոց։ Ասացի տ՟ն



ըն

ընդունելի իմ ես. ընդէ՞ր մերժեցեր
զիս, ընդէ՞ր տրտում գնամ ես ՚ի նեղել
թշնամւոյ իմոյ. ՚Ի փշրել ոսկերաց իմոց
նախատեցին զիս թշնամիք իմ. յասել
ցիս զօրհանապազ, թէ ուր է Աստուած քո։
Արդ՝ ընդէ՞ր տրտում ես անձն իմ,
կամ ընդէ՞ր խռովես զիս. յուսա առ
Աստուած, խոստովանեսցուք նմա՝ փրկիչ երեսաց
իմոց Աստուած է։

Ալէլուիա ալէլուիա.

Դատ արա ինձ Աստուած, և իրաւ արա ինձ։

Փառք հօր և։ Այժմ և միշտ։

Ողորմեա ինձ Աստուած ըստ մեծի ողորմութեան։

Փառք հօր և որդ. Նոյն և խաղաղ.

Խունկ արքունի և այլ, Օրհնութիւն և.

Նոյն այլ Շարական. գծ.

Որ երկայնամիտ ես տէր. քաղցր և հնգ
անոխակալ. համբերեա՛ գթով քո ծա
ռայից. զի մի դարձցի տնանկ ամաչե
ցեալ յամօթոյն ահեղ ատենին. Զմեզ
յիշատակ հրաժարելոյն ՚ի հանգիստ քեզ
ընկալցիս. և զուխտս մեր ընկալ ողոր


զո

զաբելին զնոյին և զաբրահամուն. ող
մի: Ի խորան քում սրբոցդ հանգուս
ցես ընդ ծառայս քո. և զհոգիս նոցա
դասեսցես ընդ սրբս քո. ող մի:

ա-կ Հաւատով ես թագաւոր քրիստոսական
ղ-է ձայնիւ օրհնեալ. ի յերկինս ի յերկրի
և յամ ժամանակի: Հաւատով ես թա
գաւոր որ նորոգես զքո զարարածս.
հաստատեա ի հաւատս ի գիտութիւն ճշ
մարտութե: Լուսաւորեա ընդ մեզ զքո
ի միւսանգամ քո գալստեանն. յոր
ժամ ծագես ի յերկնից և նորոգես
զքո զարարածս:

ձ-ր Ի յօր յարութե քո տօնեցէք հաւա
տացեալք. ի մի տեղ հայր ամենակալ:
գ-կ Ի յօր և կանգնեսցէ նուաբերք անե
տիս տալով առաքելոցն. օրհնեն զարդ
զհայր: Ի յօր և հրեշտակք ի յերկի
նըս հոգևոր հընչմամբ երգով. օրհ:
դ-ծ Լոյս լուսոյ միայն. և կենարար բանին
ընակալ[illegible]րան. քեզ երանեցեն

մեզ. և աղէնք զմ Ստեղծողին մայր.
և հրնուեն կերպի նորոգօ մարդկ֊ղին.
քեզ։ Լոյս ծագեցաւ ՚ի քէն. նորա
լոյս ՚ի խաւար մարդկրին. քեզ։

Փայտ կենաց որ փոխանակ մահացու ԽՆԷ
պտղոյն. ընդ քո պտղաբերեցեր. պա
րգևեալ պահեա զու խոստ հաւատացե
լոց. Եւ բացցուք մեզ ճանապարհ ծա
ռոյն կենաց. ՚ի արքայութեան պահպա
նութենէն. պարզես։

Փառք Հօր և որդ։

Եւ մերժեցաւ նախահայրն ՚ի ճա
շակմանէ պտղոյն. և քեզ երկրպա
գեն զմ հանգուցելովք. պարզես։

Յամ ժամու աղաչանք իմ այս են ՚ի։

Սա֊Նո խաղ։ Աղաչեսցուք զկենդանատու
փրկիչն մեր քս. որ կամաւոր խաչելու
թեն իւրով զարարածս փրկեաց. և
հեղմամբ արեան իւրոյ զթողութի շնոր-
հեաց յուսացելոց իւրոց. ամե։

## Աղօթք։

Անկեալ առաջի քո բարերար և բազումողորմ Աստուած՝ աղաչեմք զամ սրտիւք մերովք, և խնդրեմք զգթութիւն 'ի քէն. որպէս խոստացար ծառայից քոց և առացեր, զամենայն զոր ինչ խնդրիցէք հաւատով յանուն որդւոյ 'ի հօրէ, տացի ձեզ։

Շնորհեա և այժմ հաւատացելոցս 'ի քեզ, և կատարեա 'ի բարի զխնդրուածս մեր. զի 'ի քեզ եմք ապաւինեալ։ Նու քո առատ ողորմութեամբ մխիթարեա զմեզ 'ի կեանս այսմիկ. և առաջնորդեալ հաս յանձառ երկնից արքայութեան, 'ի փառս բանութ և 'ի պատիւ ամենասուրբ երրորդութեան, այժմ և.

Յիշեա՛ Տէր և ողորմեա՛։

Բարերար և բազումողորմ Աստուած։

Ալէլուիա ալէլուիա.

Ահա Աստուած օգնական իմ, և Տէր ընդունող հոգւոյ իմոյ։

Ընթերցուած Առակաց։

Պատուեա զՏէր 'ի քոյոց արդար վաստակոց. և հան նմա պտուղ 'ի քոց ար-

դարուն արմատացն. զի լցցին շտեմարանք քո լիութե̃ ցորենոյ. և գինեաւ հնձանք քո առաւել եւս բղխեսցեն։ Ո՛րդեակ՝ մի՛ լքանիր 'ի խրատու տ̃ն, և մի՛ լուծանիցիս յանդիմանեալ 'ի նմանէ։ զի զոր սիրէ տէր՝ խրատէ, տանջէ զա̃մ որդի զոր ընդունի։

Ընթերցուած 'ի գործոց առաքելոց։

Այնպէս պաշտեմ զհայրենի ա̃ծն՝ հաւատացեալ յա̃մի որ ինչ յօրէնս և 'ի մարգարէսն գրեալ է։ Ունիմ յոյս առ ա̃ծ և առ մարդիկ, որում և դոքա ակն ունին՝ թէ յարութի̃ լինելոց է արդարոց և մեղաւորաց։ Յորում և ես իսկ ճգնիմ, անխիղճ միտս ունելով առ ա̃ծ և առ մարդիկ։ 'Ի բազում ամաց եկի ողորմու̃թի առնել յազգ իմ, և ետու պատարագս. որովք գտին զիս սրբեալ 'ի տաճարին։

Պետրոսի առաքելոյն 'ի կաթողիկեայց թղթոյն է ընթերցուած։

Սիրելիք, զայն իսկ և մեռելոց խօստացեալ է՝ զի դատեսցին ըստ մարդկան



մարմ

մարմնով. և կենդանասցին ըստ ո՟յ՝ հոգ-
ւով: Մնեցուն վախճան մերձեալ է.
զգաստացարուք այսուհետև. և լերուք
զուարթունք յաղօթս:

Ալէ ալէ: Աստուած ողորմեա մեզ և.
ԱԷ: Աւետարանէ: ՅԷ ՎԲԷ՝ ու ըստ Պ ր.:

Եւ մտեալ շրջէր ընդ երիքով. և ահա՟
այր մի անուն կոչեցեալ զակքէոս. և նա
էր մաքսապետ. և ինքն մեծատուն. և
խնդրէր տեսանել՝ թէ ո՞վ իցէ յս՟, և
ոչ կարէր ՚ի բազմութենէն, զի կա՛րճ էր
հասակաւ: Եւ ընթացեալ յառաջ, ել
՚ի ժանտաթզենին զի տեսանիցէ զնա.
քանզի ընդ այն իսկ անցանելո՛ց էր:
Եւ իբրև եկն ՚ի տեղին. հայեցաւ ՚ի վեր
յս՟՝ և ասէ ցնա. զա՛կքէ՝ փութա՛ էջ
այտի, զի այսօր ՚ի տան քում արժան է
ինձ ագանել: փութացաւ և էջ՝ և ըն-
կալաւ զնա ուրախութբ՟: Իբրև տեսին
ամենեքին, տրտնջէին և ասէին՝ թէ
առ առն մեղաւորի եմուտ լուծանել:
Եկաց զակքէոս՝ և ասէ ցտ՟ր. տ՟ր՝
ահա զկէս ընչից իմոց տա՛մ աղքատաց.

 և

և եթէ զոք զրկեցի, հատուցից չորեք-
կին։ Եւ ասէ ցնա Յս̃. այսօր եղև փր-
կուն̃ տանս այսմիկ. քանզի և սա որդի
աբրահամու է։ Զի եկն որդի մարդոյ
խնդրել և կեցուցանել զկորուսեալն։

Վասն ՚ի վերուստ խաղաղութե̃ և փրկութե̃ ան-
ձանց մերոց ասէ։

Հայր երկնաւոր՝ բարեգութ և ողոր-
մած, քաղցր և երկայնամիտ առ ամենե-
սեան որք խնդրեն ՚ի քէն։ Հայեաց ՚ի
ստեղծուածս ձեռաց քոց, որ ապաւի-
նիմք ՚ի քո բարերարութի̃դ. և ընկալ
ողորմութբ̃ քով զպատարագս, զոր մատու-
ցանեմք հաւատացեալքս ՚ի քեզ՝ առ ՚ի
յիշատակ ննջեցելոց յանուն քո տր̃.
Զի դու ես տր̃՝ որ հաստատեցեր ՚ի
սիրտս մեր զյոյս յարութե̃, և զհաւատու-
ցումն բարեաց ամ̃ցուն՝ որ հաւատան
գալստեան միածնի քո։ Դու տր̃ ամ̃
մեր, յաղթեալ ՚ի մարդասիրութէ̃ քում-
մէ՝ առաքեցեր յանքննին ծոցոյ քումմէ
զմիածին որդիդ քո. որ եկն և գնեաց
զմեզ ՚ի ծառայութէ̃ մեղաց։ Եղև իբրև
զմեզ մարդ, և հրաւիրեաց զմեզ յոր-



դե

դեգերուն հօրդ երկնաւորի։ Մատոյց
զինքն պատարագ կամօք քովքս, և եբարձ
զպարտիս մարդկութեան մերոյ, հաշտեցու-
ցանել զտարագրեալքս ՚ի քէն՝ ՚ի ձեռն
հեղման արեան իւրոյ։ Համարեցաւ ընդ
մեռեալս՝ ՚ի գերեզմանի դնելով անա-
պականաբար, և զմահացեալսն ՚ի սկզբա-
նէ՝ կորզեաց ՚ի ձեռաց մահու։ Յար-
եաւ սքանչելապէս, և մշտնջենաւոր
կենդանութեան հաղորդս արար զմահկա-
նացու բնութիս մեր։ Եւ այժմ Տէր Աստուած
մեր՝ օրհնեա՛ զպատարագս զայս, առաքե-
լով զանհերևոյթ աջ քո. և հանդո՛ զկամս
ընդունելութեան քո ՚ի մատուցողքս. որք
հաւատացին առ հաւատչեայ ընդունել
զհանգիստ փոխեցելոյն, զոր աւանդե-
ցեր ՚ի պատրաստ բնակութիս քո անճառ-
բարեացդ։ Տո՛ Տէր՝ քո անճառ շնոր-
հօքդ, և բազմապատիկ ցնծութեամբ զժողո-
վուրդս քո, որք հաղորդ հանդիպեցան
լինել այսմ հոգևոր խրախութեան։ Ծա-
ւալեսցին ընդ մեզ պարակցութեամբ բա-
նականք զուարթնոցն, բազմելով ՚ի վայելս
հաշտարար կամաց քոց։ Որպէս զի երկո-


քումբք

քումբք հրճուանօք բերկրեսցին հոգիք
հանգուցելոցն ազդմամբ շնորհաց մե-
հոգւոյդ. որ անզեղջդ ես 'ի փոխատրուն
նց՝ որք կամակեր մտօք ընծայեցին ըզ
քոյդ քեզ։ Պայծառացո՛ տր աննուա-
զելի փայլմամբ զհոգիս այնոցիկ ,յորոց
անուն կատարին աղօթքս և պատարագս՝
բարեխօսութբ ընտրելոց քոց. որք մա-
տուցին զինքեանս արեամբ բանականաւ
քեզ ընդունողիդ հօր. և յանտեսանե-
լի քոց հատուցմանցդ վայելեսցեն 'ի
փառս՝ որ ոչն երևին։ Սորոյ գոհա
ցողական փառատրութբ և երկրպագութբ
մատուցանեմք օրհնութի ամենանբ երրոր
դութեդ՝ հօր և որդւոյ և հոգ.

Հայր մեր որ յեր։

## Կանոն Ի.Ը Օրհնելոյ։

ԱԾ ողորմեա՛ մեզ և օրհնեա՛ զմեզ. երևեցո՛ զերեսս քո 'ի մեզ և ո-
ղորմեա՛ մեզ։

զփոխն ըձան աաա՛։

Նաւ աւէ Շարական. ԴԿ։

Խչէ Պա՛րունակեալ պա՛հէին յանեղա՛կէն
դրախտին ըղձանապարհըս ծա՛-
ռոյն կենաց. քրովբէական հուր
քրն բոցեղէն սրովբէիւք. այսօր առ
տախտակաւ ցուցար յերկրի ամծաղարդ
փայտ կենաց և փրկութեան. դքեզ օրհ
նեն մանկունք նոր եկեղեցւոյ։
Սա՛րբեկայ ծառոյն վերաբերեալ խաչ
յորդաշիկէ դս փոխանակ ի սահակայ.
այլ ի վերայ քո զենար գառն անմա
րմն. ի հաշտութի հօր և ի բառնալ
ըզմեղս մեր. դքեզ. Պարծանք պօ
ղոսեան. դառնեալ ըզքեզ ամծայեն
բանին տեղի և զենմրան. քանզի
քեզ ապրեցաք ի խաժամոզ և
յաննմարմին գազանեն. և ի վերայ
քո հեղեալ շիթք անապական արեանն
ըզկորզանին ջընջեաց ըզմեղս. դքեզ.
Լուսոյս տէր ճայնէ աղաչանաց Վերոյ՝ ընթաւ-
ցէ շերտր՛։

Օրհնեալ ես տ՟ր ա՟ծ ամենակալ, արա-
րիչ ա՟մ արարածոց. որ արարեր զա՟մ
արարածս քո բարի և լաւ, և չէք ինչ
'ի նմ՟ խոտան. զոր ետուր 'ի պէտս որդ-
ւոց մարդկան. Որ արարեր զաղն 'ի հաս
տատուն երկրի՝ և 'ի ժողովս ջրոց։

Եւ արդ՝ մեք հաւատացեալքս ան-
ուան քում տ՟էր, առեալ զպարգևս քո՝
գոհանամք զառատ ողորմութ՟եդ քումն,
և փառաւորեմք զամենամեծ տէրութի
քո։ Օրհնեա՛ ✠ տ՟ր ողորմութ՟եդ քո զաղս
զայս, և սրբեա զսա։ Զի է ա՟մ ինչ՝ յոր
և խառնեսցի սա, եղիցի քեզ 'ի հաճոյս
և ընդունելութի, և մեզ 'ի մաքրութի՝
և յառողջութի հոգւոյ և մարմնոյ։ Որպ՟
զի հաստատեալք սովաւ և զուարճա-
ցեալք, յա՟մի անդադար փառաւորես-
ցուք զհայր և։

Եւ ապա ա՟նտնէ զաղն երիցս անգամ՝ ասելով։

Օրհնեսցի և սրբեսցի աղս այս նշանաւ
ս՟բ խաչիս և ս՟բ աւետարանաւս. յա-
նուն հօր և որդւոյ։

Եւ ասէ Ահեղ խորհուրդ քահանային։
Հոգւոյն հանգուս։ Ձ՟ն որդի։
Հայր մեր որ յերկ։

Մաղաղ Օրհնելոյ·

Օրհնութի Հաւր պատարագի, չաւ Սեղանոյ Մատաղի։

Դնեն ՚ի սեղան հաց, և անապակ գինի. և ասեն սաղմոս.

Յիշեսցէ տէր զամ պատարագս քո· Տացէ քեզ տր ըստ սրտի քում։

Փառք հօր և։ Շարական· դկ·

հնգ Որ յանէից ստեղծօղ գոյից·
արարչակից հօր բանդ աստուած·
Թողութիւն շնորհեա ննջեցելոց քոց
ծառայից· յորժամ գաս դատել
զոր անմարմին ձեռօք ստեղծեր։ Որ
՚ի հօրէ առաքեցար· և մարմնացար
՚ի սրբոյ կուսէն· Թողութիւն։ Որ ՚ի խաչին
անշնչացար· զմահու լուծեր
զիշխանութի· Թողութիւն։ Որ պսակիչդ
ես քոց սրբոց· և անվախճան
բարեաց բաշխօղ· Թողութիւն։

Եւ ասէ զաղօթս։

Գոհանամք զքեն տր ած ամենակալ, արարիչ ամ արարածոց· որ լցեր և զսր

դարեցեր զամ երկիր պտղալից և վայե
լուչ պարարտութբ, և ետուր զնա ՚ի
պէտս ուրախութե որդւոց մարդկան.
զի փառաւորեսցի հանապազ ամենաբ
անուն քո՝ ՚ի քո ընտեղծեալ ծառայ-
իցս, որք վայելեմք միշտ յամենառատ
բարութե քում։ Եւ արդ՝ բարերար և
բազմագութ տր՝ քեզ խոնարհեցուցա
նեմք զծունր սրտից մերոց, և հայցեմք
՚ի բարերարութե քումմէ, առաքեա ՚ի
ժամուս յայսմիկ զշնորհս ամենազօր
հոգւոյդ սբյ ՚ի վր սեղանոյս այսորիկ,
և օրհնեա ողորմութբ քով զառաջիկայ
հացս զայս և զգինիս, զոր ՚ի քո առատ
բարութէդ մատուցանեմք առաջի քո ան-
կարօտդ ած, ՚ի յիշատակ հոգւոյն հա-
ւատով ՚ի քեզ ննջեցելոյ։ Եւ շնոր-
հեա ամցուն որք հաղորդին ՚ի սմանէ՝
զփրկութին, և զառողջութին կենաց, և զթո
ղութին յանցանաց։ Եւ զհոգիս ննջեցե-
լոց մերոց յիշեա տր՝ և դասաւորեա ըդ
սբս քո յերկնաւոր առագաստին յա-
նապառ ուրախութեան. և պարգևեա
վարձս բարեաց՝ մատուցողաց պատարա

դիս։ Նոյն վ՟ն առատ մարդասիրութե՟ քո տ՟ր՝ ջնջեա՛ զձեռագիր յանցանաց ա՟մ ժողովրդեանս, բարեխօսութ՟բ ս՟բ ածած-նին և ա՟մ քոյ ս՟րց ․ և արժանի՛ արա զմեզ գտանել ողորմութ՟ի յաւուր հա-տուցման ա՟մ գործոց։ Զի դու ես կեանք անվախճան, և երանութի ա՟մ ար-դարոց։ Նոյն քեզ ամենաս՟բ երրոր-դութեանդ և միոյ տ՟րութ՟նդ վայելէ փառք՝ իշխա։ Հոգւոյն հան։ Բն որ։
Հայր մեր որ յերկինս։

## Կանոն Ջրհոր Օրհնելոյ։

Մտանէ քահանայն շխուշն և պաշտօնեայքն և երթեալ ՚ի պղծեալ ջրհորն, և տայ հանել քա-ռասուն դոյլ ջուր․ և ապա դոյլ մի այլ հանէ և դնէ առաջի նոր, և առէ սաղմոս ։

Ձայն տ՟ն ՚ի վերայ ջուրց ․ և ա՟ծ փառ։
Մատուցէք տ՟ն որդիք ա՟յ ․ մատու։
Մատուցէք տ՟ն զփառս և զպատիւ ։
Ձայն տ՟ն ՚ի վերայ ջուրց ․ և ա՟ծ փա։
Ձայն տեառն զօրութեանց , և ձայն։
Ձայն տեառն փշրէ զմայրս , և ման։

 Ման

Մանրեսցէ զնս՟ ոպ՟ զմատաղատունկն։
Ձայն տեառն հատանէ զբոց ՚ի հրոյ ։
Ձայն տեառն հաստատէ զեղջերուս ։
՚Ի տաճարի նորա ամենեքեան ասաս ։
Տէր զջրհեղեղս նստուցանէ և ցա ։
Տէր զօրութիւն ժողովրդեան իւրոյ ։

Խնկարկէ զբերան հորոյն և ասէ .

Շարական . ձկ ։

Աղբիւր կենաց բղխող շնորհաց հոգւոյդ իջեալ ՚ի բարձանց . զաննապականն պարգևս քո բաժանեցեր յանուքեալսն։ Որ ՚ի վր՟ ջուրցն գոլով ստեղծմանն էիր զարարածս . իջեալ ՚ի ջուրս աւազանին ծնանիս որդիս ա՟յ։ Որ զարդարեալ նորոգես միշտ զնոր քո զեկեղեցի . պէս պէս շնորհաց քոց պարգևօք փայլեն մանկունք սորա։

Լնու զջուրն խաչանման ՚ի ջրհորն և ասէ ,
Ալէլուիա ալէլուիա ։

Ձայն տն՟ ՚ի վր՟ ջուրց , և ած՟ փառաց որոտաց ; և տր՟ ինքն ՚ի վր՟ ջուրց։



Ըն

## Ընթերցուած ՚ի չորրորդ Թագաւորութենէ։

Եւ ասեն արք քաղաքին ցԵղիսէ. ա-
հաւասիկ բնակութիւն քաղաքիս բարւ' է,
ոպ̃ և տ̃րդ իմ տեսանէ. և ջուրքս չար,
և երկիրս անզաւակ։ Եւ ասէ Եղիսէ.
առէք առիս կուժ մի նոր, և դիք այդր։
և բերին առ նա։ Եւ ել Եղիսէ յականս
ջուրցն, և արկ անդր աղ և ասէ՝ այս-
պէս ասէ տ̃ր. բժշկեմ զջուրսդ զայդո-
սիկ, և մի ևս լիցի այտի մահ և յան-
զաւակութիւն։ և բժշկեցան ջուրքն մինչև
ցայսօր ը̃ բանին Եղիսէի զոր խօսեցաւ։

## Պօղոսի առաքելոյն ՚ի Կորնթացւոց Թղթոյն է ընթերցուած։

Ո՛չ կամիմ եթէ տգէտք իցէք եղբարք,
զի հարքն մեր ամենեքեան ընդ ամպովն
էին. և ամենեքին ընդ ծովն անցին. և
ամենեքին ՚ի մովսէս մկրտեցան յամպն
և ՚ի ծովն. և ամենեքեան զնոյն հոգևոր
կերակուրն կերին. և ամ̃քեան զնոյն
հոգևոր ըմպելին արբին։ զի ըմպէին ՚ի
հոգևոր վիմէն որ երթայր զհետ նց̃.
և վէմն էր ինքն ք̃ս։

## Ալէլուիա ալէլուիա։

Տեսին ամ՟ ծագք երկրի զփրկութիւն
այ՟ մերոյ։

### ՄԷՋ Աւետարանին ՅԷ ԲԷ որ ըստ Մատ։

Յայնժամ գայ յս՟ ՚ի գալիլեէ ՚ի յոր-
դանան առ յովհաննէս՝ մկրտել ՚ի նմա-
նէ։ Եւ յովհաննէս արգելուլ զնա՝ եւ
ասէ․ ինձ պիտոյ է ՚ի քէն մկրտել․ եւ
դու՝ առ իս գաս։ Պատասխանի ետ յս՟
եւ ասէ ցնա․ թոյլ տուր այժմ, զի այս-
պէս վայելէ մեզ լնուլ զա՟մ արդարութի՟․
եւ ապա թոյլ ետ նմա։ Եւ իբրեւ մկր-
տեցաւ յս՟ ել վաղվաղակի ՚ի ջրոյ ան-
տի․ եւ ահա բացան նմա երկինք․ եւ ե-
տես զհոգին այ՟՝ զի իջանէր իբրեւ զա-
ղաւնի եւ գայր ՚ի վե՟ նո՟։ Եւ ահա ձայն
յերկնից՝ որ ասէր․ դա է որդի իմ սի-
րելի, ընդ որ հաճեցայ։

Եւ եւս խաղաղ։ Աղաչեսցուք զարարիչն
ած՟, եւ խնդրեսցուք ՚ի նմանէ․ զի մաք-
րեսցէ զջուրս զայս յա՟մ աղտեղութե՟, եւ
տացէ ՚ի պէտս ծառայից իւրոց շնոր-
հօք ողորմութե՟ իւրոյ․ ամենակալ տր՟ ած՟
մեր կեցուսցէ եւ։

Տէր ողորմեա, Տ՟ր ողորմեա, Տ՟ր ողորմեա։

Տ՟ր ա՟ծ մեր, որ արարիչդ ես ա՟մ արարածոց՝ երևելեաց և աներևութից. որ գոյացուցեր զծով և զցամաք, և զոր 'ի ն՟ս վայելչութ՟ի. և հայեցեալ տեսեր զա՟մ արարածս քո, և ահա՛ բարի՛ են յոյժ։ Յորոց վ՟ր ստեղծեալ 'ի քէն զմարդն իշխան կարգեցեր։ Իսկ ինքնայօժար կամօք չարացեալ բանսարկուն՝ պատրեալ զնա մոլորեցոյց 'ի փառացն. և սերմանեաց 'ի նմա զիւր չարութ՟ե սերմն։ Ո՛ որ խնամօք արարչական ողորմութ՟ե քո՟ զերծուցանել կամելով 'ի նորին դաւաճանութէն, ետուր զգրաւորական օրէնս ազգի մարդկան 'ի դաստիարակութ՟ի։ Նաև զողջաբարոյ միտս ն՟ց զգուշացուցանելով 'ի հեթանոսական մոլորութ՟եց՝ գրեցեր ն՟ց զխտրութ՟ի կերակրոյն։ Իսկ յերևիլ միածնի քո՝ տ՟ն մերոյ յ՟ի ք՟ի, որ լուսաւորեաց զեկեղեցի իւր ս՟բ՝ աւետարանական վարդապետութ՟են, ուսաք 'ի նմանէ և հաւատացաք ո՛չ արտաքուստ մտանել 'ի մեզ պղծութ՟ի ինչ յարարածոցս, զոր ետուր մեզ 'ի

վայելս մարմնական պիտոյից։ Վ՟ն որոյ
և մեք աշակերտեալքս վարդապետութե
ս՟բյ աւետարանին՝ և քարոզութե ս՟բց
առաքելոցն, խնդրեմք 'ի քէն և աղա-
չեմք, 'ի վերակոչելս մեր՝ զերկրպագելի
անուն ամենասուրբ երրորդութեդ՝ հօր
և որդւոյ և հոգւոյդ ս՟բյ, սրբեա՛ ամե-
նակարող զօրութեդ զջրհորս զայս՝ և
զոր 'ի սմա զջուրս. և մաքրեա՛ յա՟մ կար-
ծեալ պղծութէ՝ 'ի մերմէ հիւանդամտու-
թենէս. և զօրացո՛ զտկար միտս մեր՝
առնուլ զսա առանց խղճի 'ի վայելս
մարմնական պիտոյից մերոց։ Եւ գոհու-
թե փառաւորել զքեզ հայր՝ որդւովդ
միածնիւ՝ և հոգւովդ սրբով, այժմ և
միշտ և յա։

Խաղաղութիւն ամենեցուն։

Տէր մեր յ՟ս ք՟ս միածին որդի և բան-
ա՟ծ, որ զախտացեալ բնութիս մեր խառ-
նեալ ընդ անախտ ա՟ծութիդ՝ 'ի վ՟ր մեր
ա՟բ արարեր զանձն քո։ Աւասի և մեք
սրբեալք 'ի ճշմարտութէդ քումմէ՝ դո-
հանամք զքէն, և աղաչեմք զմիայն բա-
րերարդ և զմարդասէրդ. խոնարհեա՛

Այլ մեք պարտիմք գոհանալ զած յամ ժամ վասն ձեր եղբարք սիրեցեալք 'ի տնէ . զի ընտրեաց զմեզ ած իսկզբանէ 'ի փրկութի՝ սրբութբ հոգւոյն , և հաւատովքն ճշմարտութե . յոր և կոչեաց զձեզ աւետարանաւն մերով 'ի փրկութի՝ փառացն տն մերոյ յի քի։ Այսուհետև եղբարք՝ հաստատուն կացէք՝ և պնդկալարուք զաւանդութիւն՝ զոր ուսարուք , եթէ բանիւ , և եթէ թղթով մերով։ Այլ ինքն տր մեր յս քս , և ած հայր մեր , որ սիրեաց զմեզ՝ և ետ մեզ մխիթարութի յաւիտենից՝ և յոյս բարեաց շնորհօք , մխիթարեսցէ զսիրտս ձեր , և հաստատեսցէ յամ բանս և 'ի գործս բարութե ։

Ալէ ալէ։ Բարձր առնեմ զքեզ տր զի ընկալար զիս . և ոչ ուրախ ար։

Աւ։ Աւետարանն Յի Քի որ ըստ Ղուկա։
Տէրն մեր Յս Քս ասէ ։

Զգոյշ լերուք անձանց , գուցէ ծանրանայցեն սիրտք ձեր շուայտութբ և

ար

արբեցուք՝ և հոգւովք աշխարհակա-
նօք, և յանկարծակի հասանիցէ 'ի վ՜ր
ձեր օրն այն. զի իբրև զորոգայթ հասա-
նիցէ 'ի վ՜ր ամենեցուն որ բնակեալ են
ընդ ա՜մ երեսս երկրի։ Արթուն կացէք
այսուհետև, յա՜մ ժամ աղօթս արարէք,
զի արժանի լինիջիք զերծանիլ յայնմ
ամենայնէ որ լինելոց է. և կալ առաջի
որդւոյ մարդոյ։ Եւ 'ի տուէ 'ի տաճա-
րին ուսուցանէր, և զգիշերս ելեալ ա-
գանէր 'ի լերինն՝ որ կոչիւր Ձիթենեաց։
Եւ ա՜մ ժողովուրդն կանխէր ընդ առա-
ւօտս առ նա 'ի տաճարն լսել 'ի նմանէ։

Մ՜ն 'ի վերուստ խաղաղութե՜. ժբղ

Գոհանամք զքէն տ՜ր՝ հայր տ՜ն մերոյ ամբ
յ՜ի ք՜ի, որ յոյց ելեր, և արդարութե՜
քով փրկեցեր զմեզ 'ի մեքենայից բան-
սարկուին. զի նախանձեցաւ և եհան
զմեզ պատրանօք 'ի յաւէտժական կենացն,
արտաքսահմանելով զմեզ 'ի կորուստ և
յապականութի։ Այլ դու բարերար և
մարդասէր ա՜ծ՝ ոչ թողեր զն՜ր դառնու-
թե՜ թունիցն 'ի մեզ յարակայ. վ՜յ զմահ
կոչեցեր և հեղեր 'ի վ՜ր ա՜մ արարածոց



քոյ,

քոյ, զի մի՛ անմահ մնասցէ չարութիւն պա
տահել. այլ բառնալով զմեղ ՚ի կենացս
յայսցանէ՝ և հատանելով ՚ի մեղաց, եղև
փրկութի՝ բարերարիդ պատուհասն։ Իսկ
՚ի վախճանի աւուրցս այսոցիկ առաքե-
ցեր զորդիդ քո սիրելի ՚ի կերպարանս
մահու մեղաց. որ դատապարտեց զմեղս
մարմնով իւրով և կամաւոր խաչելութեն
իւրով խորտակեաց զզօրութի թշնամ-
ւոյն. եղև առաջին պտուղ ննջեցելոց,
և ածահրաշ յարութեն իւրով հրաւիր
եաց զմեզ յիւր անմահութին։ Որ հա
ւատացեալ ծառայս քո այս՝ մկրտեցաւ
՚ի մահ քն քո. և լցեալ այժմ զժամանակ
պանդխտութե կենցաղավարութե իւրոյ,
փոխեցաւ ՚ի կէտ սահմանադրութե քո։
Արդ աղաչեմք զքեզ հայր տր՝ միջնոր
դութե մարմնոյ և արեան միածնի որդ
ւոյ քո՝ և խոնարհութե, թող զպարտիս
սորա զկամայ և զակամայ, զոր վիրաւոր
եաց անմարմին թշնամին պատրանօք խա
բէութե իւրոյ. զի դու միայն ես տր և
բարերար ած, որ յանդգութե ՚ի դդութի
ածեր զմե։ Դու այժմ զվէրս մր բժշ-

 կեա,

կեամ, և խաղաղութ̃ անցո՛ զսա ընդ խա-
ւարային իշխանութ̃ին, զի մի՛ զչարութ̃ի
իւրեանց գտցեն 'ի ծառայս քո։ Եւ
ջնջեամ որ զձեռագիր ներգործութ̃եց
նց՝ զոր 'ի սմա սերմանեցին, և տուր
սմա ճանապարհ բարի։ Բացակա՛յ եղեցի
'ի սմանէ հրեղէն սուրն՝ որ պահէ՛ զճա-
նապարհ ծառոյն կենաց, պատկառե-
լով 'ի փրկական նշանէ խաչին՝ որ զպ-
տուղն կենաց մեզ ընծայեցոյց առ հա-
ւատացեալս յաւիտենական կենացն և ա-
ռաջնորդ։ Յոր ապաւինեալ ծառայս
քո՝ սովաւ հասցէ 'ի պահեստ՝ ուր սբ̃ք
ամ̃ հաւաքեալ սպասեն մեծի հարսան-
եացդ, յերևիլ մեծիդ ա̃յ՝ և փրկչիդ յ̃ի
ք̃ի։ 'Ի ձայն փողոյ մեծի՝ յորժամ սա-
սանին տարրեղէն արարածք․ գալարին
երկինք․ նսեմանան լուսաւորք․ թօթա
փին աստեղք․ ցոլանան գետք հրեղէնք
յերկնից, և երևին բանակք անմահից։
Եւ յակնարկել դատաւորին սասանի
երկիր․ բանին կնքեալ գերեզմանք․ նո
րոգին հողացեալ մարմինք․ և հոգիքն
սլացեալ իբրև զարծուիս՝ անդր հասա

 նեն,

նեն, և զգենուն զանապական մարմինսն 'ի վայրկեան ժամանակի, և ժամանեն յիւրաքանչիւր տեղիս։ Աղաչեմք զքեզ տր՝ ժամանեցո՛ զծառայս քո զայս յանսպառ ուրախութիւնն. և զա՛մն զմեզ զհաւատացեալքս 'ի քեզ՝ խաղաղութե՛ պահեա՛, և մխիթարեա՛ հոգւով և մարմնով։ Զի արժանի լիցուք փառաւորել զհայր և.

Խաղաղութիւն ամենեցուն.

Օրհնեա՛լ ես տր ա՛ծ մեր, որ անդորրիչ ես նեղելոց, և ընդունող հոգւոցն հանգուցելոց. ընկա՛լ զհոգի ծառայիս քո 'ի բարի. և փարատեա՛ զսուգ և զտրտմութի՛ 'ի սիրելեաց սր՛, որք հետևեցան յուղարկել զսա ընդ երկայնաձիգ ճանապարհն. և մորմոքին 'ի վր՛ անդառնալի ուղեգնացութե՛ սորա. և յաւէժ անջատելոյ 'ի սմանէ առ ժամանակ մի՝ մինչև յիւրեանց յուղի անկանիլն յայսմ բազմաժողով ծովածուփ կենցաղոյս։ Եւ զչափաւոր արտասուս սոցա ընկա՛լ քեզ 'ի հաճոյս, և մի՛ 'ի զայրացումն. և մխիթարեա՛ սփոփեսցես զլքեալ սիրտս սոցա դալարեամբ շնորհի քո. և զօրա-

ցուցես զտարակուսեալ հոգիս սոցա
առաքմամբ հոգւոյդ սբյ՝ Դու ✝ կրն-
քեալ պահեսցես զգերեզմանս փակելո
յանուն քո՝ նշանաւ խաչիւ քով՝ մին-
չեւ յօր կրկնակի կենսաբեր գալստեանն
քո: Զի քո ամենակարող զօրութդ՝
եղեմնապատ եւ ձիւնաթաղեալ պահին
ա͞մ արմատք , եւ սերմանիքն թաղեալ
յերկիր մեռանին, եւ'ի ժամանակս որոտ
ընդոստ գարնանային յարութեն զուար
ճացեալ պայծառանան. զորս կարդեցեր
մեզ'ի սպաս պիտոյից: Իսկ զբանական
կենդանիքս պահեալ անկորուստ՝ խնա-
մով ա͞ծութե քո՝ յարուցանես դարձեալ
'ի հողոյ, եւ նորոգես 'ի պատկեր փառաց
քոց: Ա͞յ խոնարհեցար 'ի հայրական
ծոցոյ՝ լինել մեզ պատկերակից՝ հաղորդ-
անմահութե. որ ոչ մնացեր 'ի քո մշտնջե
նաւոր անմահութիդ , այլ հատդ կենդա
նութե զմահ յանձն առեր , զի բազում
արասցես արդիւնս: Իջեր 'ի գերեզ-
ման , լուծեր զերկունս մահու , եւ ըզ
դժոխս աւերեցեր . որ յերկնաւորաց
օրհնիս , եւ յերկրաւորաց , եւ 'ի սանդա

րամետականաց երկրպագիս. և լի է ամ
երկիր փառօք քո:

Որդ՝ պահեա ամենազօր ած՝ զհոգի մր
ու ամ մեզ և սիրելիս անուան քո. և
զդերեզման ծառայիս քո այսօրիկ ✠ կրն
քեալ պահեսցես. որ փակես զխորս, և
կնքես ամենազօր աջով քով: Որ եր-
կինք՝ և երկնից երկինք՝ և երկիր ամ
հաստատեալ կան բանիւ քով. այսպէս
անշարժ եղիցի ✠ կնիք տէրուն քո ՚ի
վր բնակութե սորա և պահարանի ծա-
ռայիս: Եւ մի իշխեսցէ մերձենալ ՚ի
սա պիղծ և անմաքուր դեւն, ոչ ՚ի մար
մին և յասկերս հեթանոսաց, որք ոչ ու-
նին զծնունդ մր աւազանին, և զկնիքն
ահաւոր և պատկառելի ՚ի վր դերեզմա
նացն: Զի ծառայս քո այս՝ որ հրաւիր
եալ կոչեցաւ ՚ի քոյոց հրաւիրողացդ ՚ի
հանդիսա քո. որ հաւատացեալ ՚ի քեզ
՚ի կենդանութե իւրում՝ թաղեցաւ ընդ
քեզ մկրտութբն ՚ի մահ, և սերմանեալ
պահեցաւ ՚ի քէն, և կոչեցեալ՝ յերկիր
դարձաւ: Լուր աղաչանաց մերոյ մար
դասէր ած՝ և թող սմա զամ մեղս իւր

զոր մեղաւ. և քաւի՛չ լեր ա՟մ սխալա-
նաց մ՟ր, եթէ կամայ՝ և եթէ ակամայ,
եթէ բանիւ՝ և եթէ գործով, եթէ
խորհրդով՝ և եթէ մտածութե՟. զա՟մ կ-
տակ չարին պատառեա, և զձեռագիր
մեղացն ջնջեա մ՟ր, և զաղտ ծնութե՟ն
լուսոյ: Ո՛վ ի անպատկառ լեցի ՚ի մեծի
որոտընդոստ աւուրն վերջնում, ընդ-
համօրէն պահպանելոյն ՚ի քէն՝ ընդ-
առաջ վերանալ քեզ նորափետուր ար-
փիափայլ դիմօք՝ զարդարեալ ՚ի զարդ-
անկողոպտելի. յորժամ գաս և երևիս
ա՟ծդ ՚ի մէջ ա՟ծացելոց՝ բաժանել և ո-
րոշել զզանազան պատիւս սիրելեաց քոց:
Նոյնժամ աղաչեմք զքեզ տ՟ր՝ և զմեզ
զամենեսեան զհաւատացեալքս ՚ի քեզ
արժանի՛ արա՛ զայս ահաւոր և զսոսկալի
օրս տպաւորել հանապազ առաջի աչաց
մերոց. և յա՟մ զգալի և ՚ի պատրողական
կենցաղավարութեց պատապարեա զմիտս
և զզգայարանս մեր: Պատկերացո՛ տ՟ր՝
զանհրաժեշտ գալուստ քո առաջի աչաց
մերոց. դու տ՟ր քաղցրութե՟դ քո քաւեա
զմեզ ՚ի մեղաց մերոց. ՚ի հանդերձեալ

 գե

գեհենէն փրկեա՛ զմեզ զամենեսեան, և ժամանեցո՛ արժանապէս հանդիպիլ փառաց փեսայիդ 'ի գալստեան քում՝ ամենագութ տր։ Նորոգեա՛ և զմարմին խոնարհութե մերոյ ըստ անեղծ փառաց քոց՝ յս քս ած մեր։ Նու քեզ ընդ հօր՝ և սբ հոգւոյդ՝ վայելէ փառք՝ իշ։

Փառաց 'ի փառս բարձրանան յաչա։

Հոգւոցն հանգուցելոց։ Ո̃ հանգուցել։
Քս որդի այ անոխակալ և։

Օրհնեսցի և կնքեալ պահեսցի գերեզման և ոսկերք ծա։

Հայր մեր որ յերկինս։

Կանոն՝ Մեծի Նօթնաւուր կատարելոյ։
Սրբոյն 'ի գերեզմանն, և առէն զանբիծն 'ի բուռն։ և Ծարոյան, Յարութեանն է։

Բնաբերդարանն Վեռայետայ Իար։

Այսպէս ասէ տր · զամ ժողովել զամ ազգս և զլեզուս · եկեսցեն և տեսցեն զփառս իմ · և թողից 'ի վե նշ նշան։ Նու առաքեցից 'ի նոցանէ

փրկեալս յազգս․ ՚ի Թարսիս, և ՚ի Փուլթ, և ՚ի Լուդ, և ՚ի Մոսոք, և ՚ի Թոբէլ, և յԵլլադա, և ՚ի կղզիս հեռաւորս՝ որոց չիցէ լուեալ զանուն իմ, և ո՛չ տեսեալ զփառս իմ․ և պատմեսցեն զփառս իմ և զանուն իմ ՚ի մէջ ազգաց։ Եւ ածցեն զեղբարս իւրեանց յա՟մ ազգաց պատարագ Տ՟ն․ հեծեալս կառօք, հանդերձ պալարակաւ երիվարօք հովանոցօք ՚ի ս՟բ քաղաքն Եղ՟էմ, ասէ Տ՟ր։

Պօղոսի առաքելոյն ՚ի Կորնթ․։

Այլ ասիցէ՞ ոք, զիա՞րդ յառնեն մեռեալք, կամ որպիսի՞ մարմնով գայցեն․ Անմիտ, դու զոր սերմանես, ո՛չ կենդանանայ՝ եթէ ոչ մեռանիցի․ և զոր սերմանես, ո՛չ զնոյն մարմին որ ծնանելո՛ցն իցէ՝ սերմանես, այլ հատ մերկ․ եթէ ցորենոյ իցէ, և եթէ այլոց սերմանեաց։ Եւ ա՟ծ տայ նմա մարմին՝ որ՟պ և կամի․ և իւրաքանչիւր սերմանեացն զիւր մարմին։ Ո՛չ ա՟մ մարմին՝ նոյն մարմին է․ այլ՝ այլ մարմին է մարդկան, և այլ մարմին անասնոց, այլ մարմին թռչնոց, և այլ մարմին ձկանց․ և մար-

 մինք

մինք երկնաւորք , և մարմինք երկրաւորք, այլ՝ այլ փառք երկնաւորաց են, և այլ փառք երկրաւորաց։ այլ փառք արեգական , և այլ փառք լուսնի , այլ փառք աստեղաց , և աստղ քան զաստղ առաւել է փառօք։

Ալէ ալէ։ Տէր՝ ողորմութիւն քո յա։
Աւ. Աւետարանն Յհ. ԺԲ. որ ըստ Յօհան։
Տէրն մեր Յս. Քս.։

Խաղաղութիւն թողում ձեզ, զխաղաղութիւն զիմ տամ ձեզ. ոչ որպէս աշխարհս տայ՝ տամ ես ձեզ. մի խռովեսցին սիրտք ձեր, և մի զանգիտեսցեն։ Լուայք զի ասացի ես ձեզ՝ թէ երթամ և գամ առ ձեզ. եթէ սիրէիք զիս՝ ապա ուրախ լեալ էր ձեր՝ եթէ ես առ Հայր երթամ, զի Հայր իմ մեծ է քան զիս. Եւ այժմ ասացի ձեզ մինչչև եղեալ. զի յորժամ լինիցի, հաւատասջիք. Ոչ ևս այլ շատ խօսեցայց ընդ ձեզ. գայ իշխան աշխարհիս այսորիկ, և յիս ինչ ոչ գտանէ։ այլ զի ծանիցէ աշխարհ՝ եթէ սիրեմ զՀայր. և որպէս պատուիրեաց ինձ Հայր՝ այնպէս առնեմ։ Յոտն արիք գնասցուք աստի։

Քարոզ։

Սեան ՚ի վերուստ։ Սո՛ լսելի լինելոյ։
Սեան քաւիչ և նե։ Սեան թողլոյ։
Սո՛ զի մի ընդ խոռ։ Նաւ եւս միաբան։

Նա․ առէ ողբն։

Ած յաւիտենական և թագաւոր ան-
մահ, որ ստեղծեր զմարդն ՚ի հողոյ, և
եդիր զնա ՚ի դրախտին փափկութեան գոր-
ծել զնա և պահել, և պատուիրանա-
դրեցեր կալ ըստ հրամանի քում։ Իսկ
բանսարկու թշնամին պատրողական բա-
նիւք խաբեաց զնա, խրատեաց լուծա-
նել զածային հրամանսդ։ Եւ նորա
ունկնդիր եղեալ չարին, արտաքսեցաւ
՚ի լուսեղէն փառացն. և փոխանակ ան-
մահութեան՝ մահու եղև ժառանգաւոր,
ըստ արարչական հրամանիդ զոր ասա-
ցեր, հող էիր՝ և ՚ի հող դարձջիր. և ոչ
կարացին արարածք հնացուցանել զհրա-
մայեալն ՚ի քէն։ Եւ արդ՝ տր ած մեր
ողորմած և մարդասէր՝ գթա՛ ՚ի ծառայս
քո յայս, որ ելից զերկրաւոր կեանս
իւր, և դարձաւ անդրէն ՚ի հող ըստ
հրամանի քում։ Ընկա՛լ զհոգի սորա, և



լաւո

խառնեմ 'ի գունդս հրեշտակաց քոց . և արժանի՛ արա պարել և ցնծալ ընդ ս՟բս և ընդ սիրելիս անուան քո ս՟բյ ։ Եւ ընդ նոսին գոհանալով փառաւո-
րել զհ՟այր և զորդի և զս՟բ հ՟ո ։

Խաղաղութեան աղնէցուն ։

Օրհնեա՛լ ես տ՟ր ա՟ծ մեր՝ յոյս ա՟մ արարածոց , որ նստիս յաթոռս քերովբէականս , և բարեբանեալ երկրպագիս յերկնաւորաց և յերկրաւորաց . որ և կոչեցեր զծառայս քո զայս 'ի հանդերձեալ կեանսդ՝ զոր խոստացար ա՟մ հաւատացելոց քոց ։ Գթա՛ 'ի ստեղծուածս ձեռաց քոց , և հանգո՛ զհոգի ս՟ր 'ի խորանսդ լուսոյ , բարեխօսութ՟բ մօր քո ս՟բյ կուսին մարիամու ։ Լո՛ւր տ՟ր պաղատանաց մերոց , որ հայցեմք 'ի քէն զթողութի՟ն սորա և մեր ։ Զի դո՛ւ ես ա՟ծ արդարոց և մեղաւորաց . փառք ս՟բց , և հանգիստ աշխատելոց ։ Ընկա՛լ զհոգի սորա 'ի տեղւոջ լուսոյ՝ և 'ի տեղւոջ հանգստեան . 'ի թիկս ս՟բց՝ և 'ի համարս արդարոց ։ Եւ հանգո՛ զսա 'ի գոգն աբրահամու ընդ ա՛յլ պայծառացեալ ս՟բց



քոց .

քոյ. և զմեզ արժանի՛ արա Տ̃ր՝ հասանել
մասին ժառանգութե̃ ո̃րցն ՚ի լոյս. Օ է
ընդ նոսին միշտ գոհանալով փառաւո-
րեսցուք զքեզ ընդ Հօր.

Փայլին արդարքն յարքայութեան և.
Քո անպատում խոնարհութեամբդ.

Փառաց ՚ի փառս բարձրանան յաջա.
Քահանայք և ժողովուրդք.

Տրտմահաղորդ չարչարանօք.

Հոգւոցն հանգուցելոց. Ա̃ն հանգուցել.
Ք̃ս որդի Ա̃յ անոխակալ և.

Օրհնեսցի և ✠ կնքեալ պահեսցի գե-
րեզման և ոսկերք դա.

Հայր մեր որ յերկինս.

Եւ թէ կամի Քառասնօրէաց, կամ Տարեմուտ
կատարել. դարձեալ այս է կարգն, այսինքն՝
Եօթնօրէից.

Կանոն Տղայաթաղ կատարելոյ:

Նախ՝ ասէ սաղմոս, Առ քեզ տր համբարձի զանձն իմ, Դ գուբղայ·

Եւ ապա՝ Օրհնեալ հոգիդ որ ած ձյմա·

Ողորմեա: Պատեամ տր·

Եւ ապա ասէ Շարական, առաջին ձայն:

Օրհնեցէք մանկունք ըղ·

հնգ Ո՛ր ստեղծմամբ ըստ պատկերի քո տր
պատուեցեր զմեզ· ընկալ և այժմ
զընծայեցեալսն ի քեզ ուղիղ հաւա
տով· ըստ մեծի քում ողորմութեն:
Ո՛ր շնորհօք որ հոգւոյն լուսաւորե
ցեր· յիշատակի իւրեանց զհոգիս նց
ընկալ մարդասէր· ըստ մե: Որք հաղոր
դեցան մարմնոյ և արեան քո տր· հան
գո զհոգիս նց ընդ սրբս քո քս ած·
քանզի գինք որ արեան քո են:

հնգ Օ հոգիս ծառայից քոց քս· ընկալ
ի դաս անդրանկաց գրելոց ի յեր
կինս Ընկալ վերն սոցա ըղբանուոր

պա

պատմարագս 'ի մէնջ . և շնորհեաց նոցա
ընդթողութիւն գտանել յաւուրն յետնում։

Հայր բարձրուամողին . խոստովանիմ առ ողջ
քեզ որդւոյ զանմահական որդին . թող ինձ
ընդմեղս իմ . և ողորմեա։ Տէր որ գթա
ցար 'ի կնքին քահանայցն . գթա և յիս
'ի մեղաւորս . և ողորմ։ Տէր որ դարձու
ցեր ընդմաքսաւորն 'ի գիտութիւն ճշմար
տութեան . դարձո և զիս ընդմոլորեալս .
և ողորմ։

Տէր որ 'ի վերայ քերովբէից փառաբան ողջ
նիս . քաղցրութեամբ խոնարհեաց ընկալ
զաղաչանս մեր։ Տէր որ շնորհեցեր
ողորմութիւն ազգի մարդկան . քաղց։
Տէր որ ուսուցեր մեզ յամ ժամ փա
ռըս տալ անուանըդ քում սըրբոյ .
քաղց։

Սկ Անդամունց բաշխող քո . 'ի բեթա ող
նիայ եկաւորեալ այսօր . բարեկամին
ղազարու պարգևեց զկենդանութիւն։
Տընօրինաբար արտասուեցեր ընդ մար

Թայի և ընդ Մարիամու. ողբակցէր և
որդ մարդ հարցանէր ուր եդիք ըզդա
զորոս: Եւ որ զձ բարբառով յա
րուցանէ 'ի մեռելոց ըզչորեքօրեայն.
և զուգընթաց ձայնին մեռեալն եկն
արտաքս անապականն:

ձ̃է Անձառելի հօր էակից 'ի խաչ ելեր
կամաւ հօր. ողորմեա: Անմահութեանց
տըւօղ Քս 'ի գերեզմանն իջեր որդ
մարդ. ողորմ: Եւ յերրորդ աւուր
յարեար յոյս յարութեան ցուցար մեզ.
ողորմ:

հ̃գ Որ 'ի քրովբէական կառս հանգ
չիս. այսօր իջեր յերկնից 'ի դաշտս ա
ռաքելոցն Սբ Հոգի. օրհնեալ ես թա
գաւոր անմահ: Որ դընաս 'ի վերայ
թևոց հողմոց. այսօր 'ի հրեղէն լե
զուս բաժանեալ հանգեաւ յառաքել
սըն Սբ Հոգի. օրհ: Որ խնամես տես
չութեամբ զքո զարարածս. այսօր եկիր 'ի
հաստատել զեկեղեցի քո Սբ Հոգի. օրհ:

Ո՛ր ըղձանն ամ՛ծ բաւական եղեր. ըն | Մ
դունել յորդորմանց միշտ կոյս. զքեզ
մեծացուցանեմք որ օրհնեալդ ես ՚ի
կանայս։ Ո՛ր էիր լուսոյն աթոռ՝ ե
ղեր. բառնալով ՚ի գիրկս քո մարմ
նով. զքեզ։ Նորամա տաճար տրնօրէ
նութեան. կոչեցար հոգւոյն սրբոյ միշտ
կոյս. զքեզ։

Ո՛ր խաչին օգնական հաւատացելոց. | ԽՉԷ
կանգնեցաւ ՚ի յերկրի յաղթող թշ
նամւոյն. եկայք ժողովուրդք երկրպ
պագեսցուք. Արարչին ամ՛ծ բարձրա
ցաւ ՚ի խաչին. և զմեռեալս մեղօք փայ
տին ճշմարտութեամբն. ՚ի սմա նորոգեալ
կենդանացոյց. ՚Ի միասնական գալըս
տեան ամ՛ ծնօղութեան. ամ՛ խաչն երևի
և լուսաւորէ. զի նա է յոյս հաւա
տացելոց։

Փոխ. հոգ Ա. Հաշտեա ՚ի ձեռըն Աստ
մօրմնոյ և արեան քո ամ. և պարգևեա
նոցա թողութիւն յանցանացն քո։


ողջ

Բարբառ։

Մ՞ա ՚ի վերուստ։ Մ՞ա լսելի լինելոյ։
Մասն քաւիչ և նեւ։ Մասն Թողլոյ։
Մ՞ա զի մի՛ ընդխառ։ Նաև ևս միաբան։

Եւ աւէ պաղջիւ։

Մե՛ ես տր ած մեր՝ հզօր և ահաւոր․
հայր գթութեց՝ և ած ողորմութեց․ որ
նստիս ՚ի բարձունս, և բարեբանիս ՚ի
սբց քոց, և խնամես քաղցրութբ զարա
րածս քո։ Որ վս անբաւ սիրոյ քո գը
թացեալ ՚ի ստեղծուածս անարատ ձե-
ռաց քոց, առաքեցեր յաշխարհս ողոր-
մութբ քով զծնյածին որդին քո՝ առ
՚ի փրկել զգրաւեալս մահու զորդիս
մարդկան ՚ի ձեռացն դժոխոց։ Որ եկն
մարմնացաւ յանարատ և ՚ի սբ կուսէն
մարիամայ, և ծնաւ տղայապէս։ Խան-
ձարրօք պատեցաւ, և յանբանից մսուր
եդաւ․ ՚ի կուսական ստեանցն կերակ
րեցաւ, որ բանայ զձեռն իւր՝ և կերակ
րէ զարարածս։ Մանուկ մատաղ ըստ
եսայեայ՝ էարկ զձեռն իւր ՚ի ծակ ի-
ժից, և եղծ զզօրութի աներևոյթ
օձին։ Նոր զօրութիս բազումս և

 մե

մեծամեծս՝ ա՟ծահրաշ ներգործութե՟ն
իւրով, և ծանոյց զանուն քո Հայր՝ ա՟մ
աշխարհի։ Նստաւ խոնարհութե՟ ՚ի վ՟ր
յաւանակի, և բարեբանեցաւ ՚ի տղայոց,
ը՟ն նախաձայն բանի երգողին դաւթայ։
Եւ կատարեաց զա՟ծագործ անօրէնու-
թի՟ն իւր՝ յանձն էառ զմահ մարմնով.
թաղեցաւ ՚ի յերկրի, և յարեաւ ինքն
իշխան զօրութե՟ն իւրով, և ետ յոյս
յարութե՟ հաւատացելոց իւրոց։

Եւ արդ՝ ո՟ր բարերար՝ ընկալ զհոգի
տղայիս այսորիկ, որ հաւատացեալ յա-
նուն միածնի քո, ծնաւ ՚ի ս՟բ աւազա-
նէն վերստին ծննդեամբ. և այժմ ՚ի
տղայական հասակին կոչեցաւ առ քեզ։
Ընկալ զնա և դասեա ընդ ս՟բս քո, և
հանգո՛ ՚ի խորանս երկնից. զի դու ես
ա՟ծ մեր, և բաց ՚ի քէն զայլ ոք ո՛չ գի-
տեմք։ Եւ քեզ ընդ որդւոյ և ս՟բ հո՟։

Խաղաղութիւն ամենեցուն։

Օրհնեալ ես արդարադատ և ողորմած
ա՟ծ, որոյ ճշմարտութի՟դ անպատում է,
և ողորմութե՟դ ո՛չ գոյ թիւ։ Որ վ՟ն մար-
դասիրութե՟ քո լուծեր ՚ի հող զշնչաւոր



մար

մարմինս զպատրեալս 'ի բանսարկուէն՝
ասելով, հող էիր և 'ի հող դարձցիս. ընդ
որում խոնարհեցար 'ի ծերոց մինչև
ցտղայս, և յերկիր մածան մեջք մեր.
Իսկ մեծ բազում ողորմութեամբ քո խոնար
հեցար մարդասէր տէր՝ նորոգել 'ի մեզ
զմարմին հոգևոր. Առաքեցար դու ինքն
միածինդ հօր, և տղայացեալ 'ի սրբոյ կու-
սէն՝ տպաւորեցեր յանձին քում զմահ
մարմնով կամաւորապէս, զի տացես մեզ
զքո անմահութիւնդ. Իջեր 'ի դերեզման,
համարելով ընդ մեռեալս. և յարու-
ցեալ համբարձար յերկինս. և զսիրել
եաց քոց զմարմին խոնարհումն՝ տնկա-
կից և կերպարանակից առնել խոստա-
ցար մարմնոց փառաց քոց յերևիլ քո
տէր՝ 'ի փող յետին, յորժամ գաս տալ
վարձս սիրելեաց քոց.

Արդ՝ աղաչեմք զքեզ մանկացեալդ աստուած
յիսուս քրիստոս, արա արժանի զտղայս զայս՝ փա-
ռաւորութեան ընդ արդարս քո յաւուր
յայնմիկ, հանդիպել քեզ զուարթ երե
սօք, և փառաւորել ցնծութեամբ և գոհութեամբ
զքեզ ընդ հօր՝ և սուրբ հոգւոյդ.

## Նոյն աւուր։ ՚Ի բերանոյ մանկանց տղայոց և ստնդ։

### ԻՆԲԵՐԳՈՒԱԾՍ ՅԻՍՈՒՍԵԱՅ ՏԷՐ։

Ահաւասիկ տ՟ր ա՟ծ մեր, յոր յուսացեալ էաք՝ և ապրեցուսցէ զմեզ. զի սա է տ՟ր որում սպասէաք սմա։ Ցնծասցուք և ուրախ լիցուք ՚ի փրկութեան մերում. և տացէ մեզ տ՟ր ա՟ծ մեր հանգիստ ՚ի լերինն սրբութեան իւրոյ։ Եւ մտցէ՛ ՚ի նա ժողովուրդ որ պահէ՛ զողորմութի և զճշմարտութի. որ վերակացու է ճշմարտութե, և պահէ՛ զխաղաղութի։ Եւ արդ՝ մխիթարեցից զքեզ՝ յա՟մ տրամութեց քոց ասէ տ՟ր։

### ՚Ի ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԷ ՍՐԲՅՆ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐ-ՉԻՆ ՄԵՐՈՅ ԱՍԱՑԵԱԼ։

Եթէ մեք որ կենդանիքս եմք մնացեալք, ՚ի գալստեանն տ՟ն՝ հանգուցելոցն հանդերձ յափշտակեսցուք ամպովք ընդ առաջ տ՟ն յօդս. և այնպէս յա՟մ ժամ ընդ տ՟ն լինիցիմք։ Խառնեալք ՚ի դունդս հրեշտակաց, և թռուցեալք ՚ի թռիչս երագութե ՚ի լուսափետուր

սղխոտակակերպ երամս աղաւնեաց · որք ուխն և կերպարանեցին յանձինս իւր-եանց զկերպարանս որդւոյն այ · որ ե-րևեցաւ նց , և պատուիրեաց մեզ լինել զի բուսուցէ արդարոյն թևս հոգե-ւորս խառնիլ 'ի գունդն ածական ։

Որդ՝ զարմացեալք հարցանիցեն զորքն վերինք լուսեղէնք , յորժամ տեսանի-ցեն զներքնազգեստս մեր մարմնակա-նաց՝ զի առ տր 'ի ներքուստ թռուցել դնասցեն , թէ ով են սոքա որ իբրև զամպս թռուցեալ են , և իբրև զաղաւ-նիս ձագախառն երամովքն գան առ տր ։

Այս լուիցեն 'ի մնէ զպատասխանիս , եթէ սոքա են որք յիս յուսացեալ են · տարայց զնա 'ի լեառն սրբուէ իմոյ , և ուրախ արարից զնա 'ի տաճարի իմում ։

Պօղոսի առաքելոյն Եբրայեցւոց ԺԲ.

Այլ մատուցեալ էք 'ի սիօն լեառն , և 'ի քաղաք այ կենդանւոյ յեղէմ՝ յեր-կինս , և 'ի բիւրաւոր բանակս հրեշտա-կաց , և յեկեղեցիս անդրանկաց գրելոց յերկինս , և առ դատաւորն ամյն ած , և յոգիս արդարոց կատարելոց · և



'ի

'ի նորոց կտակարանաց միջնորդն յս՟, և 'ի հեղումն արեան նր՟՝ որ առաւել խօսի քան զհաբելին։ Ո՛վ գո՛յշ լերուք՝ գուցէ հրաժարիցէք յայնմանէ որ խօսեցաւն. զի եթէ նոքա ո՛չ կարացին զերծանիլ, հրաժարեալք յայնմանէ՝ որ յերկրին հրաման տայր. ո՛րչափ ևս առաւել մեք՝ եթէ յերկնաւորէն թիկունս դարձուցանիցեմք։ Որոյ ձայնն զերկիր շարժեաց յայնժամ. և այժմ խոստացեալ է՝ և ասէ, միւսանգամ շարժեցից ո՛չ միայն զերկիր՝ այլ և զերկինս. այլ՝ միւսանգամն յայտ առնէ զշարժելոցն՝ իբրև զեղելոց փոփոխումն, զի հաստատունն կացցեն անշարժքն։

Ալէ՟ ալէ. Դատ արա ինձ տէր՝ զի.

Սբ. Աւետարանէն Յի՟ Քի՟ որ ըստ Մար. Տէրն մեր Յս՟ Քս՟։

Եւ մատուցանէին առ նա մանկտի՝ զի ձե՛ռն դիցէ նց. իսկ աշակերտքն սաստէին այնոցիկ որ մատուցանէինն. Իբրև ետես յս, բարկացեալ սաստեաց նց և ասէ. Թո՛յլ տուք մանկտւոյդ գալ առ



իս,

իս, և մի՛ արգելուք զդոսա. զի այդպիսեացդ է արքայութիւն ա՟յ։ Ամէն ասեմ ձեզ. որ ո՛չ ընկալցի զարքայութի ա՟յ իբրև զմանուկ, ո՛չ մտցէ ՚ի նա։ Եւ առեալ զն՟ս ՚ի գիրկս, ձեռն եդ ՚ի վ՟ր՝ և օրհնեաց զն՟ս։

Քրզ Ա՟ն ուղղելոյ զգնացս։ Ա՟ն ցրելոյ ՚ի։ Ա՟ն պարգևելոյ մեզ։ Ա՟ն պահելոյ։ Ա՟ն խորտակելոյ։ Եւ ես միաբան։

Տէր ողորմեա, տ՟ր ողորմեա, տ՟ր ողորմեա։

Աղթ Փառք քեզ Թագաւոր յաւիտենից ա՟ծ՝ և արարիչ բոլորից գոյուեց, հայր տ՟ն մերոյ յ՟ի ք՟ի. քե՛զ խոնարհեցուցանեմք զծունկս սրտից մերոց ա՟մ հաւատացեալքս ՚ի քեզ, և աղաչեմք զամենա՟բ տէրութի քո։ Հանգո՛ զհոգի տղայիս այսորիկ ՚ի ժառանգութ՟ի երկնից բարութ՟եդ. և դասեա ՚ի թիւ այնոցիկ՝ որք կարդեցան յաջակողմեան միածնի քո, յարժամգայ յերկնից ՚ի պատրաստ բնակութէ իւրմէ։ Զայնմ աւուր ահեղին գթա տ՟ր՝ ՚ի գինս արեան միածնի քո տ՟ն մերոյ յ՟ի ք՟ի. որ նորոգեաց զախեղերս կամաւոր խոնարհութ՟են իւրով։ Ընդ որ

որում գոհութի և փառս վերառաքես-
ցուք քեզ Հօր ամենակալի՛ և Հոգ.

Խաղաղութիւն ամենեցուն.

Օրհնեա՛լ ես որդի ա՛յ և բանն Հօր, որ վն մեր աղայացար 'ի մբ կուսէն մարիամայ, և սրբեցեր զողջացեալսն Համատոլ 'ի ձեռն վերստին ծննդեան մբ աւազանին։ Ո՛չ է որք մկրտեալ լուսաւորին, առնուն զորդէգրութե պատիւն 'ի ձեռն մկրտութե շնորհին, զոր պարգևեցեր Հաւատացելոց քոց, ասելով մբց առաքելոցն. մկրտեցէք զնս յանուն Հօր և որդւոյ և Հոգւոյն սբյ։ Արդ՝ ընկալ զլուսաւորեալս մբ աւազանաւն, և զհաղորդեալս մբ մարմնոյ և արեան քո. և խառնեա՛ 'ի մբ և 'ի կատարեալ մանկունսն, որք ոստովք և տերևեալ ձիթենեօք օրհնէին զսուրբ գալուստ քո յեղէմ։ Եւ զմեզ զա՛մենն արժանի՛ արա փառաւորել զքեզ ընդ Հօր և.

Եւ ասէն երկու տուն յՄծանեղէն, և Դէ տուն Երգ. Եւ ապա Հոգւոյն Հան.

Հայր մեր որ յերկինս.

Երբ տանին յեկեղեցին, ասեն Շարական՝

Ձայն դ̃ծ, Եւ այլ, Ոչէ այլէ:

Երանելիք են որք բնակեալ են ՚ի տան:

Ընթերցուած ՚ի Մաղաքեայ.

Արդարքն յաւիտեան կեցցեն. եւ ՚ի տեառնէ վարձք նց̃, եւ խնամք նց̃ ՚ի բարձրելոյն: Վս̃ այնորիկ ընկալցին զարքայութեն վայելչու̃թ, եւ զթագն գեղեցկու̃թ ՚ի ձեռանէ տն̃. զի աջով իւրով հովանի լիցի նց̃, եւ բազկաւ իւրով վերակացու լիցի նց̃.

Ընթերցուած յԵսայեայ մար:

Այսպէս ասէ տր̃. ահաւասիկ ես դարձուցանեմ ՚ի դոսա իբրեւ զգետ զխաղաղու̃թ, եւ իբրեւ զհեղեղատ յորդեալ զփառս հեթանոսաց. զմանկունս դոցա ՚ի վր̃ ուսոց իւրեանց բարձեալ բերիցեն, եւ ՚ի վր̃ ծնգաց իւրեանց գրգուիցեն: Որպս̃ մայր զմանուկ իւր գրգուիցէ, այնպէս գրգուեցից զձեզ. Եւ յեղ̃էմ մխիթարեսջիք. եւ տեսջիք եւ խնդասցեն սիրտք ձեր, եւ ոսկերք ձեր



իբ

իբրև զդալարի զուարճացին . և ծանի-ցի ձեռն տն երկիւղածաց իւրոց , և սպառնասցի անհաւատիցն:

Պօղոսի առաքելոյն ՚ի Կորն Բդ:

Մինչ տղայն էի՝ իբրև զտղայ խօսէի, իբրև զտղայ խորհէի, իբրև զտղայ հա-մարէի . այլ յորժամ եղէ այր՝ զտղայու-թեն իմոյ խափանեցի: Այժմ տեսա-նեմք իբրև ընդ հայելի օրինակաւ, այլ յայնժամ դէմ յանդիման . այժմ խելա-մուտ եմ փոքր ՚ի շատէ , այլ յայնժամ գիտացից՝ որպ և նոյն ծանեաւ զիս : Բայց արդ՝ մնան հաւատք , յոյս , սէր , սոքա երեքեան . և մեծ քան զսոսա՝ սէր է: Զհետ երթայք սիրոյ , և նախան-ձաւոր լերուք հոգևորացն , առաւել զի և դուք մարգարէանայցէք:

Ալէլուիա ալէլուիա:

Կարդացին արդարքն առ տէր , և տէր:

ՍԲ Աւետարանէն ՅԻ ՔԻ որ ըստ Մատ

Տէրն մեր ՅՍ ՔՍ:

Յայնմ ժամանակի պատասխանի ետ յն և ասէ . գոհանամ զքէն հայր՝ տր երկնի

և

և երկրի․ զի ծածկեցեր զայս յիմաստնոց և՛ի գիտնոց, և յայտնեցեր տղայոց․ այո՛ հա՛յր․ զի այսպէս հաճոյ եղև առաջի քո։ Ամենայն ինչ տուաւ ինձ ՛ի հօրէ իմմէ։ Եւ ոչ ոք ճանաչէ զորդի՝ եթէ ոչ հայր․ և ոչ զհայր ոք ճանաչէ՝ եթէ ոչ որդի, և ում որդին կամիցի յայտնել։ Եկա՛յք առ իս ա՟մ վաստակեալք և բեռնաւորք, և ես հանգուցից զձեզ։ Առէ՛ք զլուծ իմ ՛ի ձեզ, և ուսարո՛ւք յինէն՝ զի հե՛զ եմ և խոնա՛րհ սրտիւ․ և գտջի՛ք հանգիստ անձանց ձերոց։ զի լուծ իմ քա՛ղցր է․ և բե՛ռն իմ փոքրոգի։

Քարոզ։

Վ՟ն հրաժարելոյ անձանց ննջեցելոց՝ զտ՟ր աղաչեսցուք։ Վ՟ն քաւութեան մեղաց և թողութեան յանցանաց ն՟ց և մեր ա՟մցուն՝ զտ՟ր։ Վ՟ն առաջնորդելոյ սմա յանդաստ ուեր օթևանս, զոր պատրաստեաց որդին միածին ՛ի տան հօր իւրոյ՝ զտ՟ր։ Վ՟ն լսելոյ սմա զձայն կենարար փողոյն՝ և մերձենալ ընդ առաջ փրկչին՝ զտ՟ր․ Վ՟ն արժանի լինելոյ սմա դասել յաջա կողմեան դասուն՝ զտ՟ր աղա։

## Աղօթք։

Տ՟ր Ա՟ծ Յ՟ս Ք՟ս՝ Թագաւոր յաւիտենից՝ լոյս մեր և ապաւէն. որդի Ա՟յ ճշմարիտ. ճառագայթ անշիջանելի. լոյս ՚ի լուսոյ, և կեանք ՚ի կենաց. հօր սահման և բան. բժիշկ հոգւոց և պատիճ վիրաց մերոց, որ բժշկես զբեկեալ սիրտս, և պատես զամ վէրս ն՟ց։ Որ ո՛չ խոտան համարեցար զմանկունս առնուլ ՚ի գիրկս քո՝ և օրհնել զն՟ս. այլ սաստեցեր ևս աշակերտացն քոց, թէ մի՛ արգելուք զդոսա. և հաստատեցեր անսուտ հրամանաւդ, թէ այդպիսեացդ է արքայութիւն երկնից. Արդ՝ ՚ի ձեռն բանիդ այդորիկ՝ ընկա՛լ զողջոյն զայս յարքայութե՟ն քում, գրելով ՚ի գիրս ազատութե՟ն որդեգրեցելոցն հօր քո բարերարի։ Ընդ որում քեզ՝ և հոգւոյդ սրբոյ վայելէ փառք՝ իշխա։

## Խաղաղութեան աղօթեսցուք։

՚Ընդ երկիր պագանեմք, և զքեզ աղաչեմք, և ՚ի քէն խնդրեմք Տ՟ր մեր Յ՟ս Ք՟ս. որ իշխանդ ես և Տ՟ր՝ ապանանել և կեցուցանել, հարկանել և բժշկել. Ա



սա

անմոռաց գթութեդ՝ և անբաւ մարդասի-
րութեդ գթա՛ ՚ի վ՟ր ա՟մ հաւատացեալ
ննջեցելոց, և մանաւանդ ՚ի վ՟ր տղայիս
պատրիկ՝ որ այժմս հանգուցեալ է: Ըն-
կա՛լ զսա ՚ի լուսեղէն խորանսդ ՚ի յարկ-
սըն արդարոց ը՟ երջանիկ տղայոցն այնո-
ցիկ, որ վ՟ն քո փոխանակեցան ՚ի բեթ-
ղեհէմ: Եւ մեզ հաւատացելոցս ՚ի
քեզ՝ ուղարկաւորացս տո՛ւր՝ շնորհեա՛ հո-
գի զգաստութե կանխել միշտ ՚ի սէր և
յերկիւղ քո, և թողութի գտանել ՚ի
քէն: Եւ գոհանալով փառաւորել զքեզ
ընդ հօր՝ և ս՟բ հոգւոյդ, այժմ և:

Եւ ասեն երկու դուռն յԾանեղէն, և մէկ դուռն
երգ: Եւ ապա Հոգւոյն հան:

Հայր մեր որ յերկինս:

—

Եւ ապա տանին ՚ի հանգիստ, առեալ Շ՟արա՟
Խաղմերամբ: Եւ ժամն Բ դուռն յԱսաատացինն:
Եւ երբ մտանեն գերեզմանին, հանգիստ առ-
նեն և կարդան աւետարան զեկեղեցւոյ կարգին.
որ նոյն է և մեծի հանգիստ առնելոյն: Եւ եր-
թալով ՚ի գերեզմանն՝ առեն Շ՟ար՟ Եւ:

Ո՛ր կոչեցեր առ քեզ Տ՛ր ըղձալինզե՛րս։ հնգ
Ո՛ր Թողութեանց ես տուօղ Տ՛րն · Թող։
Ո՛ր լուսատու ես ննջեցելոց ք՛ո Տ՛րն։

Մեծածնէ, Խաղէ, Փառք։

Եւ հասեալ ՚ի գերեզմանն՝ ասէն այս ՚ի ձայնի Բաղմանն։

Դարձ անձն իմ ՚ի հանգիստ քո զի ·

Ալէլուիա ալէլուիա ·

Օրհնեցէք մանկունք։ Նոցին անուն։

Իններորդա ձայնեալ նոր ·

Այսպէս ասէ Տ՛ր · ոչ եւս եղիցի քեզ արեգակն ՚ի լոյս տուընջեան, եւ ոչ ծագումն լուսնի տացէ քեզ լոյս ՚ի գիշերի · այլ եղիցի քեզ Տ՛ր լոյս յաւիտենական, եւ փառք քո Ած։ Ո՛չ մտցէ քեզ արեգակն, եւ լուսին ՚ի քէն ոչ պակասեսցի · զի եղիցի քեզ Տ՛ր լոյս յաւիտենական։

՚Ի Հորդորդեալ Տէրն Պօղոսի Լուսաւոր
չէն Ձերոյ ասացեալ։

Մ՛ենեքին որ անաանիցեն զարդարումն՝ ճանաչիցեն զնա՝ եւ ասասցեն, որքա են

 զա

զաւակ օրհնեալ յո՟յ. Եւ ուրախութ՟ ուրախ եղիցին ՚ի տ՟ր։ Եւ տ՟ր ամենակալ ասէ ցն՟, եղիջիք ինձ յուստերս եւ ՚ի դըստերս։ Գովութ՟ք արարչական խնամոցն յուղեսցին ՚ի նմ՟, ըստ մարգարէին որ ասէ. ոպ՟ գթայ հայր ՚ի վր՟ որդւոց իւրոց, այնպէս գթասցի տ՟ր յերկիւղածս իւր։ Ո ի այժմ յուսով հայելով՝ զայս տ՟մ իբրեւ ընդ հայելի տեսանեմք, բայց յայնժամ դէմ յանդիման տեսանեմք, եւ ՚ի նոյն պատկեր նորոգիմք փառօք ՚ի փառս։

Պօղոսի առաքելոյն յԵբր Բ ԺԴ.

Որդ՝ որովհետեւ մանկունք հաղորդեսցին արեան եւ մարմնոյ, եւ ինքն իսկ մերձաւորութ՟ կցորդ եղեւ նոցունց. զի մահուն իւրով խափանեսցէ զայն՝ որ զիշխանութի մահուն ունէր, այսինքն է՝ զսատ՟յ. եւ ապրեցուսցէ զայնոսիկ՝ որ մահուն երկիւղիւ հանապազ կէին վտարանդեալք ՚ի ծառայութ՟։ Քանզի ոչ երբէք զհրեշտակաց բուռն հարկանէ. այլ զզաւակէն աբրահամու բուռն հարկանէ։ Ուստի պարտ իսկ էր նմա ամի-



եղ

եղբարց նմանիլ. զի ողորմած լինիցի, և հաւատարիմ քահանայապետ յա՟ծա-կոյս կողմանէ անտի՝ առ 'ի քաւելոյ ըզ մեղս ժողովրդեանն։ Զի որով ինքն չարչարեցաւ՝ փորձ առեալ, կարօղ է և փորձանաւորացն օգնական լինել։

Ալէլուիա ալէլուիա։

Արդարքն որ՟պ զարմաւենիս ծաղկես։

Սբ Աւետարանին Յի Քի որ ըստ Մատ։

Տէրն մեր Յ՟ս Ք՟ս։

Յայնժամ իբրև ետես Հերովդէս թէ խաբեցաւ 'ի մոգուց անտի, բարկացաւ յոյժ. և առաքեաց կոտորեաց զա՟մ մանկունս որ էին 'ի Բեթղեհէմ և յա՟մ սահմանս ն՟ր՝ յերկեմենից և 'ի խոնարհ, ըստ ժամանակին զոր ստուգեաց 'ի մոգուցն։ Յայնժամ կատարեցաւ ասացեալն 'ի ձեռն Երեմիայ մարգարէի որ ասէ. ձայն գուժեաց 'ի Հռամայ, ողբումն լալումն և աշխարումն յոյժ. Հռաքէլ լայր զորդիս իւր, և ոչ կամէր մխիթարիլ՝ զի ոչ էին։

Ս՟ ուղղելոյ գնացս։ Կ՟ ցրելոյ 'ի· հեղ



Կ՟

Մի՛ պարտաւելոյ մեզ։ Մի՛ պահելոյ։ Մ՛ան խորտակելոյ։ Եւ եւս միաբան։

աղբ Տ՜ր ա՜ծ ամենակալ, բարերար եւ բազումողորմ, քաղցր եւ անոխակալ. որ մարդասիրութ՜ք քով գթացար յազգս մարդկան, եւ առաքեցեր յաշխարհ զմիածին որդին քո. որ եկեալ տղայացաւ յամենաս՜բ կուսէն մարիամայ, եւ փրկեաց զմեզ յանիծից ադամայ, եւ նորոգեաց հոգւովդ քով ս՜բով. եւ ազատեալ զմեզ յիշխանութե՜ն խաւարի, խոստացաւ մեզ կեանս անմահականս։ Եւ արդ՝ բազմագութ եւ ողորմած տէր, գթա՛ ՚ի հոգի տղայիս այսորիկ՝ զոր փոխեցեր յաշխարհէ աստի ՚ի գաւառն կենդանեաց. եւ արժանի՛ արա զսա լինել ժառանգորդ երկնից արքայութե՜դ։ Զի դու ես արարիչ ա՜մ, որ ամփոփես զհոգի եւ զշունչ մարդկան, եւ դարձեալ նորոգես ո՜պ եւ կամիս՝ խորին քո տեսչութե՜դ։ Ընկա՛լ զտղայս զայս ընդ ս՜բ մանկունսն բեթղեհէմի, որք վ՜ն անձառ անօրէնութե՜ն միածնի քո խողխողեցան. եւ արժանի՛ եղեն հոգեւոր



թե.

Թեւօք արագաթռիչ ելանել 'ի կամարս լուսեղէնս՝ և հանգչիլ 'ի գոգն աբրահամու։ Աղաչեմք զքեզ տր՜՝ ընկալ զսա, և հա՛ն սմա մասն և բաժին ընդ ամ՜ սբ՜ս քո՝ որք հաճոյ եղեն տէրութե՜ քում։ Եւ քեզ ընդ որդւոյդ միածնի՝ և ընդ հոգւոյդ ճշմարտի վայելէ։

Խաղաղութիւն ամենեցուն։

Յորժամ ծագին արդարքն իբրև զարեգակն յարքայութե՜ քում տր՜՝ պայծառացեալք որպ՜ հրեշտակս լուսաւորս։ Յորժամ լինի յարութի՜ ամ՜ մարդկան՝ և փոփոխումն և նորոգումն կերպարանաց։ Յորժամ լինի միանգամայն մուտ վերին ճանապարհին 'ի յօթեվանս բազումս անճառ խնդութե՜, ըստ անսուտ բանի փրկչին մերոյ, եթէ 'ի տան հօր իմոյ օթեւանք բազումք են։ Յորժամ մտանեն կատարեալքն յերկնային առագաստըն բազում համարձակութե՜ և լի՛ ածայ՜ին փառօք, իջանեն 'ի դրախտն փափկութե՜՝ և ելանեն 'ի վերինն երուսաղէմ։ Յայնժամ ընդ նոսին դասաւորեա՛ տր՜՝ զննջեցեալսն մեր, և մնացելանդ զողորմս

զայս ,

զոյս, զոր անարատ և անշաղախ կենօք առ քեզ կոչեցեր անապական զգեստուովք աւազանին, ցնծալ և պարել շուրջ զարքունական աթոռովդ։ Ո՜վ դու ես տէր որ հաստատեցեր զմեզ ՚ի փառս տրուեան քո։ Եւ քեզ վայելէ։

Եւ առնու ՚ի վեր ձեռն ՚ի ծածկէն հողոյն՝ առնէ Մեծի ընթանան է․ այսինքն՝ Հող ձգել։

Տր հող։ Տր ուղ։ Ջաւստ ու։ Փառք ՚ի բար։ Եւ ժողովր։ Մն ՚ի վերուստ պահ։

Եւ ապա ասէ զաղօթս։

Մծ յաւիտենական, որ արժանի արարեր զծառայս քո զոյս՝ դառնալ անդրէն ՚ի հող ուստի ստեղծաւ։ Եւ այժմ բարերար և մարդասէր տէր՝ օրհնեա զհողախշտի բնակութ ծառայիս քո այսորիկ․ կնքեա և պահեա զոսկերս սորա ամրածածուկ աջովդ քով մինչ զի ՚ի հօտէ խաշանց քոց է, և ՚ի հաստատեցելոց ՚ի տր մեր յս քս։ Աղաչեմք զքեզ հայր երկնաւոր՝ ՚ի մն ննջեցեալ ոգւոյս այսորիկ․ յիշեա զհոգի սորա, և խառնեա ՚ի դասս հրեշտակաց, և ՚ի թիւս այ-

նոցիկ որ սիրեցին զօր երեւելոյ գալըս տեան միածնի քո։ 'Ի գոչել ձայնին փողոյն՝ եւ յերեւիլ սրբոյ խաչին՝ պայծառասցի սա յանանց լոյսն, եւ ընկալցի զգեղափայլ կերպարանն. զուարթերես կացցէ առաջի ահաւոր բեմի միածնի քո, եւ առանց ամօթոյ տեսցէ զթագաւորդ փառաց։ Որ եւ զմեզ արժանի արասցես ընդ սուրբս քո փառաւորել զՔեզ ընդ Որդւոյ եւ.

Խաղաղութիւն ամենեցուն.

Փառաւորեալ է անուն քո Տէր՝ Թագաւոր անմահ. որ պատրաստեցեր մեզ հանգիստ յերկրաւոր աշխատութենէս՝ զանախտ եւ զանաշխատ կեանսդ՝ 'ի հանդերձեալ աշխարհին՝ 'ի ձեռն միածնի Որդւոյ քո սիրելւոյ. որ սպան զմահ եւ լուսաւորեաց զմեզ 'ի կեանս եւ յանեղծութիւն. փրկեաց զմեզ յիշխանութենէ խաւարի, եւ փոխեաց յարքայութիւն երկնից։ Արդ՝ աղաչեմք եւ խնդրեմք 'ի քէն Տէր՝ առաքեա զպահպանողական զօրութիւն Աջոյ քո, եւ օրհնեա զտեղի հանգստեան սորի 'ի գոչել փողոյ գալստեան

միածնի քո՝ նորոգեացի սրաթռիչ թեւ-
օք վերանալ յարքայութիւն երկնից ընդ
այլ սրբոց քոց։ Եւ ընդ նոսին փառա-
ւորել զքեզ Հայր՝ ընդ որդւոյ և։
Փառաց ի։ Բանա։ Փայլին։ Բո ան։
Հոգւոյն հան։ Օրհնեցի և կնքեալ։
Հայր մեր որ յեր։

Կանոն՝ Տաղի Այգուց կատարելոյ։

Երթան ի գերեզմանն, և առեն [illegible]
անէծ։ Եւ ասա Շարական [illegible]։

Ձնկց ԲԲլ Երանելի էք մանկունքն որք
քաջ նահատակք եղէն զանձինս
բուրեանց ի մահ. փոխանակ
որդւոյն այլ։ Եւ դիակունք էք
մանկանց որք ընծայելիք նորածնեաց
հարեալ ի կարկառէ. և անկեալ
ի վէմ բեթղեհեմի։ Եւ հոգիք էք
մանկանց որպէս զերամս աղաւնեաց
թռուցեալ ի յերկինս. և դասեալ
ընդ զուարթունս երկնից։

Յիսուս միածինն անմահութեան։ Ա·
Բղխեա մեզ արտասուաց մարմնամբ։
Բանիւ բանին ամ կենագործեաց։
Յորժամ եկին ՚ի գերեզմանն իւղ. ջուր
Յայնժամ հրեշտակն աւետարանէր։
Իսկ նոցա զարհուրեալ լի ահագին։

Հոգւոյ գալստեան, Համբարձման, Ծածկէ,
Խաչէ, փառք։

Ալէ ալէ։ Օրհնեցէք մանկունք զտէր։
Եղիցի անուն տեառն օրհնեալ յայսմ։

Ընթերցուածս ջրաւեայ հար։

Այսպէս ասէ տր. յաւուր յայնմիկ մո-
ռասցին զնեղութիս առաջինս, և ոչ ևս
անկցի ՚ի սիրտս նց։ Զի եղիցին եր-
կինք նոր՝ և երկիր նոր, այլ օրհնութի
և ցնծութի գտցեն զոր ես հաստատեցից։
Զի ՚ի տնէ եղիցի դարձ նց. եկեսցեն
՚ի սիոն ցնծութբ և ուրախութբ յաւի-
տենից. զի ՚ի վր գլխոց նց ցնծութի և
ուրախութի հասցէ։ Մերժեցան ցաւք
և տրտմութիք և հեծութիք. զի ես
եմ որ մխիթարեմ զձեզ յամ տրտմու-
թեց ձերոց ասէ տր ամենակալ։

Պօղոսի առաքելոյն ՚ի Կորն. Բ.

Քանզի փող հարկանի, և մեռեալք յարիցեն առանց ապականութե՟, և մեք նորոգեսցուք։ Զի պարտ է ապականու՟ես այսմիկ զգենուլ զանապականութի՟, և մահկանացուիս այսմիկ զգենուլ զանմահութի՟։ Եւ յորժամ մահկանացուս այս զգեցցի զանմահութի՟, և ապականութիս զանապականութի՟, յայնժամ եղիցի բանն որ գրեցաւ. եթէ ընկլաւ մահ յաղթութի՟ քո։ Ո՞ւր է մահ յաղթութի՟ քո. ո՞ւր դժոխք խայթոցքն քո. խայթոց մահու՝ մեղք են, և զօրութի՟ մեղաց՝ օրէնք։ Եւ շնորհք այ՟՝ որ ետ մեզ զյաղթութի՟ ՚ի ձեռն տեառն մերոյ յի՟ քի՟։

Ալէ ալէ։ Հոգի քո սուրբ և բարի։

Սբ՟ Աւետարանն. Յհ՟ ԺԴ՟ որ ըստ Յօհան։

Տէրն մեր Յս՟ Քս՟։

Եթէ սիրէք զիս՝ զպատուիրանս իմ պահեսջիք։ և ես աղաչեցից զհայր, և այլ մխիթարիչ տացէ ձեզ. զի ընդ ձեզ բնակեսցի ՚ի յաւիտեան. զհոգին ճշմարտութե՟. զոր աշխարհս ոչ կարէ ըն-



դու

դունիլ, զի ոչ տեսանէ զնա, և ոչ ճա-
նաչէ զնա. բայց դուք ճանաչէք զնա,
զի առ ձեզ բնակեսցի, և ընդ ձեզ եղիցի.
Ո՛չ թողից զձեզ որբս. գամ առ ձեզ.
փոքր միւս ևս՝ և աշխարհս ոչ ևս տե-
սանէ զիս. բայց դուք տեսանիցէք զիս.
զի ես կենդանի՛ եմ, և դուք՝ կենդա-
նի լինելո՛ց էք.

Մ ո̄ ՚ի վերուստ. Մ ո̄ լսելի լինելոյ. Փոխ
Մ ո̄ քաւիչ և նէ. Մ ո̄ թողլոյ մեզ.
Մ ո̄ զի մի՛ ընդ խոտ. Իսկ ևս միաբան.
Տէր ողորմեա՛. Տէր ողորմեա՛. Տէր ողորմեա՛.

Օրհնեա՛լ ես միածին որդի Այ՛ Տր մեր Աղթ
Յս Քս. որ ամենազօրութեամբ քով
մարմնացար ՚ի սբ կուսէն մարիամայ, և
պարգևեցար մեզ ՚ի խաչին նուէր հաշ-
տութե հօր՝ հեղմամբ քո սբ արեանդ.
Թաղեցար ՚ի գերեզմանի, և իջեր ՚ի
դժոխս, և ազատեցեր զհոգիսն որ ՚ի
նմա, ՚ի սբ միաշաբաթին յարուցեալդ
՚ի մեռելոց, ձայնելով հզօր քո բանիւդ,
թէ որք ՚ի կապանս էք՝ ելէ՛ք, և որք
՚ի խաւարի՝ յայտնեցարո՛ւք. Ասաի և
մեք ՚ի սբ և ՚ի լուսաւոր յարութե քո


եկ

եկեալ 'ի գերեզմանս մեռելոց, կենսա
տու սբ խաչիւս և սբ աւետարանաւս
աւետեմք սոցա զսքանչելի և զանսուտ
յոյս վերստին նորոգմանն՝ զոր խոստա
ցար մեզ։ Ա͞ծ որոյ աղաչեմք զամենա-
գութ փրկիչդ մեր միաբան ծառայքս
քո, խոնարհեցո՛ց տր՝ յաղաչանս մեր, և
հանգո՛ զհոգի տղայիս այսորիկ շնորհօք
ողորմութե քո։ Ո͞պ զի անկակից եղեալս
նմանութե մահու քո, լիցի և կցորդ
կենսաբեր յարութե քո, և վայելեսցէ
զարքայութիդ երկնից ընդ սբս քո։ Եւ
մեք ողորմութի գտեալ 'ի քէն՝ փառա-
ւորեսցուք զքեզ ընդ հօր՝ և։

Խաղաղականն ամենայն։

Յոյս յարութե մերոյ՝ տր մեր յս քս,
որ աւետարանեցեր զխաղաղութի հե-
ռաւորաց և մերձաւորաց, սպանանելով
զթշնամութի մահու մեղաց։ Գոհանամք
զքէն, որ առատ մարդասիրութբ քով
զանէծս լուծեր, զդժոխս աւերեցեր։
և զմեզ զամենն յարքայութիդ երկնից վե-
րածեր, և 'ի դասակցութիս հրեշտակաց
խառնեցեր։ Եւ այժմ ժողովեալ մեր
'ի

՚ի հանգիստ տղայիս այսորիկ՝ ծնչեմք զա-ւետիս յարութեան ճշմարիտ բարբառով սբ աւետարանին. և խոնարհեալ առա-ջի քո՝ աղաչեմք զբարերարութ մարդա-սիրութի քո. Հանգո տր զհոգի տղայիս այսորիկ ընդ ընտրեալս քո, և ժառան-գակից արա զսա սբց քոց յարքայութեան երկնից. Եւ զմեզ ընդ նոսին արժանի արա յարազուարճ բերկրանաց օրհնել զքեզ ընդ հօր՝ և սբ.

Աղէկս տան զՔծանեղէն, և Զել տան Երգ. Հոգւոյն հանգուցելոց. Վն որդի մց. Կնքէ զՀերբեզմանն, և ապա ասէ.

Հայր մեր որ յերկինս.

Կանոն՝ Տղայի Եօթնաւուր, կամ Քա-ռասնաւուր, կամ Տարելից կատարելոյ.

Գործոց Դ անէծ. Շարական ՚ի յայնէն. Գիրք, Առաքեալն, Աւետարան՝ Մատթէոսին է.

Եւ ասէ զաղօթսն.

Օրհնեալ ես բարեխնամօղ և բարե-գութ ած. որ նեղելոց ես ան-դորրիչ, և սգաւորաց մխիթարիչ. որ



անան

աննանկանց ես ապաւէն, և սգաւորաց սփոփիչ. աշխատելոց նաւահանգիստ, և լքելոց զօրացուցիչ. մեղաւորաց ես քաւարան, և անմեղաց պատսպարան. որ յոյս ես և ապաւէն կենդանեաց և մեռելոց: Ընկալ և պահպանեա ըզ հոգի ծառայիս քո այսօրիկ հոգւովդ քով ս̃բվ. պայծառացո զսա ընդ ս̃բս քո, և կարգաւորեա ընդ արդարս քո՝ անճառ փառօք և աննուաղելի լուսով: Սրբեա և զպահարան բնակութե̃ սր̃, և օրհնեա ողորմութե̃ք քով: Եւ մեզ ուղարկաւորացս սր̃՝ և զհետ եկեալ ժողովս՝ շնորհեա զքաւութի̃ մեղաց. փրկեա ՚ի խորամանկութե̃ սատանայի, և զգաստացո զմիտս մեր ՚ի հաճոյս քո. բևեռեա զմեզ յերկիւղ քո և ՚ի սէր՝ միշտ խորհիլ զպատուէր քո ս̃բ հրամանիդ, և անմոռաց ունել առաջի աչաց մերոց զօրն յետին ահաւոր դատաստանիդ: Զի արժանի՛ լիցուք կեալ առաքինասէր վարուք՝ և ո՛չ յաղթիլ ՚ի մարմնական զբաղմանց. և յա̃մ անդադար փառաւորեսցուք զհայր և զորդի.

Խաչալուրբին աւետեացն :

Որդ՝ և ձեղ պատրաստ է գոհանալ զոյ, զի վախճանեալս ձեր՝ յերկրէս յերկինս վերացաւ . 'ի մարդկանէ 'ի հրեշտակս փոխեցաւ . 'ի մահուանէ 'ի կեանս . 'ի խաւարէ 'ի լոյս . յաղքատութէ 'ի թագաւորութի . 'ի վտանգից 'ի հանգիստ . 'ի տրտմութե աշխարհիս 'ի յերկնային ուրախութիւն . 'ի մեղաց յարդարութի . 'ի հողեղինացս 'ի լուսեղէնս վերացաւ, և ընդ հրեշտակս դասակարգեցաւ : Արդ այսօրիկ ոչ է պարտ քրիստոնէից սուգ առնուլ 'ի վր մեռելոց՝ այլ լացցեն հրէայք, և կոծեսցին թերեհաւատք . զի նոքա են արժանի կոծոց և ողբոց : Այլ դուք մխիթարեցարուք՝ միւսան գամ կենդանութե ամ ընտրելոց 'ի քս յս 'ի տր մեր : Որում վայելէ փառք իշխանութի և :

Սրքու տուն ձ՚Ծամենեղէն, և ձէջ տուն էրգ :
Հոգւոցն հանգուցելոց : Որ՝ որդի նյ :
Անոէ՛ շփէրէշման . և այս ասէ,

Հայր մեր որ յերկինս :

 Աս

## Կանոն՝ Դժուարածին Հղի Կնոջ։

Սրբոյ յոհաննայն, և ասէ սաղմոս։

Առ քեզ տէր համբարձի զաչս իմ, որ բնակեալդ ես 'ի յերկինս։ Ո՟ր աչք ծառայի 'ի ձեռն տ՟ն իւրոյ, և ո՟ր աչք աղախնոյ 'ի ձեռն տիկնոջ իւրոյ։ Նոյնպէս են աչք մեր առ քեզ տ՟ր ա՟ծ մեր, մինչև ողորմեսցիս 'ի վ՟ր մեր։ Ողորմեա մեզ տ՟ր ողորմեա մեզ, զի բազում լցաք արհամարհանօք։ Առաւել լցան անձինք մեր նախատանօք, այլ նախատեն զմեզ արհամարհանօք ամբարտաւանից։

Ընթերցուած Յեսայեայ մարգարէէ։

Մինչև իցէ յղւոյն ծնեալ, և մինչ չև հասեալ իցեն ցաւք երկանց, ապրեցաւ և ծնաւ արու։ Ո՞ լուաւ, ո՞ ետես այսպիսի ինչ. եթէ երկնեաց երկիր 'ի միում աւուր, և ծնաւ ազգ մի ողջոյն միանգամայն. զի երկնեաց սիոն, և ծնաւ զմանկունս իւր։ Ես ետու քեզ զյոյսդ զայդ, և դու ոչ յիշեցեր զիս՝ ասէ տ՟ր. ո՞չ ապաքէն զամուլն և զծննդականն ես արարի՝ ասէ ա՟ծ քո։

Պօղոսէ առաքելոյն յԵբրայեցւոց Թղթոյն է ընթերցուածս ։

Հաւատովք՝ որ աբրահամն կոչեցաւ՝ ունկնդիր եղև ելանել 'ի տեղին զոր առնելոց էր 'ի ժառանգութի. ել գնաց՝ և ոչ գիտէր յո՛ երթիցէ։ Հաւատովք պանդխտեցաւ յերկիրն աւետեաց՝ իբրև յօտարութե. խորանօք բնակեաց սահակաւ և յակոբաւ հանդերձ՝ ժառանգակցօք նորին աւետեաց։ Զանզի ակն ունէր հիմամբք հաստատելոյ քաղաքին, որոյ ճարտարապետ և արարիչ ա̃ծ է ։ Հաւատովք և ինքն սառա՝ որ ամուլն էր, զօրութի առնլոյ զսերմն որդեծնութե̃ ընդունէր, և 'ի տարաժամ հասակի ծնանէր. քանզի հաւատարիմ համարեցաւ զայն որ խոստացաւն։ Վ̃ որոյ և 'ի միոջէն ծնանէին, և այն 'ի յանցեալ ժամանակի, իբրև զաստեղս երկնից բազմութե̃, և իբրև զաւազ առ ափն ծովու

առանց թուոյ։

Ալէ ալէ։ Ո՛ տէր փրկեա՛ զանձն իմ. ողորմած և արդար է տ̃ր ա̃ծ մեր, ողորմի և պահէ զտղայս տ̃ր ։

## Աւետարան Օրհն.

### Սբ Աւետարանէն Յհ. ԺԶ. որ ըստ Յովհան. Տէրն մեր Յս Քս ասէ։

Ամէն ամէն ասեմ ձեզ, զի լայցջիք և ողբասջիք դուք, և աշխարհ խնդասցէ. դուք տրտմեսջիք, այլ տրտմութի ձեր յուրախութի եղիցի։ Կին յորժամ ծնանիցի՝ տրտմութի է նմա, զի հասեալ է ժամ նր. այլ յորժամ ծնցի զմանուկն, ոչ ևս յիշէ զնեղութին վս խնդութեն. զի ծնաւ մարդ յաշխարհ։

### Քարոզ։

Լուիցէ տր ձայնի աղաչանաց մերոց. ամենակալ տէր աճ մեր կեցուսցէ և ողորմեսցի։

Եւ ժողովրդեանն ասէ Գ. տէր ողորմեա, և ապա աղօթս ասա։

Տր աճ մեր յս քս մեծ և բարձրեալ, անպատմելի անփոփոխելի և մշտնջենաւոր. որ իջեր ՚ի յերկնից և մարմնացար ՚ի սբյ. կուսէն մարիամայ հոգւովն սբվ. և զապականեալն մեղօք զբնութի մեր ՚ի նախահօրն յանցանաց՝ որով աճ կանացի

բնութ՟ ընկալաւ զպատուհաս անիծից՝ ցաւօք և տրտմութ՟ ծնանիլ զզաւակ, որբեցեր ած՟ութ՟ քով։ Եւ արդ՝ աղաչեմք զքեզ մարդասէր Թագաւոր՝ ստեղծող և Նորոգող մեր՝ և բժիշկ հիւանդութ՟ս մերում, բժշկեա՛ և առողջացո՛ զայս անուն աղախին քո ՚ի հոգեկան և ՚ի մարմնական յախտէս յայսմանէ։ Առաքեա՛ զօգնութի՟ քո ՚ի սրբութ՟ քումմէ, և տո՛ւր սմա զօրութ՟ ծնանիլ զզաւակ. ո՛չ զի զպտուղ որովայնի իւրոյ մաքրեալ յամ՟ արատոյ ծննդեամբ ս՟բ աւազանին՝ ընծայեսցէ եկեղեցւոյ քում ս՟բոյ։ Շնորհեա՛ ծննդականիս այսորիկ հանգստութ՟ և առանց վնասու հասանիլ ՚ի խնդութ՟. և ամ՟ տանց հաւատացելոց աճիլ և բազմանալ ՚ի փառս տէրութ՟ քո, և ՚ի լրումն ած՟ային քո բանիդ, եթէ աճեցէք և բազմացարուք։ Ո՛վ տ՟ր ած՟ մեր, լո՛ւր և այժմ խնդրուածոց անարժան ծառայիս, և ամենեցուն որ շուրջ կան աստ, բարեխօսութ՟ անարատ ծնողի քո ս՟բ ած՟ածնի, և ամ՟ ս՟բց քոց։ Ո է քեզ միածնի որդւոյդ, և



անըս

անսկիզբն եւ համագոյ Հօր քո, եւ կենդանարար եւ ամենա̃բ Հոգւոյդ՝ վայելէ փառք պատիւ եւ երկրպագութիւն, այժմ եւ միշտ:

Կանոն՝ վասն Այսահարաց եւ լուսնոտից:

Ասէ քահանայն սաղմոս:

Որ բնակեալն է յօգնութիւն բարձրելոյ, ը̃ հովանեաւ ա̃յ յերկինս հանգիցէ: Ասասցէ տ̃ն ընդունելի իմ ես, ապաւէն իմ ա̃ծ, եւ ես յուսամ ՚ի նա: Զի նա փրկեսցէ զքեզ յորոգայթէ որսողին, եւ ՚ի բանից խռովու̃է: Ի թիկնամէջս իւր ընկալցի զքեզ, ՚ի հովանի թեւոց ն̃ր յուսասցիս: Որպ̃ զէն՝ շուրջ եղիցին զքեւ ճշմարտութիւն ն̃ր: Ո՛չ երկիցես դու յերկիւղէ գիշերի, եւ ո՛չ ՚ի նետէ որ թռչի ՚ի տուէ: Յիրէ որ շրջի ՚ի խաւարի, ՚ի գայթակղու̃է դիւի ՚ի հասարակ աւուր: Անկցին ՚ի կողմանէ քումմէ հազարք՝ եւ բիւրք ընդ աջմէ քումմէ, որ առ քեզ ինչ ո՛չ մերձեսցին: Բայց միայն աչօք քովք հայեսցիս դու,

 զհա

զհատուցումն մեղաւորաց տեսցես. զի դու տէր յոյս իմ ես։ Զբարձրեալն արարեր քեզ ապաւէն. ոչ հասցեն առ քեզ չարք, տանջանք մի՛ մերձեսցին ՚ի յարկս քո։ Հրեշտակաց իւր պատուիրեալ է վս̃ քո, պահել զքեզ յմ̃ ճանապարհս քո։ ՚Ի բազուկս իւրեանց ընկալցին զքեզ, զի մի՛ երբէք հարցես զքարի զոտն քո։ ՚Ի վր̃ իժից և քարբից գնասցես դու. առ ոտն կոխեսցես զառիւծն և զվիշապ։ Քանզի յիս յուսացաւ և փրկեցից զնա, հովանի՛ եղէց նմա, զի ծանեաւ զանուն իմ։ Կարդասցէ առ իս՝ և ես լուայց նմա, և առ նմա եղէց ՚ի նեղութե̃։ Փրկեցից փառաւոր արարից զնա, երկայն աւուրբք լցուցից և ցուցից նմա զփրկութի̃ իմ։

Ընթերցուածս Եսայեայ մարգարէին.

Զիարդ անկաւ յերկնից արուսեակն՝ որ ընդ առաւօտն ծագէր. անկաւ յերկիր, խորտակեցաւ՝ որ առաքէր առ ամ̃ ազգս։ Դու ասէիր ՚ի մտի քում. ելից յերկինս, ՚ի վերոյ քան զաստեղս երկնից արկից զաթոռ իմ. նստայց ՚ի



լե

լերինն բարձու, 'ի վ͞ր լերանց բարձանց հիւսիսոյ։ Ելից 'ի վ͞ր քան զամպս, եղէց նմանօղ բարձրելոյն։ Արդ՝ 'ի դժոխս 'իջցես, և 'ի հիմունս երկրի։

Պօղոսի առաքելոյն յԵփեսացւոց Թղթոյն է ընթերցուած։

Արդ՝ որովհետև մանկունք հաղորդեցին արեան և մարմնոյ, և ինքն իսկ մերձաւորութ͞բ կցորդ եղև նոցունց. զի մահուն իւրով խափանեսցէ զայն որ զիշխանութի մահուն ունէր, այսինքն է՝ զսատնյ. և ապրեցուսցէ զայնոսիկ որ մահուն երկիւղիւ հանապազ կէին վտարանդեալք 'ի ծառայութի։

Ասէ այլ։ Զթշնամիս իմ հալածական արարեր, և զատելիս իմ սատակեցեր։

Սէօ Աւետարանէն Յ͞Ի Ք͞Ի որ ըստ Մ͞ր։
Ա Տէրն մեր Յ͞Ս Ք͞Ս։

Պատասխանի ետ մի ոմն 'ի ժողովրդենէն՝ և ասէ. վարդապետ՝ ածի՛ զորդի իմ առ քեզ, զոր ունի այս համր. և ուր հասանէ՝ զարկուցանէ զնա, և փրփրէ՛, և կրճտէ զատամունս իւր՝ և ցամաքի.

և ասացի աշակերտացն քո զի հանցեն, և ոչ կարացին հանել զնա։ Պատասխանի՛ ետ նոցա և ասէ. ո՛վ ա՛զգ անհաւատ՝ մինչև յե՞րբ իցեմ ընդ ձեզ, մինչև ցե՛րբ անսայցեմ ձեզ. ածէ՛ք զնա առ իս։ Եւ ածին զնա առ նա։ Իբրև ետես զնա այսն, վաղվաղակի շարժլեա՛ց զնա, և անկեալ յերկիր թաւալէ՛ր և փրփրեայր։ Եհա՛րց ցհայր նորա և ասէ. քանի՞ ժամանակք են՝ յորմէհետէ այդ եղև դմա։ Եւ նա ասէ. ՛ի մանկուէ. բազում անգամ ՛ի հո՛ւր արկանէ և ՛ի ջուր՝ զի կորուսցէ զդա. արդ՝ եթէ կարօ՛ղ ինչ ես, օգնեա՛ մեզ տէր՝ գթացեալ ՛ի վերայ մեր։ Եւ յիսուս ասէ ցնա. ասացեր՝ եթէ կարօղ ես. ամենայն ինչ՝ հնարաւո՛ր է այնմ որ հաւատայն։ Եւ վաղվաղակի աղաղակեա՛ց հայր մանկանոյն՝ և ասէ. հաւատա՛մ, օգնեա՛ անհաւատութեա՛ս իմում։ Իբրև ետես յիսուս՝ եթէ կուտի՛ ժողովուրդն ՛ի վերայ, սաստեա՛ց այսո՛յն պղծոյ՝ և ասէ. հա՛մրդ՝ և խո՛ւլ այս՝ ես տամ քեզ հրաման, ե՛լ ՛ի դմանէ, և այլ և՛ս՝ մի՛ մտանիցես ՛ի դա։ Եւ աղաղակեաց՝ և յո՛յժ լլկեաց

զնա՝ և ել․ և եղև պատանեակն իբրև զմեռեալ, մինչև բազմաց իսկ ասել՝ թէ մեռաւ։ Եւ Յս կալեալ զձեռանէ նր յարոյց զնա, և կանգնեցաւ։ Եւ իբրև եմուտ նա ՚ի տուն, աշակերտքն առանձինն հարցին ցնա․ մեք ընդէ՞ր ոչ կարացաք հանել զնա։ Եւ ասէ ցնս․ այդ ազգ՝ ոչ իւիք ելանէ, եթէ ոչ պահօք և աղօթիւք։

Եւ դնէ զաւետարանն ՚ի վերայ գլխոյ այսահարին, և ասէ․

Սաստեսցէ քեզ Տր մեր Յս Քս պիղծ ոգի, որ եկն յաշխարհ և շրջեցաւ և ընդ մարդկան, զի զքոյդ խափանեսցէ զբռնութիւն և զմարդիկ ազատեսցէ։ Որ ՚ի վր փայտին զընդդիմակաց զօրութիւն խորտակեաց՝ արեգականն խաւարելով, երկիր շարժելով, գերեզմանացն բանալով, մարմինք սրբոց յառնելով։ Որ եղծ մահուամբ զմահ, և խափանեաց որ զօրութիւն մահուն ունէր, այսինքն է՝ զքեզ սատանայ։ Երդմնեցուցանեմ զքեզ յԱծ կենդանի՝ որ եցոյց զփայտն կենաց, և կարգեաց զքերովբէսն և բոց-

սերովբէսն բոցեղէն սրով շուրջանակի
պահել զնա · պապանձեա՛ց ե՛լ և գնա՛
'ի սմանէ։ Երդմնեցուցանեմ զքեզ 'ի
տր̃ մեր յս̃ քս̃ որ գնայր ոտ̃ք ընդ ցա-
մաք 'ի վր̃ ծովուն, և սաստէր պտուտից
հողմոյն · որոյ հայեցուածն ցամաքեցու-
ցանէ զանդունդս, և սպառնալիք նր̃
մաշեն զլերինս։ Նոյն ինքն և այժմ
հրամայէ քեզ 'ի ձեռն մեր, երկի՛ր ե՛լ
և գնա՛ 'ի ստեղծուածոյս այսմիկ · և մի՛
դառնայցես և մի՛ թաքիցես 'ի սմա · և
մի՛ ևս պատահեսցես ումեք 'ի սոցանէ ·
կամ ազդիցես, կամ զարկցես, մի՛ 'ի գի-
շերի, մի՛ յաւուր, մի՛ 'ի ժամու կամ 'ի
տարաժամու · այլ երթիջի՛ր 'ի քոյին խոր
խաւարն մինչև 'ի պատրաստել տանջան-
սըն քեզ մեծի աւուրն դատաստանին։
Երկի՛ր յայ̃ որ նստի յաթոռ քերովբէից
և հայի յանդունդս · յորմէ դողան հրեշ
տակք, հրեշտակապետք, աթոռք, տէրու-
թիւնք, իշխանութիւնք, պետութիւնք, բազմաչեայ
քերովբէքն · յորմէ դողան երկինք և
երկիր, ծով և ամ̃ որ 'ի նոսա · ե՛լ և
գնա՛ 'ի ծառայէս քի̃ այ̃։ Երդմնեցու-

ցանեմ զքեզ յա՜ծ կենդանին՝ որ գնայ
'ի վ՜ր թեւոց հողմոց. ո՛ արար զհրեշտակս
իւր յոգիս, և զպաշտօնեայս իւր 'ի բոց
հրոյ. ե՛լ և գնա՛ 'ի ստեղծուածոյս ա՜յ
յայսմանէ ա՜մ հրեշտակօք քո. Օ՛ է
օրհնեալ և փառաւորեալ է անուն ա-
մենասուրբ երրորդութե՜ հօր և որդւոյ և
ս՜բ հոգւոյն, այժմ և.

Ա՜ծ որ մեծ է և ահաւոր՝ և փառա-
ւորեալ յա՜մի գործովք և զօրութե՜, ան
հասանելի և անքննելի գոլով. որ յառաջ
պատրաստեաց քեզ ս՜նյ՝ զյաւիտենա
կան տանջանացն զդատաստան. այժմ
'ի ձեռն մեր անպիտան ծառայից իւրոց
հրամայեաց քեզ և ա՜մ գործակցաց քոյ՝
ա՜մ զօրութե՜ քով 'ի բաց կալ 'ի ծառայ
